ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) **Թիվ-6** (1676) Հունիս 2023

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Լինելիության փորձությունը (էջ 1-3)

2- Թարգմանություն
Այնուր Կուրմանով
Փաշինյանը հանձնում է Ղարաբաղը և իրականացնում Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու Վաշինգտոնի հրահանգը (էջ 4-5)

3- Քաղաքական
Վարդան Հակոբյան
Գլոբալիզմի գաղափարաբանությունը և նեոլիբերալների հեղափոխականությունը (էջ 6-8)
Լուսինե Մխիթարյան
Հայոց ցեղասպանության ճանաչումը ներկայի և ապագայի խնդիր է (էջ 9-11)

4- Հասարակություն
Անահիտ Դանիելյան
Բարոյական մայրամուտը շարունակվում է (էջ 12)

5- Պատմաքաղաքական
Անի Մելքոնյան
Հայաստանի հազարամյակների «կադաստրի վկայականները» (էջ 13-15)

6- Տարածաշրջանային
Արմեն Պետրոսյան
Ադրբեջան-Իսրայել «սիրախաղը» առավել անկաշկանդ և հրապարակային է դառնում (էջ 16-19)

7- Աշխարհաքաղաքական
Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
ԱՄՆ արձագանքը Թուրքիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններին (էջ 20-22)

8- Իրավաքաղաքական
Արփի Աբրահամյան
Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգը (էջ 23-28)

9- Դեմքեր և դեպքեր
Վանիկ Վիրաբյան
Ալ. Շնեուրը Սարդարապատյան հերոսամարտի և հայկական հետախուզական ծառայության ակունքներում (1918-1920 թթ.) (էջ 29-37)

10- Ընթերցումներ
Մարգարիտա Խաչատրյան
Վերընթերցենք Համաստեղին (էջ 38-42)

11- Ընկերական զրույցներ
Վրէժ-Արմէն
Ազգութեան բաղադրիչները (էջ 43-44)

Լինելիության փորձությունը

Այն թվականի հունիսի 13-ին հայկական լրատվամիջոցներով տարածվեց ԵՄ դիվանագիտության ղեկավար Ժոզեպ Բորելի հայտարարությունը, որը նա արել էր Եվրոպական խորհրդարանում «Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունները և Լեռնային Ղարաբաղում ու Լաչինի միջանցքում տիրող իրավիճակը» թեմայով քննարկման ժամանակ: Ժոզեպ Բորելը մասնավորապես ասել է.

«Նիկոլ Փաշինյանը Հայաստանի առաջին ղեկավարն է, որն ընդունել է Արցախը որպես Ադրբեջանի բաղկացուցիչ մաս»: Այնուհետև եվրոպական գլխավոր քաղաքական կառույցի ղեկավարը ավելացնում է. «Հույս ունենք, որ հայկական կողմի մեսիջը կխթանի դրական հուն մղելու բանակցային գործընթացը»: Վերջին միտքը, ըստ էության, նշանակում է, որ որևէ խոչընդոտ չկա երեք ու կես տասնամյակ ձգձգված հակամարտության հանգուցալուծումը Ադրբեջանի օգտին պաշտոնապես ամրագրելու համար: Ոչ պաշտոնական շփումների ժամանակ, երբ Արցախյան հակամարտության որևէ միջնորդի ասվում է, թե տասնամյակների բանակցությունների ընթացքում ըմբռնում էր ձևավորվել Արցախի ինքնորոշման խնդրի շուրջ, ինչո՞ւ է այժմ արցախահայության այդ իրավունքը մերժվում, խոսակիցները պատասխանում են, որ իրենք ընդամենը միջնորդներ են և ոչինչ չեն կարող անել, եթե Հայաստանն է պաշտոնական մակարդակով հրաժարվել այդ պահանջից: Ի դեպ, նույն ոչ պաշտոնական խոսակցությունների ժամանակ միջնորդ դիվանագետներն ու քաղաքական գործիչները ավելացնում են, որ իրենց զարմացնում է, թե հայկական կողմը որքան հեշտությամբ է զիջումներ անում Ադրբեջանի աճող պահանջներին:

Իհարկե, այսօր արդեն Հայաստանի իշխանությունները հրապարակայնորեն են հայտարարում, որ Արցախը ճանաչում են Ադրբեջանի կազմում՝ առանց որևէ կարգավիճակի հավակնության, սակայն անկախ Արցախը հանձնողն այդ անսերելի հանցանքի բեռից ձերբազատվելու համար շարունակում է ճգնել ապացուցելու, որ իրենից առաջ Արցախն արդեն թղթի վրա հանձնված էր: Այդպիսի մի փորձ էլ Հայաստանի վարչապետն արեց հունիսի 20-ին՝ Ազգային ժողովի «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով քննիչ հանձնաժողովի» առջև 3 ժամից ավելի ընթերցելով հանգամանորեն պատրաստված մի գրություն Արցախի հարցով տեղի ունեցած բանակցությունների ողջ գործընթացի վերաբերյալ: Տվյալ հանձնաժողովի իրավասություններ հետ կապ չունեցող հիշյալ ելույթը միտված էր ապացուցելու, որ Արցախը հանձնել են իրենից առաջ՝ հարցի վերաբերյալ կայացված բանաձևերով ու հայտարարություններով: Չարժի, իհարկե, անդրադառնալ մի տեքստի, որը լի է հակասություններով, կամայական մեկնաբանություններով ու եզրակացություններով: Միայն Փաշինյանի պես անպատասխանատու խոսքի ձեռնածուն կարող է, օրինակ, երկրի նախկին առաջին դեմքի մասին ասել, թե նա սպանել տվեց ԱԺ նախագահին և վարչապետին, որովհետև նրանք դեմ էին Արցախն ու Լաչինը Մեղրիի հետ փոխանակելուն, բայց դրանից հետո այդ ծրագիրը մի կողմ դրվեց և ասպարեզ բերվեց Մեղրիի վրայով արտատարածքային ճանապարհ ստեղծելու առաջարկը և այլն: Շատերը ճիշտ եզրակացության հանգեցին այս ելույթից՝ այն գնահատելով որպես Փաշինյանի արդարացման, Արցախը Ադրբեջանին հանձնելու հանցանքը ուրիշների ուսերին բարդելու հերթական փորձ: Փաշինյանը հասկանում է, որ նման հանցանքները երբեք չեն ներվում և չեն մոռացվում, հետևաբար ժամանակ առ ժամանակ «նոր փաստարկներով» փորձում է հիմնավորել իր անմեղությունն ու այլոց մեղավորությունը: Եթե ճիգ գործադրենք հավատալու Փաշինյանին, ապա մնում է կասկածել՝ 2020 թվականին պատերազմ եղե՞լ է, թե՞ ոչ: Եթե արդեն ամեն ինչ կանխավ հանձնված էր, ինչի՞ համար էր պատերազմը: Երբ պատերազմի առաջին օրերից ակնառու էր հայկական կողմի բարդ կացությունը, ինչո՞ւ էր Նիկոլն իր ձեռքում կենտրոնացրել ողջ տեղեկատվությունը և իր խամաճիկի միջոցով մինչև վերջին օրը խաբում ժողովրդին՝ ներկայացնելով, թե հաղթելու ենք: Ինչո՞ւ ի սկզբանե ժողովրդին չէր ասվում ճշմարտությունը, ինչո՞ւ զորահավաքը կասեցվեց: Ինչո՞ւ երկրի համար ճակատագրական ժամին պատերազմի փորձառություն ունեցող զինվորական ու քաղաքական գործիչների ուժերը չմեկտեղվեցին՝ պաշտանություն կազմակերպելու: Երկրի կարող ուժերից ռազմաքաղաքական մարմին ձևավորելու առաջարկները ոչ միայն անտեսվեցին, այլև ամեն ինչ արվեց, որ նրանք բոլորը հեռու լինեն որոշումների կայացումից: Ինչո՞ւ էին մերժվում արտաքին օժանդակությունները և ինչո՞ւ պատերազմական

այդ պահի համար կենսական կարևորության հակաօդային պաշտպանության համակարգեր և այլ զինատեսակներ ձեռք բերելու փոխարեն իշխանությունը լափեց Սփյուռքի հավաքած 170 միլիոն դոլար գումարը: Կարելի է հարցնել նաև, թե ինչո՞ւ է իշխանության հասնելու պահից Նիկոլ Փաշինյանը հալածանքներ սկսել և շինծու մեղադրանքներով մեկուսացնում է վաստակի ու փորձառության տեր բարձրաստիճան զինվորականներին:

«Ինչուների» այս շարքը կարող է շատ ընդարձակվել՝ նույն համեմատությամբ ընդգծելով նախապես Արցախը փաստաթղթերով հանձնած լինելու անհեթեթության չափը:

Ճիշտ է նաև այն տեսակետը, որ Փաշինյանի այս վերջին խոսքային ձեռնածության ետևում նպատակ կա հող նախապատրաստելու արդեն Հայաստանի Հանրապետությունից անկլավներ, միջանցք և այլ տարածքներ հանձնելու վերաբերյալ: Նշված ելույթից «պարզվում է», որ դրանց վերաբերյալ նույնպես նախկինները զիջումների էին համաձայնվել՝ ըստ փաստաթղթերի: Հետևելով Փաշինյանի գործունեությանը՝ չպետք է զարմանալ, որ գրպանում կարող է ունենալ նաև Երևանը հանձնելու մասին նախկինների ստորագրած պայմանագիր:

Փաշինյանի ներկայիս վարքը շատ կապված է, եթե չասենք, պայմանավորված է տարածաշրջանային և նույնիսկ աշխարհաքաղաքական գործընթացների հետ: Կարելի է արձանագրել, որ Փաշինյանն արդեն կատարել է Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից իր առջև դրված նախնական պայմանները և, տեսնելով, որ իրենց ձեռքում է հայտնվել նմանը չունեցող մեկը, թշնամի պետությունները Հայաստանի կապիտուլյանտ ղեկավարին առաջադրում են նորանոր զիջումների պահանջներ: Ադրբեջանը ամեն օր անդրկուլիսային բանակցություններում կամ մշտապես թեժացվող սահմանագծում «սեղմում» է Նիկոլին՝ պահանջելով օր առաջ լուծել և՛ անկլավների, և՛ Ադրբեջանը Նախիջևանին կապող միջանցքի հարցը: Փաշինյանը գերակատարելով Թուրքիայի ցանկությունները՝ արդեն իսկ ոչ միայն հրաժարվում է ցեղասպանության օրակարգից, այլև այդ տերմինը փոխարինել է եղեռն բառով, նա քննարկում է Արարատի խորհրդանիշից հրաժարվելու, փոխարենը Արագածը երկրպագելու, Հայաստանի պատմական էությունը խորհրդանշող զինանշանը փոխելու հարցերը, գտնում է, որ օրհներգից պետք է դուրս բերել վերջին քառատողը, որտեղ փառաբանվում է իր ազգի ազատության համար նահատակվողը: Նիկոլի մանկլավիկները խեղաթյուրում են Կոմիտասի արժեքը, այնպիսի չափորոշիչներ են սահմանել հայագիտական դասընթացների համար, որոնց հաստատման դեպքում պատմությունն ու մշակույթը կդադարեն մնալ ազգի ինքնության գիտակցությունը և ողնաշարը: Հազարամյակների ազգը կվերածվի զանգվածի, որից գլոբալիզմի ճիրաններում կարելի է «թխել» հոգեպես այլասերված, անհայրենիք

ու առանց ինքնության, զոմբիացած և հնազանդ զանգված:

Կարելի՞ էր պատկերացնել, որ Թուրքիան երբևիցե, Հայաստանի իշխանությունների վրա մատ թափ տալով, կպահանջի քանդել հայ հերոսների հուշարձանը: Չկասկածեք, որ ապագայում մոտ ապագայում հերթը հասնելու է Ծիծեռնակաբերդին, Սարդարապատի հուշահամալիրին, մշակութային արժեքներին, իսկ հետո էլ պահանջ է դրվելու ձերբակալելու և Ադրբեջանին հանձնելու Արցախի համար պայքարած հերոսներին:

Աշխարհաքաղաքական մրցակցության հորձանուտում, քանի դեռ ռուսները խրված են Ուկրաինայի դեմ պատերազմում, թուրք - ադրբեջանական տանդեմի, ինչպես և Արևմուտքի կողմից խստացվում է պահանջը՝ վերջնականորեն փակելու Արցախի հաշիվները, ռուսական ռազմուժին դուրս մղելու Անդրկովկասից: Ռուսաստանը փորձում է գործնական ու կոշտ քայլերի չդիմելով՝ ակամայից չնպաստել Անդրկովկասում գործընթացների արագացմանը՝ որոշակիորեն ինքնավստահ լինելով՝ պայմանավորված Հայաստանի նկատմամբ քաղաքական, ռազմական, տնտեսական և բազմաթիվ այլ լծակներ ունենալու հանգամանքով: Զգտելով ձերբազատվել ռուսական գոնե ռազմաքաղաքական կախումից՝ Հայաստանի իշխանությունը տրամաբանորեն դառնում է թուրք-ադրբեջանցիների դաշնակիցը՝ Արցախի ու Հայաստանի շահերի դեմ: Չի բացառվում, որ որոշ հարցերում նրանք նաև համադրում են իրենց գործողությունները: Օրինակ՝ հստակորեն ճանաչելով 86,6 հազար քառակուսի կիլոմետրի վրա Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ Նիկոլը հնարավորություն ստեղծեց ամբողջովին շրջափակելու Արցախը, այն տրամաբանությամբ, որ եթե Արցախն Ադրբեջանի տարածքն է, ապա չկա Հայաստանի հետ կապի հարց, հետևաբար Ադրբեջանն իրավունք ունի փակելու իր սահմանը: Այնպես որ, Արցախը ցեղասպանական աքցանի մեջ առնելու համար Ալիևի չափ մեղավոր է նաև Փաշինյանը: Եթե կարելի է հավատալ, որ ադրբեջանցիք կարող են մարդասիրական վերաբերմունք դրսևորել, թողնել, որ իր հողի վրա անվտանգ ապրի արցախցին, այդ դեպքում միայն կարելի է մտածել, որ Փաշինյանն Ալիևի հանցակիցը չէ: Այսօր հայ ժողովրդի համար ծանրագույն ժամանակ է, որովհետև ժամանակը ծանրագույն է Արցախի համար: Արցախի փրկությունը անհրաժեշտ է մեզ նաև նրա համար, որպեսզի հնարավորություն ստեղծվի Հայաստանի ճանապարհը փակելու և մեր տարածքից դուրս մղելու ադրբեջանցիներին: Հայ ժողովուրդը գտնվում է ոտքի կանգնելու հրամայականի առջև: Անհրաժեշտ է սկսել քաղաքական նոր պայքար, ինչը

կիիմնավորվի ազգային փրկության գաղափարախոսությամբ: Գործող իշխանությունները, մերժված լինելով հայ ժողովրդի բոլոր խավերի կողմից և արագորեն կորցնելով սոցիալական հենարան ծառայած խավերի վերջին հատվածներին, փորձում են իրենց լեգիտիմության պատրանքը ստեղծել՝ անընդհատ մանր ու մեծ հարցադրումներ նետելով հրապարակ և փորձելով դրանց շուրջ բանավեճի մթնոլորտ ստեղծել: Այսօր նրանք երկրի կենտրոնական և տեղական ողջ իշխանությունը կուսակցականացրել են, որպեսզի գալիք հաջորդական ընտրություններում ապահովեն իրենց վերարտադրությունը, իսկ ներքաղաքական իրավիճակը բռունցքի մեջ պահելու հարցում հովանավորություն կգտնեն արտաքին ուժերի կողմից:

Այս իշխանությանը պետք է դիտել որպես արտաքին ազդեցությունների խամաճիկի, իսկ Հայաստան-Արցախի փրկությունը տեսնել ինքնիշխանության վերականգնման մեջ: Պայքարը այլընտրանք չունի, այո,՛ դեռևս կարելի է փրկել Արցախը ու նրա հետ Հայաստանի ինքնիշխանությունը: Յուրաքանչյուր նոր օրը մեզ կարող է մոտեցնել կամ հեռացնել մեր լինելիության հեռանկարից: Համազգային միասնականության կայացմանը խոչընդոտող էժան հավակնությունները, նեղ հաշիվներն ու հաշվարկները դրանց կրողներին ակամայից կանգնեցնում են հայրենիքը կործանողների և նրանց կույր հետևորդների կողքին: ■

Փաշինյանը հանձնում է Ղարաբաղը և իրականացնում Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու Վաշինգտոնի հրահանգը

Այնուր Կուրմանով
Ռուսաստանցի քաղաքագետ

Հրապարակում ենք https://www.politnavigator.net/ ռուսական էլեկտրոնային լրատվամիջոցի վերլուծությունը՝ այն համարելով ուշագրավ մեր ընթերցողի համար: Ներկայացնելով ՀՀ իշխանությունների ծրագրված քաղաքականության հետևանքով Հայաստանի ու Արցախի շուրջ ստեղծված իրավիճակի ախտորոշումները և գնահատականները՝ «Դրոշակը» անպայմանորեն չի կիսում ստեղծված իրավիճակից փրկության մասին հեղինակի տեսակետները: Մեկ բան անհերքելի է՝ միայն հայ ժողովրդի համազգային ըմբռնացումը կարող է փրկել Արցախ-Հայաստանը անխուսափելի աղետից:

Խմբագրություն

Ահա և ավարտվեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Ղարաբաղը հանձնելու քաղաքական էպոպեան, ինչի մասին մենք անընդհատ խոսում և զգուշացնում էինք մեր հրապարակումներում:

Հայաստանի վարչապետն Արցախը ճանաչել է որպես Ադրբեջանի բաղկացուցիչ մաս: Նա հաստատել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Արցախի հետ՝ ասելով հետևյալը.«86,600 քառակուսի կիլոմետրը ներառում է նաև Լեռնային Ղարաբաղը: Մենք պետք է արձանագրենք, սակայն, որ Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների և անվտանգության հարցը պետք է քննարկվի Ստեփանակերտ-Բաքու երկխոսությամբ»:

Սա նշանակում է, որ Երևանը չի խառնվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և էթնիկ հայ բնակչության խնդիրներին՝ տեղի բնակիչների ապագային առնչվող բանակցությունները հանձնելով Ստեփանակերտին ու Բաքվին, որոնք անհավասար սուբյեկտներ են, և որոնց միջև երկխոսության անհնարինությունը քննարկման հարց չէ: Բնականաբար Ալիևի վարչակազմն ու նրա կառավարությունը ոչինչ չեն քննարկի ղարաբաղյան իշխանությունների հետ՝ զինաթափման և գերի հանձնվելու տեխնիկական հարցերից բացի: Փաստորեն սրանով ղարաբաղցիները հանձնվում են հաղթողի ողորմածությանը:

Ասվածի ազդեցությունը մեղմելու համար Փաշինյանը խոսեց արցախահայության ինչ-որ «միջազգային երաշխիքների» մասին՝ նկատի ունենալով «խաղաղապահներին»՝ ի դեմս ԵՄ-ի և ԱՄՆ-ի, որոնք, իբրև թե, պետք է հանդես գան Բաքվին ուղղված ինչ-որ հայտարարություններով և խնդրանքներով՝ ներելու բնակչությանը: Հասկանալի է, որ ադրբեջանական իշխող վերնախավը «թքել է» նման «երաշխիքների» վրա, որոնք սոսկ երեսպաշտ ձևականություն են:

Այս քայլի մեջ ոչ մի նոր կամ անսպասելի բան չկա, քանի որ դեռևս 2018-ի «թավշյա հեղափոխությունից» առաջ Նիկոլ Փաշինյանի գլխավորած աջակողմյան լիբերալ ընդդիմության ծրագրային պահանջներից մեկը Արցախից հրաժարումն էր: Արցախն իբրև թե կապում էր Հայաստանի ձեռքերն ու ոտքերը և թույլ չէր տալիս ՀՀ-ին գնալ ժողովրդավարության և «եվրոպական զարգացման ուղիով»:

Դա հաստատում է նաև Պետդումայի ԱՊՀ հարցերով եվրասիական ինտեգրման և հայրենակիցների հետ կապերի հանձնաժողովի փոխնախագահ Կոնստանդին Զատուլինը. «Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ինչպես մեզ մոտ են ասում, կտրված գլխի մազերի համար լաց չեն լինում: Տվյալ դեպքում անցած տարվա կեսից դեպի Արևմուտք շրջադարձի հետ միաժամանակ Փաշինյանն ու իր թիմը վեկտորը փոխելու համար ճանաչեցին 90-ականների Ալմա-Աթայի հռչակագրի գերակայությունը, համաձայն որի՝ միութենական հանրապետությունները ճանաչվում են իրենց սահմաններում, ընդ որում՝ որևէ վերապահում չանելով Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ»:

Դրա համար էլ ներկայիս իշխող ամերիկամետ լիբերալ վերնախավը Երևանում նախ՝ նպաստեց, իսկ հետո՝ օգտվեց 2020-ի պատերազմում կրած պարտության հետևանքներից, որպեսզի իրականացնի վաղուց մտածված կապիտուլյացիան՝ Ղարաբաղի վերացմամբ Ադրբեջանի հետ հաշտվելու, Թուրքիայի հետ ինտեգրվելու և դեպի Արևմուտք աշխարհաքաղաքական շրջադարձ կատարելու նպատակով:

Այնպես որ, սա նույնիսկ դավաճանություն չէ, քանզի դավաճանել կարող են միայն մտերիմները, համախոհները և գործընկերները, այլ իշխանության եկած ուժերի նպատակաուղղված քաղաքականության հետևանք է: Նրանք ձգտում են Հայաստանի մնացորդները հանձնել ԵՄ-ին, ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին:

Իսկ Արցախը ճանապարհին ընկած քարի պես խոչընդոտում էր այդ տեղաշարժին, ու այժմ այն հե-

ռացնում են, որպեսզի դրա հետ մեկտեղ նաև վերացնեն Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունը հանրապետությունում և ընդհանրապես Հարավային Կովկասում:

Առհասարակ խոսք չկա Արցախի բնակիչների մշակութային ու ինքնավար իրավունքների մասին, քանի որ դրանք նախատեսված չէին նաև անցյալ տարվա հոկտեմբերին Պրահայում տեղի ունեցած հակառուսական խառնաժողովի ժամանակ, երբ Նիկոլն առանց որևէ պայմանի համաձայնեց Ալիևի բոլոր պահանջների հետ՝ Էմանուել Մակրոնի, Շառլ Միշելի և Էրդողանի մասնակցությամբ:

Բոլոր դարաբաղցիներն, ի վերջո, զոհաբերվում են եվրաինտեգրման հայեցակարգին:

Սա ակնհայտ նահանջ է նույնիսկ խորհրդային ժամանակաշրջանից, երբ Լեռնային Ղարաբաղի հայերն ունեին իրենց ինքնավար հանրապետությունը, թեկուզև Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Հիմա դա չի լինի, ավելին՝ հետագայում խոսք կլինի մնացած հայերի արտաքսման մասին, որոնք չեն ցանկացել ձուլվել և թուրք դառնալ: Եվ «խաղաղության համաձայնագրի» նման տարբերակն ակնհայտորեն հակասում է ռուսական տարբերակին, որում առաջարկվում էր ապագա սերունդներին քննարկել Արցախի կարգավիճակը վերջնական խաղաղ կարգավորումից հետո:

Հակադրվելով Մոսկվայի առաջարկներին՝ Երևանն այժմ սպասում է Բաքվի պատասխան առաջարկներին, որն, ըստ Փաշինյանի, պետք է ուղարկի իր առաջարկները և վերադարձնի Հայաստանի հարավային շրջաններում ադրբեջանական բանակի կողմից գրավված մի շարք գյուղեր: Նման կերպ իշխող վերնախավը ցանկանում է երկրի ներսում հասարակական կարծիքի համար մեղմացնել Ղարաբաղի կորուստը:

Ըստ ամենայնի՝ Արցախից հետո խոսվելու է Սյունիքի շրջանի հողերի մի մասը տրանսպորտային հանգույցների և ենթակառույցների ծրագրերին հանձնելու մասին. այդ տարածքները Բաքվում արդեն անվանում են «Արևմտյան Ադրբեջան»: Ավելին, իրադարձությունների զարգացման նման տարբերակն, անպայման, կհանգեցնի ոչ միայն Իրանի տրանսպորտային ուղիների փակմանը, այլև նրա համար հյուսիսում նոր հենակետ կստեղծվի ՆԱՏՕ-ի ուժերի համար, որոնք, անշուշտ, կօգտվեն դրանից՝ որպես ցատկահարթակ ագրեսիայի համար:

Արցախի լիկվիդացմամբ Նիկոլ Փաշինյանն իր համար նախապատվություններ և հավանություն է «սակարկում» հավաքական Արևմուտքի և Անկարայի հետ՝ երկրի տարածքում ստեղծելով Կենտրոնական Ասիայի հանրապետությունների նավթի, գազի և օգտակար հանածոների պոմպային հանգույց, որն այդուհետ կհոսի Թուրքիա, այնուհետև՝ ԵՄ, այսպես կոչված, Զանգեզուրի միջանցքով:

Չէ՞ որ խողովակաշարերին և լոգիստիկ երթուղիներին անխուսափելիորեն կհետևեն նաև Հյուսիսատլանտյան դաշինքի բազաները: Չէ՞ որ Արցախի հայկականությունից հրաժարվելու հետ մեկտեղ հայկական կողմը հայտարարում է նաև ՀԱՊԿ-ից Հայաստանի Հանրապետության դուրս գալու մասին, ինչը Նիկոլ Փաշինյանը հաստատեց նաև մամուլի ասուլիսի ժամանակ, ասելով, որ Երևանը պատրաստ է դադարեցնել մասնակցությունը պաշտպանական համաձայնագրին. «Դա հնարավոր է, եթե Հայաստանն արձանագրի, որ ՀԱՊԿ-ը դուրս է եկել Հայաստանից»: «Այդ դեպքում ՀՀ-ի՝ ՀԱՊԿ-ի անդամ լինելու ոչինչ չտվող կարգավիճակը միայն կխանգարի մեզ անվտանգության օրակարգ քննարկելու այլ երկրների հետ: Դուք կարծում եք՝ Հայաստանը այլ առաջարկներ չի՞ ստացել ուրիշ երկրներից ռազմամթերք ձեռք բերելու վերաբերյալ: Իհարկե, ստացել է, և այդ հնարավորությունները չեն իրացվել հիմնականում ՀԱՊԿ-ին անդամակցելու պատճառով»,- բարձրաձայն շեփորահարեց Փաշինյանը:

Քանի որ Թուրքիայի հետ սահմանը բացվում է, Արցախն էլ լուծարվում է, ուստի մոտ ժամանակներս Երևանը կառաջադրի Գյումրիում ռուսական ռազմակայանի փակման և Ղարաբաղում ՌԴ ՊՆ խաղաղապահ զորակազմի, որն այժմ տեղի բնակիչների անվտանգության միանձնյա ապահովողն է, գործունեության դադարեցման հարցը: Իսկ նրանց փոխարեն տարածաշրջան կժամանեն ամերիկյան և եվրոպական խաղաղապահները, ինչն անխուսափելիորեն նոր զինված հակամարտություններ կսադրի Իրանի հետ:

Այսպիսով՝ խաղաղ կարգավորման փոխարեն հրաժարվելով ռուսական պլանից՝ տարածաշրջանում պետք է սպասել նոր պատերազմի՝ նկատի ունենալով, որ իրադարձությունների նման դասավորությանը կտրականապես չի համաձայնի Թեհրանը, իսկ Բաքուն կանգ չի առնի սոսկ Ղարաբաղի վրա՝ ողջ Հարավային Հայաստանը համարելով իրենը:

Այս իրավիճակում Արցախի բնաջնջման հանձնված բնակիչները պետք է իրենց ճակատագիրն իրենք տնօրինեն և հետևեն Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ժողովուրդների օրինակին՝ մինչև վերջ իրենց կյանքն ու ապագան կապելով Ռուսաստանի հետ: Միայն այս կերպ նրանք կարող են խուսափել ցեղասպանությունից և անհետացումից: Մասնավորապես այս մասին իր տելեգրամյան ալիքում գրել է ռազմական փորձագետ Ալեքսեյ Լեոնկովը. «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) բնակիչների ճակատագիրն այլևս չի հետաքրքրում Փաշինյանին: Նրանց ցեղասպանությունից պաշտպանելու միակ երաշխավորը մնացել է միայն Ռուսաստանը: Ուստի արցախցիների համար ամենաճիշտ ելքը կարող է լինել Ռուսաստանի քաղաքացիություն ստանալը: Իսկ Ռուսաստանը, որպես ԽՍՀՄ իրավաժառանգորդ, պետք է հաստատի ԼՂԻՄ-ի (Արցախի) ինքնավար կարգավիճակը. նա դրա իրավունքն ունի»:

Եվ սա այժմ գուցե միակ ելքն է, եթե իհարկե, հայ ժողովուրդն Երևանում կտրուկ չդիմադրի իշխող վերնախավի ազգային դավաճանությանը, որը երկիրը տանում է դեպի կատաստրոֆա և արևմտյան պրոտեկտորատի կարգավիճակի: ■

https://www.politnavigator.net/pashinyan-sdaet-karabakh-i-osushhestvlyaet-ukazanie-vashingtona-po-vydavlivaniyu-rossii-iz-zakavkazya.html

Թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

Գլոբալիզմի գաղափարաբանությունը և նեոլիբերալների հեղափոխականությունը

Վարդան Հակոբյան
Դիվանագետ, վերլուծաբան

Թերևս ոչ մի քաղաքական գործիչ, խոսքն, իհարկե, վերաբերում է խոշոր և տարածաշրջանային տերությունների ղեկավարներին, ամփոփելով 2022 թվականը, չփորձեց հիմնավորված և հստակ կանխատեսումներ անել գալիք 2023 թվականի վերաբերյալ: Տասնամյակի կտրվածքով կանխատեսումներ կան, սակայն դրանք ավելի շատ արտահայտում են կանխատեսողներից յուրաքանչյուրի ցանկությունը՝ տեսնել իրականացած իրենց նպատակներն ու քաղաքական ծրագրերը: Ինչ վերաբերում է քաղաքագետների ստվար բանակին, ապա նրանց մեծ մասն ավելի շատ զբաղված է գուշակություններով, քան թե իրադրության վերլուծությունից բխող կանխատեսումներով: Ըստ նրանց՝ միջազգային հարաբերություններում տիրող խառնաշփոթը, պետությունների ղեկավարների հաճախ անտրամաբանական վարքագիծը հնարավորություն չեն տալիս կանխատեսել զարգացումների ընթացքը:

Արևմտյան քաղաքական միջավայրում վերջին տասնամյակում գերակշռում են գործիչներ, որոնց վարած քաղաքականության մեջ և հայտարարություններում դժվար է գտնել տրամաբանություն: Հաճախ նրանց խոսքն այնքան հակասական է ու ցնորամիտ, որ ենթակա չէ ընկալման և իմաստավորման, իսկ վարկը նմանվում է կլոունադայի: Դա ամբոխին դուր է գալիս, այնպես է զվարճացնում, որ ինքն էլ դառնում է կլոունադայի մասնակից: Է՛, նպատակն էլ դա է: Հաց և կրկես:

Բարձր պաշտոններում «տեղադրված» այս թիմը, սակայն, կոչված է լուծելու հեղափոխական խնդիրներ և ձևակերպելու նոր գաղափարախոսություն: Նրանց հիմնական նպատակը կարելի է արտահայտել կոմունիստական հիմնի՝ «Ինտերնացիոնալի» հետևյալ տողերով.

Այս հին աշխարհը կփորենք մենք,
Մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք...

Իհարկե, այս դեպքում «մենք» դերանվան ներքո հանդես է գալիս ոչ թե համաշխարհային պրոլետարիատը, այլ արմատական լիբերալները, որոնց «Ինտերնացիոնալ»-ը կոչվում է «գլոբալիզմ»: Սրանց նպատակներն ու խնդիրները գրեթե նույնն են. խարխլել ու քանդել պետության, եկեղեցու, ընտանիքի հիմքերը, մարդու գիտակցությունից ու հոգեբանությունից հանել ազգային արժեքներն ու ավանդույթները, ձևավորել կրոնական, բարոյական,

սեռական որոշիչներից զերծ նոր տիպի մարդու: Միևնույն ժամանակ լիբերալ գլոբալիստները հասարակություններն ու ժողովուրդներին բաժանում են սևերի և սպիտակների, հների և նորերի, դրախտաբնակների և ջունգլիաբնակների: Իրականում նրանք գործի և խոսքի անհամապատասխանությամբ երկատում են մարդկանց գիտակցությունը, խռովում նրանց հոգեվիճակը: Գլոբալ լիբերալիզմը ձեռնարկել է նոր սոցիալական փորձարարություն, ինչը, սակայն, ի տարբերություն մարքսիստական-տրոցկիստականի, դեռ հստակեցված ու համակարգված չէ և ավելի նման է սոցիալ-կենսաբանական փորձարարության: Սրանք մարդուն առավելապես դիտարկում են որպես կենսաբանական էակ՝ ավելի կարևորելով վերջինիս ֆիզիոլոգիական հատկությունները, բնազդները, որոնք հեշտությամբ են ենթարկվում կառավարման, և որոնց կարիքներն, ի տարբերություն հոգևոր և բարոյական պահանջների, ավելի հեշտ է բավարարել: Որպես փորձարարության օբյեկտ նրանք դիտարկում են մարդկային 8 միլիարդանոց զանգվածից մոտ 7 միլիարդին: Մնացած մեկ միլիարդը առանձնացվում է որպես առաջադեմ, քաղաքակիրթ մարդկություն, որպես «ոսկե էտալոն»: Բնականաբար, վերջիններիս առաջնորդներին անհանգստացնող ամենակարևոր հարցերից մեկը երկրագնդի գերբնակեցումն է, ինչը վաղ թե ուշ հանգեցնելու է բնապահպանական աղետի, մոլորակի բնական պաշարների մսխման, մշակելի հողերի անապատացման և պարենային ռեսուրսների կրճատման, ինչն իր հերթին կբերի քաղաքակրթության փլուզման: Իհարկե, երկրագնդի

գերբնակեցվածությունը լուրջ խնդիրներ է առաջադրում մարդկությանը, սակայն կարևորը դրանք հաղթահարելու ճիշտ լուծումներ գտնելն է: Ոսկե միլիարդի առաջնորդները՝ աշխարհի ամենահայտնի հարուստ մարդիկ՝ Բիլ Գեյթսը, Ջորջ Սորոսը, Դևիդ Ռոքֆելլերը, Թեդ Թերները, գերբնակեցվածության մարտահրավերների դեմ պայքարի գաղափարներ են առաջ քաշել, որոնք կարելի է հանգեցնել, ըստ էության, մեկ գաղափարի, այն է՝ կրճատել բնակչությունը՝ հասցնելով այնպիսի թվի, որը կհամապատասխանի մոլորակի պաշարներին և կապահովի մարդկանց բարգավաճ կյանքը: Որպես դրան հասնելու հիմնական ճանապարհ առաջարկվում է ծնելիության կրճատումը՝ բոլոր հնարավոր միջոցներով: Այս գաղափարական ցուցումներին էլ հետևում է ամլության բերող բոլոր տեսակի սեռական այլասերումների խրախուսումը: Հետևելով այս ցուցումներին՝ լիբերալ քաղաքական շրջանակները քանդում են հասարակության բջիջը՝ ընտանիքը և մարդկային բնությանը հատուկ սեռական կառուցվածքը: Ի դեպ, արևմտյան քաղաքական էլիտայի զգալի մաս են կազմում միասեռականները, տրանսգենդերները, ընտանիքներից շատերը միասեռ են կամ էլ անզավակ, այսինքն՝ չվերարտադրվող են: Այս գաղափարները լայնորեն քարոզվում են, սակայն հասկանալի է, որ դրանով բնակչության էական կրճատման չես հասնի: Ուստի պետք է կիրառել վաղուց հայտնի արմատական միջոցներ, ինչպիսիք են՝ սովը, համաճարակները, տարերային աղետները, ցեղասպանությունները և պատերազմները: Լիբերալ գլոբալիստները հմտորեն քողարկում են իրենց նպատակները՝ հանդես գալով խաղաղասիրական, մարդասիրական հայտարարություններով: Դրա հետ մեկտեղ չեն վարանում շինծու մեղադրանքների հիման վրա այս կամ այն պետությանը որակել որպես չարի կենտրոն, իսկ դրա ղեկավարին՝ կոռուպցիոներ, բռնապետ և մարդասպան: Օրինակ՝ Իրաքը և Լիբիան հայտարարվեցին ահաբեկչական և բռնապետական պետություններ և հաշվի չառնելով որևէ այլ կարծիք՝ այդ պետությունները ոչնչացվեցին: Իսկ քաղաքակիրթ և առաջադեմ արևմտյան հասարակությունը բավարարությամբ հետևում էր, թե ինչպես է ամբոխը բզկտում ու սպանում Մուամար Քադաֆիին և կախաղան հանում Սադամ Հուսեյնին, քանդում և ավերում նրանց երկրները, միլիոնավոր քաղաքացիների դարձնում փախստական, սպանում հազարավոր անմեղ մարդկանց:

Այնպես որ, վերջին քսան տարիների ընթացքում արաբական, աֆրիկյան երկրներում, հիմա էլ Ուկրաինայում պատերազմներ հրահրելով, աշխարհով մեկ կենսաբանական լաբորատորիաների ցանց տեղադրելով և ամեն տեսակի վարակներ տարածելով, գունավոր հեղափոխությունների ճանապարհով պետություններ քանդելով և ժողովուրդներին սովի մատնելով՝ երկրագնդի բնապահպանական վիճակով մտահոգ լիբերալներին հաջողվեց ինչոր չափով կրճատել մոլորակի բնակչությունը: Բայց անելիքները դեռ շատ են. ջունգլիները դիմադրում են, խանգարում են «ոսկե միլիարդի» գլոբալ իշխանության կայացմանը: Գլոբալիստների այս գաղափարները, սակայն, պատասխան չեն տալիս մի քանի կարևոր հարցերի: Օրինակ՝ հստակ չի ասվում, թե ինչպիսին է լինելու մնացած 7 միլիարդի ճակատագիրը: Արդյոք նրանց կինտեգրե՞ն «առաջադեմ մարդկության» շարքերին, թե՞ վերը նշած մեթոդներով կվերացնեն: Կամ գուցե մի մասին կինտեգրեն, մյուսին կվերացնեն:

Եվ վերջապես, որոնք են դրանց մեջ ընդգրկվելու չափանիշները: Անկասկած, դրա միջուկը կազմելու են Գեյթսի, Սորոսի, Ռոքֆելլերի նմանները, լիբերալ-գլոբալիստական քաղաքական, տնտեսական էլիտան, գաղափարախոսությունը մշակող և քարոզող մտավորականությունը, որոշ մշակութային գործիչներ: Ելնելով վերջիններիս դատողություններից՝ «ոսկե միլիարդը» ձևավորվելու է բարոյական, կրոնական կապանքներից ազատ, ցանկացած գնով իրենց նպատակին հասնող և մրցակցային պայքարում թրծված մարդկանցով և դրանց սպասարկող, հասարակական կյանքի տարբեր բնագավառների աշխատավորների զանգվածից: Իմիջիայլոց, ասենք, որ ըստ վերը նշված չափանիշների՝ ԼԳԲՏ համայնքին, բնապահպանական ակտիվիստներին, ամեն տեսակ աղանդներին տեղ չի հատկացվում միլիարդանոց այդ հանրույթում: Սրանք կոչված են մոլորեցնելու և ինքնավերացման տանելու մնացած 7 միլիարդին և դրանց հետ էլ՝ վերանալու:

Ի՞նչ գնահատական կարող ենք տալ այս գաղափարներին, ինչ սահմանում:

Դրանք, դասական իմաստով, համակարգված չեն որպես գաղափարախոսություն կամ դեռ չեն ներկայացվում հանրությանը որպես այդպիսին: Գուցե սա ռասիզմի մի նոր, յուրահատուկ տեսակ է, որը սակայն մարդկանց զտում է ոչ թե մաշկի գույնով կամ էթնիկական հատկանիշներով, այլ բաժանում է արժանիների և ոչ արժանիների, կենսունակների և ոչ կենսունակների: Շատ դրույթներով սա մոտ է սոցիալ-դարվինիզմի տեսությանը, եթե հաշվի առնենք, որ «ոսկե միլիարդը» համալրվելու է անողոք մրցակցությունը հաղթահարած մարդկանցով: Բայց դա ավելի նման է սոցիալական փորձարարության, քան բնական ընտրության ճանապարհով էվոլյուցիոն զարգացման: Անշուշտ, այս գաղափարախոսությունը կարելի է բնութագրել նաև որպես ուտոպիստական, քանի որ այն անտեսում է բնության և հասարակության իրական զարգացման օրինաչափությունները, հաշվի չի նստում մարդկության պատմության, մարդու կենսաբանական և հոգևոր հատկություններով պայմանավորված ճակատագրի հետ և փոխարենը առաջարկում է արհեստական մի կառույց: Թերևս դրա հեղինակներն ու ջատագովները, հաղթահարելով դաժան մրցակցությունը ու հասնելով աներևակայելի բարձունքների, գերագնահատելով իրենց արժանիքները, որոշել են մրցակցության մեջ մտնել բնության և հասարակության օրենքների, այլ կերպ ասած՝ Աստծո հետ, ինչպես Բաբելոնի աշտարակը կառուցողները: Ենթադրությունների և կռահումների համար տեղիք տվող անորոշությունները հատուկ են նաև արևմտյան քաղաքաս երևույթներին և տերմինաբանությանը: Մասնավորապես հստակ սահմանված չեն քաղաքական ուղղությունների, տեսությունների անվանումները: Օրինակ՝ ինչպես անվանել Արևմուտքի վարած քաղաքականությունը և այն իրականացնողներին. նեոպահպանողական, լիբերալ-արմատական, թե՞ լիբերալ-գլոբալիստական:

Եվ ամենակարևորը: Նշելով արևմտյան քաղաքական էլիտայի գործունեությանը հատուկ հակասականության, անտրամաբանականության, հաճախ էլ թեթևաբարոյության մասին՝ չի կարելի անտեսել այն, որ այդ ամենին զուգահեռ այլ հարթության վրա ընթանում է ամբողջությամբ այլ քաղաքական գործընթաց՝ այլ կատարողներով:

Եթե մի կողմ թողնենք գլոբալ-լիբերալիստ հեղափոխականների կողմից ՋԼՄ-ների, սոցցանցերի մոնիտորների վրա ամբոխի համար բեմադրվող քաղաքական կրկեսը և անդրադառնանք, այսպես ասած, գետնի վրա ընթացող իրադարձություններին, կտեսնենք, որ դրանք չափազանց նպատակասլաց են և զարգանում են խիստ տրամաբանությամբ: Այդ իրադարձությունները ծրագրվում և իրականացվում են ոչ թե բարձրագույն պաշտոնների դրված թեթևաբարո կամակատարների, այլ զորեղ ուժերի, այսպես կոչված, «խորքային պետության» կողմից, որն էլ որոշում է նոր աշխարհակարգի և դրանում իր իսկ միաբևեռ կառավարման հաստատման կանոնները: Այս հանգամանքով են կողմնորոշվում դրան դիմակայող մրցակից պետությունները:

Իսկ Բ. Ջոնսոնը, Ժ. Բորելը և դրանց կարգի լիբերալ գործիչները սուբյեկտայնությունից զուրկ և արևմտյան հրահանգներին հետևող պետություններին ուղղորդելու համար են: ■

Հայոց ցեղասպանության ճանաչումը ներկայի և ապագայի խնդիր է

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, լրագրող

Հայաստանի Հանրապետության անկախությունից ի վեր Թուրքիան հրաժարվել է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ՝ առաջ քաշելով հիմնականում երեք նախապայման՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դադարեցում, Կարսի անօրինական «պայմանագրի» վավերացում և Արցախից հրաժարում:

Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով թուրք-ադրբեջանական տանդեմը գրեթե իրականացրեց Արցախի բռնազավթումը, հետևաբար նաև նախապայմաններից մեկի լուծումը, իսկ մյուս երկու նախապայմանների լեգիտիմացումն իր վրա է վերցրել Հայաստանի ներկա իշխանությունը: «Հայաստանը տարածքային պահանջներ չունի իր հարևաններից և ոչ մեկի նկատմամբ»,- հայտարարել էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն այս տարվա մարտի 13-ին Բահրեյնում կայացած Միջխորհրդարանական միության (IPU) վեհաժողովի ժամանակ: Ավելի վաղ՝ փետրվարի 24-ին, ելույթ ունենալով ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ձմեռային նստաշրջանի ժամանակ, ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սարգիս Խանդանյանը նույնպես հայտարարել էր. «Հայաստանը տարածքային պահանջներ չունի ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ իր հարևաններից որևէ մեկի նկատմամբ»: Միջազգային հարթակներում հնչեցված վերոնշյալ հայտարարությունները ցույց են տալիս, որ Կարսի անօրինական «պայմանագրի» վավերացումն ընդունելի է գործող իշխանության համար, որի մասին ուղերձ են հղում արտաքին լսարանին, մասնավորապես՝ «հարևաններին»:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վերաբերյալ իշխող քաղաքական խմբի մոտեցումը վերջերս՝ խորհրդարանում լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ, ձևակերպեց ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը: «Ցեղասպանության ճանաչման ի՞նչ գործընթաց: Վերջ, ճանաչվել է: Գործընթացը վերջացավ, ավարտվեց: Հայոց ցեղասպանության փաստը պետք է ուղղակիորեն կապվի իր հայրենի հողում մնացած և ապրող ժողովրդի անվտանգության հետ: Պետք է ոչ թե ասենք, որ ցեղասպանություն է եղել՝ ճանաչեք, այլ ասենք, որ կարևոր է դրա ճանաչումը. այդ ցեղասպանությունն իրագործողները կարող են դա անել նաև Արևելյան Հայաստանի բոլոր տարածքներում: Պետք է հասկանալ, որ «օդի մեջ» ցեղասպանության ճանաչումը բան չի տալիս՝ բացի բարոյական շոյվածությունից»,- ասել էր նա՝ անդրադառնալով լրագրողի այն դիտարկմանը, որ գործող իշխանության օրոք Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը տապալվել է: Սինանյանի ձևակերպումները խնդրահարույց են, իսկ հեռանկարային կտրվածքով՝ վտանգավոր, քանի որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն իրավական, պատմական արդարության, ճշմարտության վերականգնման և պահանջատիրական հարթությունից փորձ է արվում տեղափոխել զուտ բարոյական տիրույթ: Մինչդեռ ցեղասպանությունը ծանրագույն միջազգային հանցագործություն է և ենթակա է միջազգային իրավական պատասխանատվության:

Այսպիսով՝ գործող իշխանության կողմից, ինչպես Արցախի ինքնորոշման, այնպես էլ Հայոց ցեղասպանության ճանաչման և պահանջատիրության հարցում «նշաձողն» իջեցվում է զրոյական մակարդակի: Փաստացի ազդարարվում է ցեղասպանության ճանաչման գործընթացը արտաքին քաղաքական օրակարգից հանելու մտադրության մասին՝ դրանով բավարարելով Թուրքիայի նախապայմաններից երրորդը ևս: Հայոց ցեղասպանության փաստը կապելով միայն «հայրենի հողում մնացած և ապրող ժողովրդի անվտանգության հետ»՝ շրջանցվում է ցեղասպանության հետևանքով հայրենազրկված,

նյութական կորուստներ կրած ժառանգների հարցը, այսինքն՝ մեզ առաջարկում են հրաժարվել պահանջատեր լինելու իրավունքից: Թուրքիային պատասխանատվության կանչելու պահանջից հրաժարումն առավել անընդունելի է Արցախյան երկրորդ պատերազմի ժամանակ և դրանից հետո Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերած բացահայտ և ընդգրկուն աջակցության պայմաններում:

Քննադատության չի դիմանում նաև այն դիտարկումը, թե ցեղասպանությունը ճանաչվել է, հետևաբար գործընթացն ավարտված է: Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը կարող ենք «ավարտված» համարել այն դեպքում, երբ Թուրքիան ճանաչի պատմական իրողությունը և հանձն առնի դրա հետևանքների վերացման պատասխանատվությունը: Հեռանկարային առումով կստացվի, որ ցեղասպանության ճանաչման գործընթացն ավարտված համարելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը, հայ ազգը հրաժարվում են պատմական հայրենիքին երբևէ տեր կանգնելու երազանքից, Միացյալ Հայաստան ունենալու տեսլականից: Նման զարգացումը կհանգեցնի Հայկական լեռնաշխարհում մեր բնիկ լինելու կարգավիճակից և դրանից բխող իրավունքներից հրաժարմանը: Դա վտանգավոր է այնքանով, որքանով արհեստածին «Ադրբեջան» պետության, այսպես կոչված, «տարածքային ամբողջականության» ճանաչման հարցը: Հայոց ցեղասպանությունն «ավարտված» գործընթաց համարելը նշանակում է հրաժարում Թուրքիայի նկատմամբ ունեցած տարածքային պահանջներից և հայրենազրկման փաստի լեգիտիմացում: Սա հայկական ինքնությանն ուղղված մարտահրավեր է, ոչնչացման տանող ճանապարհ: Որքան էլ նախկինում զգուշությամբ է խոսվել պահանջատիրության մասին, այդ թվում՝ տարածքային, այնուամենայնիվ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, միջազգային հարթակներում դրա բարձրաձայնումը, տարբեր օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալն ինքնին պահանջատիրությանն ուղղված քայլեր են եղել:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի անկախացմամբ նոր որակ և բովանդակություն էր ձեռք բերել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Այն պետական քաղաքականության անբաժան մասն էր, արտաքին քաղաքական օրակարգի կարևորագույն բաղադրիչը: Դեռևս 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված Անկախության հռչակագրի կետ 11-ում հստակորեն ամրագրվեց հայոց պետականության հանձնառությունը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում՝ սահմանելով, որ «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»: Հռչակագրի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության համար Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը դադարեց լինել սոսկ պատմական, բարոյահոգեբանական հարթությունում գտնվող երևույթ՝ վերածվելով արտաքին քաղաքականության և արդի միջազգային իրավական հարաբերությունների հիմնախնդրի:

Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում նույնպես Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը պետական մակարդակի բարձրացնելը կարևորագույն դերակատարություն ունեցավ: Այն հայաստանաբնակ և աշխարհասփյուռ հայության համընկնող, միասնական օրակարգի կարևորագույն և առանցքային բաղադրիչներից մեկն էր: Թեև հայ ժողովրդին բաժին հասած մեծագույն ողբերգության հանգամանքը որպես ընթացիկ կյանքի առանցքային հարցերից մեկը դիտարկելը ինքնին ցանկալի չէ, սակայն այն համախմբվածության, մերձեցման, Հայաստանի և աշխարհասփյուռ հայության փոխճանաչման կարևոր գործառույթներից մեկն էր իրականացնում: Երբ նշվում է, թե «30 տարի ցեղասպանության ճանաչման համար Սփյուռքում հսկայական ռեսուրսներ են օգտագործվել, բայց հասել են միայն մարտավարական արդյունքների, ռազմավարական արդյունքների չեն հասել», դրանով արժեզրկվում է կատարված աշխատանքը և վնասվում Հայաստան-Սփյուռք, Սփյուռք-Սփյուռք գործակցությունը: Ատոմիզացված հայ հասարակությանը անհրաժեշտ են համընդհանուր, անքննելի օրակարգային հարցեր, որոնք կմիավորեն մասնատված, «սևի և սպիտակի» բաժանված հասարակությանը, մինչդեռ դրա փոխարեն ևս մեկ համահայկական խնդիր հայտնվում է լուսանցքից դուրս կարգավիճակում:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի շարունակական լինելը և առաջին հերթին պետական մակարդակով հարցն արտաքին քաղաքական օրակարգում պահելը լուծում են նաև կրթական խնդիրներ, ինչն անհրաժեշտ է պատմության դասերը ինչպես մեր սերունդներին, այնպես էլ օտարներին ներկայացնելու տեսանկյունից: Օրինակ՝ Միացյալ Նահանգների Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 2022 թ. ներկայացրեց երկկուսակցական օրինագիծ, որով նախատեսվում է հինգ տարիների ընթացքում 10 միլիոն դոլար հատկացնել Կոնգրեսի գրադարանին՝ Հայոց ցեղասպանության պատմության, դասերի, հանգամանքների և դրա ներկա դրսևորումների վերաբերյալ կրթական ծրագրեր իրականացնելու համար: Նախագծի հեղինակներն այս տարի ևս ներկայացրին Հայոց ցեղասպանության կրթական ակտը՝ փորձելով հակազդել թուրքական այն քարոզչությանը, թե, իբր, «1915-1923 թթ. Օսմանյան Թուրքիայի կողմից միլիոնավոր քրիստոնյաների համակարգված զանգվածային սպանություններ տեղի չեն ունեցել»: ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Մենենդեսը նշում է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ կրթության մասին երկկուսակցական օրենքը ներկայացնելով՝ «վերահաստատում են ճշմարտությունը ճանաչելու իրենց հանձնառությունն ամբողջ աշխարհի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հայ համայնքի առջև»[1]:

Ինչո՞ւ է Թուրքիայի համար կարևոր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի կասեցումը: Այն պարզ պատճառով, որ գործընթացն ի վերջո հանգեցնելու է պատասխանատվության, որը բնավ բարոյական հաղթանակների շարքին չի կարող դասվել: Տրամաբանությունը հուշում է, եթե Հայոց ցեղասպանության ճանաչումը զուտ բարոյական բաղադրիչ ունենար, ապա թուրքական կառավարությունն այդքան ֆինանսներ և մարդկային ռեսուրսներ չէր ծախսի ճանաչման գործընթացը կասեցնելու համար: Հատկապես վերջին շրջանում Հայաստանում տարբեր հարթակներում հնչում են հայերի և թուրքերի հաշտեցման մասին խոսակցություններ: Իսկ որքանո՞վ են հնարավոր իրագործել «անցյալը անցյալին թողնելու» և «առաջ շարժվելու» առաջարկները՝ հաշվի առնելով, որ մեզանից շատերը ցեղասպանվածների սերունդներից են: Նման պարագայում, առանց ոճրագործի մեղայականի, «հաշտեցում» բառի օգտագործումն անգամ անընդունելի է:

Կարող ենք հստակ փաստել, որ Հայոց ցեղասպանության հարցը միայն անցյալին չի վերաբերում, այլև ներկային և ապագային, քանի դեռ չի հանգել վերջնական և արդարացի հանգուցալուծման: Ճանաչումն ընդամենն առաջին փուլն է, որից պետք է բխի նաև հետևանքների հաղթահարումը և ամենակարևորը՝ պատասխանատվության ստանձնումն այն իրականացնողի, այսինքն՝ Թուրքիայի կողմից: ■

Դղում

[1] https://www.foreign.senate.gov/press/dem/release/senators-menendez-blackburn-introduce-armenian-genocide-education-act.

Բարոյական մայրամուտը շարունակվում է

Անահիտ Դանիելյան
Նիկոլ Աղբալյան ուսանողական միության վարչության անդամ

«Նրանց ապրվածն իրենց որովայնն է»:
Պողոս առաքյալ

Հայաստանի անկախ հանրապետությունը հայ ժողովրդի վեցհարյուրամյա դեգերումի և փայփայած երազանքի բյուրեղացումն է: Գուցե զարմանալի է, բայց հալածանքների և ֆիզիկական ոչնչացման վտանգի հետ մշտապես առերեսվող հայ ժողովուրդը երբեք չդադարեց հավատալ այդ երազանքին և չկորցրեց պետականության գիտակցությունը: Այս հարցում անգնահատելի է հայոց եկեղեցու, իսկ 19-րդ դարավերջից՝ նաև ազգային կուսակցությունների ավանդը: Հենց սա էր պատճառը, որ եկեղեցին և ազգային կուսակցությունները, մասնավորապես՝ ՀՅԴ-ն, առաջինն էին հայտնվում Օսմանյան կայսրության, Պարսկաստանի, ցարական Ռուսաստանի, ապա՝ նաև խորհրդային իշխանությունների թիրախում. հալածվում էին և խոշտանգվում:

Ցավալի է, սակայն հայոց եկեղեցին այսօր էլ հայտնվել է Հայաստանի իշխանությունների թիրախում և հալածանքների է ենթարկվում:

Վերջին տարիներին բազմաթիվ մեղադրանքներ են հնչում Ամենայն Հայոց հայրապետի և, առհասարակ, հոգևոր դասի հասցեին: Եկեղեցուն են վերագրվում պետության գործերին, քաղաքական գործընթացներին միջամտելու որոշ դեպքեր՝ հղում կատարելով ՀՀ Սահմանդրության (2015թ.) 17.2 հոդվածին, ըստ որի՝ եկեղեցին անջատ է պետությունից: Սակայն, ի հակառակ իշխող քաղաքական ուժի ջանքերին, չի մոռացվել, որ դեռևս 2018 թ. հունիսին իրենք և իրենց համակիր շրջանակը «Նոր Հայաստան, նոր հայրապետ» կոչերով փորձում էին խառնվել եկեղեցու գործերին՝ անտեսելով ՀՀ Սահմանադրության նույն հոդվածը: Այս շարժումը, փաստորեն, չհաջողեց, սակայն իշխանությունը դեռ «զենքերը վայր չի դրել»: Կրթական նոր չափորոշիչների համաձայն՝ 2001 թ. դպրոցում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան 2023 թ. սեպտեմբերից դադարելու է դասավանդվել որպես առանձին առարկա: Կրկին մանիպուլյացիայի դիմելով՝ ոլորտի պատասխանատուները պնդում են, թե ՀԵՊ առարկայի ուսումնական նյութն ընդգրկված է լինելու պատմության դասագրքերում: Մի կողմ թողնենք այն փաստը, որ իրենց չափորոշիչներին բավարարող դասագրքեր դեռևս չկան, իսկ ՀԵՊ-ի «ճակատագրի» մասին որոշումն արդեն կայացված է. առարկայի շրջանակներում ուսուցանվող նյութին քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է փաստել, որ նույնիսկ մեծ ցանկության դեպքում այն իր ողջ ծավալով չի կարող ընդգրկվել պատմության դասագրքերում: Մասնավորապես ուսումնական նյութից դուրս են մնալու 10-րդ դասարանում դասավանդվող քրիստոնեական բարոյագիտությունը և 11-րդ դասարանում դասավանդվող աշխարհայացքի ձևավորման տարրերը, քրիստոնեական և ազգային արժեքային համակարգը, ազգային-հոգևոր նկարագիրը:

Հասկանալի է, որ այս իշխանությունը պարզապես խորշում է բարոյականից և ազգայինից, չի կարողանում հանդուրժել ընտանիքի, ազգի, հայրենիքի, հավատի, մշակույթի՝ որպես հիմնարար արժեքների առաջնայնությունը, կոսմոպոլիտիզմի դեմ հայրենասիրության գերակայության գաղափարի տարածումը ՀԵՊ-ի միջոցով:

Փաստորեն, օրենքի և օրինականության մասին թմբկահարող ուժը դարձյալ շրջանցում է ՀՀ մայր օրենքը, մասնավորապես՝ 18.1 հոդվածը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյաց Առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում: Թեման այսքանով չի սահմանափակվում. երիտասարդների հետ հանդիպման ընթացքում եկեղեցի-պետություն հարաբերություններին վերաբերող հարցին ի պատասխան՝ ակնարկում են եկեղեցին հարկելու մասին, եկեղեցուն առաջարկում ստեղծել քաղաքական կուսակցություն քաղաքական գործընթացներին հավասար պայմաններով մասնակցելու համար: Այս ամենի պատճառը պարզ է՝ իշխանությունը հակազգային է:

Այս ամենի ֆոնին, բնականաբար, այլևս տարօրինակ չի թվում նաև Հայաստանի անկախության մասին 1991 թ. հռչակագրի 11-րդ կետից՝ հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից, հետքայլը և զիջողական քաղաքականությունը:

Եվ ցավն այն է, որ այս բարոյական մայրամուտը նույնպես դեռևս չի հաջողվում կասեցնել: ■

Հայաստանի հազարամյակների «կադաստրի վկայականները»

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Մենք՝ բոլորս, հասկանում ենք, որ մենք մեր շատ սիրելի հայրենիքում 30 տարի ապրում ենք մի տեղ, որի կադաստրի վկայականը չունենք, ընդ որում՝ Հայաստանը, որպես պետություն, իր բազմահազարամյա գոյության ընթացքում երբեք կադաստրի վկայական չի ունեցել»[1],- մայիսի 28-ից օրեր առաջ ՀՀ ԱԺ-ում հայտարարեց Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանն աշխարհի հնագույն երկրներից մեկը լինելով՝ իր հազարամյակների պատմության մեջ ունեցել է բազմաթիվ պետականություններ, սակայն քիչ չեն եղել նաև պետականազուրկ դարաշրջանները:

Անկախ Հայաստանի քաղաքական իրավիճակից, նրա նվաճողները, հարևանները կամ թշնամիները կասկածի տակ չեն դրել այս տարածաշրջանում Հայաստան երկրի և հայ ժողովրդի գոյությունը կամ չեն փորձել ժխտել այդ գոյության իրավական հիմքերը՝ բացառությամբ, թերևս, մեր տարածաշրջանում վերջին հարյուրամյակում ստեղծված Ադրբեջան կոչվող արհեստական պետության, որը, լինելով Օսմանյան Թուրքիայի քաղաքական շահերի բերումով ստեղծված միավոր, շարունակ փորձում է «հիմնավորել» այս տարածաշրջանում Հայաստանի «ապօրինի» և իր իբր «օրինական» գոյությունը, մինչդեռ պատմական փաստերն այլ բան են ասում այս տարածաշրջանի իրական բնիկների մասին, բայց այդ մասին փոքր-ինչ ուշ. առայժմ Ադրբեջանին թողնենք իր տեղում և գանք Հայաստանում ադրբեջանական շահերի սպասարկուներին:

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը վերանկախացավ: Այդ օրերին անկախության համար պայքարողներից ոչ մեկի մտքով չէր անցնի, որ երեք տասնամյակ անց Հայաստանի ղեկավարը ինչ-որ անհասցե արտահայտություններ կանի Հայաստանի, այսպես ասած, «կադաստրի վկայական» չունենալու մասին: Նախ ընդգծենք մի բան, որ պատմության մեջ չենք հանդիպել, այսպես կոչված, «կադաստրի վկայական» ունեցող որևէ պետության: Հավանաբար պատճառն այն է, որ ոչ մի պետության ղեկավար երբեք իր պետությանը չի վերաբերվել որպես «անշարժ գույքի», որը յուրաքանչյուր պահի կարելի է «օտարել» որևէ բարեկամ կամ թշնամի պետության և չի որոշել իր պետության սահմանները մեկ այլ պետության ղեկավարի կամքով, այլ իր ժողովրդի քաղաքական շահերով ու պատմական հիշողությամբ, որով յուրաքանչյուր ժողովուրդ կապված է իրեն ծնունդ տված հայրենիքի հետ: Միաժամանակ նկատենք, որ իրավական առումով ևս ոչ մի միջազգային փաստաթղթում որևէ պետության «կադաստրի վկայականի» մասին խոսք չկա: Այնուամենայնիվ մեր

հասարակության քիչ տեղյակ ու շատ դյուրահավատ շրջանակների համար կփորձենք նախ՝ պատմական, ապա նաև քաղաքական տեսանկյունից մի փոքր մեկնաբանել, այսպես կոչված, «ժողովրդի վարչապետի» Հայաստանի ու հայության համար շատ վտանգավոր մտքերը, և այդ հարցում մեզ կօգնի, իհարկե, հայոց պատմությունը:

Այսպես՝ Նիկոլ Փաշինյանի եզրույթով ասած՝ Հայաստանի «կադաստրի վկայականները» բազմաթիվ են, և դրանց մեջ անգամ հազարամյակների պատմություն ունեցողները կան:

Մեզ հետաքրքրում է, թե Նիկոլ Փաշինյանին կբավարարե՞ն, օրինակ, շումերական սեպագրերը Արատտա երկրի մասին, կա՞մ խեթական արքաների կողմից Հայասայի մասին բազմաթիվ հիշատակումներն իրենց արձանագրություններում, կա՞մ Ասորեստանի արքաների արձանագրությունները Նաիրի երկրի մասին, իսկ միգուցե ավելի վաղ շրջանում Միջագետքի առաջին բռնակալներից Նարամ-Սուենի հիշատակությո՞ւնը Արմանի երկրի մասին. «Մարդկության արարումից ի վեր ոչ ոք չի կարողացել նվաճել Արման (ում) երկիրը»[2]: Ո՞չ, այս փաստը բավարո՞ր չէ, մի՞թե սա Հայաստանի «կադաստրի վկայականը» չէ: Էլ չենք խոսում Աստվածաշնչի մասին, որտեղ Հայաստանի ու հայերի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ կան, ինչպես՝ Արարատի երկիր, Ասքանազյան ազգ, Թորգոմի տուն, իսկ հրեա աստվածաբան Սաադիա Գաոնը (X դ.) Հայաստանը նույնացրել է Արամի (Ծնունդոց Ժ 22, ԻԵ 20, ԻԸ 5)հետ[3]:

Այս ամենին էլ հավելենք հին աշխարհում Հայաստանի մասին երկու կարևոր վկայությունները՝ աշխարհի հնագույն բաբելոնյան քարտեզը՝ Ք. ա. առաջին հազարամյակի առաջին կեսին ստեղծված, որտեղ գրեթե կենտրոնում նշված է Արմենիա երկիրը[4] և Դարեհ Ա-ի Բեհիսթունյան արձանագրությունը, որտեղ Հայաստանը հիշատակվում է երեք անուններով՝ պարսկերեն՝ Արմինա, էլամերեն՝ Հարմինույա, բաբելերեն՝ Ուրարտու[5]:

Ազգերի լիգայի կողմից ճանաչված Հայաստանի Հանրապետության քարտեզը

Հայաստանի այս «կադաստրի վկայականների» վրա երկար կանգ չառնելու համար մի կողմ թողնելով նաև հին ու միջին դարերի «կադաստրի վկայականները»՝ գանք նորագույն ժամանակներին:

Բագրատունյաց թագավորության անկումից հետո պատմական Հայաստանի տարածքի մի փոքր հատվածում հայկական պետականություն ստեղծվեց միայն 1918 թ., և Բաթումի պայմանագրով անկախ Հայաստանի Հանրապետությունն առաջինը ճանաչեց Թուրքիան:

Հատկանշական ենք համարում ընդգծել, որ պատմական հայրենիքում հարյուրամյակներով հայկական պետական կազմավորում չի եղել, բայց երբ այն վերածնվել է, այդ հողի վրա նրա պատմական իրավունքը ոչ ոք կասկածի տակ չի դրել, և այսօր Հայաստանի ղեկավարն ինքն է կասկածի տակ դնում հայ ժողովրդի իրավունքներն իր պատմական հայրենիքի նկատմամբ:

Իհարկե, մեզ՝ հայերիս, «կադաստրի վկայականներ» ու բարեկամի կամ թշնամու «բարեհաճ հավաստիացումներ» անհրաժեշտ չեն մեր հայրենիքի նկատմամբ պատմական և քաղաքական իրավունքների տեսանկյունից, սակայն «կադաստրի վկայական չունեցող» պետության ղեկավարի մտքերը ստիպում են հարցադրում անել, թե, օրինակ, շուրջ 600-ամյա դադարից հետո հայկական պետականության ծնունդը ազդարարող Բաթումի պայմանագիրը «կադաստրի վկայական» չէ, որը հայ ժողովրդի՝ իր հայրենիքում պետականություն ունենալու իրավունքի իրավական ու քաղաքական հիմնավորում էր:

Իսկ Սևրի պայմանագի՞րը՝ ստորագրված աշխարհի մեծ տերությունների կողմից, մի՞թե Հայաստան պետության և հայ ժողովրդի քաղաքական իրավունքների «կադաստրի վկայականը» չէր, իրավունքներ, որոնք վերահաստատվեցին 1991 թ. Հայաստանի Անկախության հռչակագրով (մերօրյա Հայաստանի վերջին երեք տասնամյակների թերևս ամենակարևոր փաստաթուղթը): Անկախության հռչակագիրը, ի՞նչ է, եթե ոչ «կադաստրի վկայական», իսկ եթե Փաշինյանին միջազգային փաստաթուղթ է անհրաժեշտ, ապա հիշեցնում ենք ՄԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչումը, որի հիմքը, ի դեպ, 1920 թ. դեկտեմբերի 10-ի փաստաթուղթն է: «Ազգերի լիգան սահմանել է, թե որ տարածքների վրա է տարածվում Հայաստանի Հանրապետության իրավասությունը… Սա ոչ թե միջպետական պայմանագիր է, ոչ թե երկու երկրների միջև կնքած համաձայնագիր է, որը կարող է փոփոխվել հետագայում ավելի ուշ կնքված նոր համաձայնագրով, այլ սա պետության ճանաչման վկայականն է, այսինքն՝ պետության տիտղոսի ճանաչումը: Այն «ռանգով» ավելի բարձր սուվերեն փաստաթուղթ է. այն ժամանակվա Ազգերի լիգայի, այսինքն՝ ՄԱԿ-ի իրավախորհրդի կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման փաստաթուղթն է: Պարզվում է՝ 1920 թ. վերջին Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը պաշտոնապես դիմել են Ազգերի լիգա՝ անդամակցության համար: Հայաստանի և Վրաստանի դիմումները պրոֆիլային հանձնաժողովը քննարկումից հետո ընդունել է, իսկ Ադրբեջանինը՝ մերժել: Ազգերի լիգան Հայաստանի Հանրապետության անբաժան տարածք է ճանաչել 70.551 քառ. կմ, որը ընդգրկում է այսօրվա Հայաստանի Հանրապետությունը, Նախիջևանը, Արցախն՝ ամբողջությամբ, Կարսի և Արդահանի շրջանները ….

ՄԱԿ-ը ինքն իրեն չհակասելու համար 1991 թ. Հայաստանին, Վրաստանին և Ադրբեջանին ՄԱԿ-ի անդամ ընդունելու որոշման մեջ չի նշում, թե ո՞ր սահմաններով են նորընտիր երկրները դառնում ՄԱԿ-ի անդամ»[6]: Կից ներկայացվող փաստաթղթերի



Document de l'Assemblée 209

Société des Nations

Admission de nouveaux Membres dans la Société des Nations

Arménie

RAPPORT PRÉSENTÉ PAR LA 1re COMMISSION A L'ASSEMBLÉE

League of Nations

Admission of new Members to the League of Nations

Armenia

REPORT PRESENTED BY THE 1st COMMITTEE TO THE ASSEMBLY

LEAGUE OF NATIONS

Assembly Document 209

Admission of new Members to the League of Nations

ARMENIA.

Ազգերի լիգայի կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման որոշումը

լուսանկարներն ու քարտեզը կարող են բավարարել փաստաթղթեր ու քարտեզներ սիրող Փաշինյանի հետաքրքրությունը, եթե, իհարկե, նրա քաղաքական հետաքրքրությունը միտված չէ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասը Ադրբեջանին կցելուն և դրա դիմաց իբր «կադաստրի վկայական» ստանալուն:

Նիկոլ Փաշինյանին ու «կադաստրի վկայական» փնտրող նրա շրջապատին խորհուրդ կտանք աչքի անցկացնել «Աշխարհացույցը», որը մեր հայրենիքի «կադաստրի վկայականներից» մեկն է և ըստ այդ վկայականի՝ Մեծ Հայքն ունեցել է 15 նահանգ (աշխարհ)՝ շուրջ 300.000 քառ. կմ տարածքով: Իսկ Հայաստանի այսօրվա գոյությունը և նրա հիմքով ամբողջական Հայաստանի ստեղծումը բխում է հենց «...մեր ժողովուրդի եւ Հայաստանի պատմութենէն»[7]: Հայաստանի այդ «կադաստրի վկայականը» հայոց պատմությունն է. «Այն ունի կայուն պետություն և հասարակություն կերտելու ամուր հիմք, որն է հայկական չորսհազարամյա քաղաքակրթությունը և նրա արդյունք եղող հայոց զորեղ, ընդգծված, յուրօրինակ ինքնությունը»[8]:

Պատմական, իրավական և քաղաքական այս փաստերը արդեն իսկ ցույց են տալիս Փաշինյանի քաղաքական հայտարարության վտանգավորությունը Հայաստանի ու հայ ժողովրդի համար, և չենք կարող չասել, որ նման հայտարարություն անելը ոչ այլ ինչ է, եթե ոչ հերթական դավաճանություն, քանզի այդպիսով Փաշինյանը կամա, թե ակամա հաստատում է Ալիևի հորինած թեզն այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը «Արևմտյան Ադրբեջան է»: Հարց է առաջանում, իսկ ո՞վ եք Դուք, «պարո՞ն» Փաշինյան, «կադաստրի վկայական» չունեցող «ապօրինի» Հայաստանի Հանրապետության ապօրինի վարչապե՞տը, իսկ միգուցե «Արևմտյան Ադրբեջանի» նահանգապե՞տը: Թե՞ իր թուքամետությամբ աչքի ընկնող Փաշինյանը երկրի թիվ 1 ամբիոնից քաղաքական հայտարարություն արեց Ալիևի հետագա գործողությունների առաջ «կանաչ լույս» վառելու նպատակով:

Հակառակ դեպքում կարող էր, օրինակ, Ալիևին հարցնել, թե ո՞րն է մինչև 1918 թ. երբևէ գոյություն չունեցած Ադրբեջանի «կադաստրի վկայականը» (այս մեկը, հաստատ, երբևէ գոյություն չի ունեցել):

Ինչպես ասացինք, Փաշինյանի այս հայտարարությունը քաղաքական է և կարող է «հինավորում լինել» Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքում, Փաշինյանի ընկալմամբ, «անկլավների» ու Տիգրանաշենի հանձնման և երկրորդ կապիտուլյացիայի ստորագրման համար, ինչը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ Հայաստանի ու հայության համար, եթե պետական դավաճանության երկրորդ արարը չկանխվի ու համապատասխան միջոցներ չձեռնարկվեն արտաքին թշնամու ախորժակը զսպելու ուղղությամբ, իսկ դրա համար առաջին և գլխավոր պայմանը պետական դավաճանի իշխանազրկումն է, որը կլինի Հայաստանի հազարամյակների բազմաթիվ «կադաստրի վկայականների» վավերացման առաջին քայլը:

Ընտրությունն, իհարկե, հայ ժողովրդինն ու հայ ռազմա-քաղաքական շրջանակներինն է, Փաշինյանի առաջարկած «ապագայում» Ադրբեջանի կամ Թուրքիայի իրավազուրկ հպատակի «կադաստրի վկայական» ունենալ որևէ երկրում, որպես ցեղասպանությունից մազապուրծ, հայրենազուրկ փախստականի կեցության վկայական ունենալ, թե՞ ունենալ և սեփական սերունդներին ժառանգություն թողնել անվտանգ, բարեկեցիկ ու ընդարձակ սահմաններով ազգային պետություն՝ Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստան: ■

Հղումներ

1. https://hraparak.am/post/594af663abaab775cbc399d32c698b3f.
2. Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը., Եր., 2016., էջ 12:
3. https://qahana.am/post/2359.
4. «Պատմության կեղծարարները. Ադրբեջան»., https://www.youtube.com/watch?v=UcIKSNZgCVM:
5. Մովսիսյան Ա., նշվ. աշխ., էջ 28:
6. https://www.aravot.am/2023/02/17/1323749/:
7. Հակոբյան Ա., Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում., Եր., 2020., էջ 11:
8. Նույն տեղում:

Օգտագործված գրականության ցանկ

ա) Գրականություն

1) Հակոբյան Ա., Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը Հայոց պատմության հոլովույթում., Եր., 2020
2) Մովսիսյան Ա., Հայոց 5000-ամյա պետականությունը., Եր., 2016

բ) Համացանցի նյութեր

1. https://hraparak.am/post/594af663abaab775cbc399d32c698b3f
2. https://qahana.am/post/2359
3. https://www.youtube.com/watch?v=UcIKSNZgCVM
4. https://www.aravot.am/2023/02/17/1323749/

Ադրբեջան-Իսրայել «սիրախաղը» առավել անկաշկանդ և հրապարակային է դառնում

Արմեն Պետրոսյան
Արևելագետ

Ընթացիկ տարին ամենաակտիվն է Իսրայել-Ադրբեջան հարաբերությունների ողջ պատմության ընթացքում: Ընդամենը 5 ամսվա ընթացքում այս երկրների հարաբերություններում արձանագրվել են որակական լուրջ տեղաշարժեր, որոնք ուղղակի արդյունք և հետևանք են նաև աշխարհաքաղաքական և տարածաշրջանային մի շարք բարենպաստ իրողությունների:

2023 թ. մայիսի 30-31-ին տեղի է ունեցել Իսրայելի նախագահ Իցհակ Հերցոգի պետական այցն Ադրբեջան (ուշագրավ է, որ ըստ իսրայելական ՁԼՄ-ների՝ այցը պետական էր, ադրբեջանական ՁԼՄ-ների համաձայն՝ պաշտոնական): Իրադարձությունը պատմական էր, քանի որ նախագահի մակարդակով սա առաջին այցն էր Բաքու: Ադրբեջան մեկնելուց առաջ «Բեն Գուրիոն» օդանավակայանում Իսրայելի նախագահը հայտարարել է. «Ադրբեջանն առանցքային և բարեկամական պետություն է՝ համագործակցության բազմաթիվ ոլորտներով... Ադրբեջանն Իրանի հարևանն է՝ տարածաշրջանում ապակայունացնող ուժի, որը փորձում է խաթարել խաղաղության և անվտանգության իսրայելական դաշինքները»:

Հերցոգ - Ալիև ասուլիսը

Իրանի թեմային Հերցոգն անդրադարձել է նաև Ադրբեջանի նախագահի հետ հանդիպմանը՝ դրանից հետո իր հրապարակային ելույթում ընդգծելով, որ Ալիևի հետ մանրամասնորեն խոսել են «համաշխարհային և տարածաշրջանային անվտանգային կառուցվածքի մասին, որը վտանգվում և սպառնալիքների է ենթարկվում Իրանի կողմից»:

Ալիևին իր հերթին բարձր է գնահատել երկու երկրների միջև պաշտպանական համագործակցությունը՝ հավելելով, որ Բաքուն «այս ոլորտում երկար տարիներ է՝ մուտք ունի դեպի իսրայելական

ժամանակակից տեխնիկան, որն օգնում է արդիականացնել Ադրբեջանի պաշտպանունակությունը և պաշտպանել պետականությունը, արժեքները, ազգային շահերը և տարածքային ամբողջականությունը»:

Ադրբեջանի հրեական համայնքի հետ հանդիպմանը Հերցոգը մատնանշել է Իրանում բնակվող 30 միլիոնանոց ադրբեջանական սփյուռքի հանգամանքը, թե ինչպես Բաքուն «ոտքի կանգնեց, (երբ) երեք տարի առաջ հաղթեց Հայաստանին և վերադարձրեց իր տարածքի 30 տոկոսը» և թե որքան տպավորված է Ալիևի «անձնական համարձակությամբ» իր անձի նկատմամբ Իրանի թշնամանքի հանդեպ:

Հարկ է նշել, որ «պատմական» կարելի է գնահատել ոչ միայն վերոնշյալ այցը, այլև Իսրայել-Ադրբեջան բարձր մակարդակի բանակցություններում Իրանի վերաբերյալ նման հանդուգն հռետորաբանությունը հրապարակային հարթությունում:

Վերոնշյալի համատեքստում Ադրբեջան-Իսրայել-Իրան եռանկյունում գործում է հետևյալ բանաձևը՝ որքան սրվում են Բաքու-Թեհրան հարաբերությունները, տրամագծորեն հակառակ սցենարն է արձանագրվում Բաքու-Թել Ավիվ ուղղությամբ:

Հետևաբար նաև այս տեսանկյունից 2023 թվականն աննախադեպ է: Իսրայելի նախագահի այցից ընդամենը 40 օր առաջ Ադրբեջան էր այցելել Իսրայելի ԱԳ նախարար Էլի Քոհենը՝ բոլոր ժամանակներում Բաքու ժամանած ամենաբազմանդամ պատվիրակությամբ: Ապրիլի 18-19-ին կայացած Իսրայելի ԱԳ նախարարի գլխավորած ծանրակշիռ պատվիրակության այցի թեմատիկ առիթը միջկառավարական հանձնաժողովի 3-րդ նիստն էր: Դրա կազմում ներառված էին պաշտպանական արդյունաբերու-

թյան, կիբեր և ազգային անվտանգության, ջրային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտներում մասնագիտացած 20 առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ: Նրանք տասնյակ հանդիպումներ են անցկացրել ադրբեջանական պետական կառույցների և համապատասխան ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Մինչև Ադրբեջան մեկնելը Քոհենը հայտարարել էր. «Այսօր քաղաքական կարևոր այցով եմ մեկնում, որպեսզի Բաքվում մեր լավ ընկերների հետ շարունակենք միասնական և ամուր ճակատ կառուցել մեր ընդհանուր մարտահրավերների դիմագրավման և տնտեսության, անվտանգության, էներգետիկայի ու նորարարության/ինովացիայի ոլորտներում համագործակցության խորացման համար»: Իսրայելցի պաշտոնյաների նկատմամբ ցուցաբերվեց բարձր մակարդակի ընդունելություն: Է. Քոհենը հանդիպեց Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի, իր գործընկեր Ջ. Բայրամովի հետ, իսկ էկոնոմիկայի նախարար Մ. Ջաբարովի հետ գլխավորեցին միջկառավարական նիստը: Այցի ընթացքում ձեռք են բերվել մի շարք կարևոր պայմանավորվածություններ առևտրային հարաբերությունների և ներդրումների խրախուսման, շրջակա միջավայրի պահպանության ոլորտում համագործակցության, նորարարական տեխնոլոգիաների՝ թվային տնտեսության, բնագավառներում ստորագրվել են փաստաթղթեր:

Բայց և այնպես, Ադրբեջան-Իսրայել հարաբերություններում արձանագրված առանցքային իրադարձությունը մարտի 29-ին Թել Ավիվում ադրբեջանական դեսպանատան բացումն էր, որը տեղի ունեցավ Ադրբեջանի ԱԳ նախարար Ջ. Բայրամովի անմիջական մասնակցությամբ:

Հարկ է նշել, որ Իսրայելն ու Ադրբեջանը դիվանագիտական հարաբերություններ հաստատել են 1991 թ.: Իսրայելը դարձավ աշխարհի առաջին երկրներից մեկը, որը ճանաչեց անկախ Ադրբեջանական Հանրապետությունը, իսկ 1993 թ. Բաքվում բացվեց Իսրայելի դեսպանատունը (Ադրբեջանի պատասխան քայլի 30-ամյա ձգձգման պատճառները՝ հաջորդիվ): Քոհեն-Բայրամով հանդիպմանն աննախադեպ հայտարարությամբ էր հանդես եկել Իսրայելի ԱԳ նախարարը՝ նշելով. «Իսրայելում Ադրբեջանի դեսպանատան բացումը երկու երկրների միջև հարաբերությունների ամրապնդման ևս մեկ վկայություն է: Ադրբեջանը մուսուլմանական երկիր է, իսկ նրա ռազմավարական դիրքը երկկողմ հարաբերությունները դարձնում է կարևոր և մեծ ներուժ ունեցող: Իսրայելի կապերն Ադրբեջանի հետ մեծ նշանակություն և մեծ ներուժ ունեն: Մենք պայմանավորվեցինք ուժեղացնել իրանական սպառնալիքի դեմ պաշտպանության միասնական ճակատը, զարգացնել համագործակցությունը տնտեսության, անվտանգության և վերականգնվող էներգիայի աղբյուրների շահագործման ոլորտներում: Միասին կաշխատենք կանխելու Իրանում միջուկային զինանոցի ստեղծումը. սա պահանջում է ոչ միայն դիվանագիտական և տնտեսական քայլեր, այլ նաև զսպման ուժային գործոնների ամրապնդում»:

Ալիև - Քոհեն բանակցություններ

Պետք է հավաստել, որ իսրայելցի և ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներում նման հակահիրանական հրապարակային հայտարարությունը աննախադեպ էր: Այս իրողությունը փաստում է ինչպես Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների որակապես նոր մակարդակի, այնպես էլ Իրանի դեմ միասնական ճակատի ձևավորման մասին:

Իսրայել-Ադրբեջան հարաբերությունների առանձնահատկությունները

Ընդհանուր առմամբ, Ադրբեջան-Իսրայել ռազմավարական բնույթի հարաբերությունները որակապես նոր մակարդակի հասան 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Հարավային Կովկասում ստեղծված որակապես նոր իրավիճակի պայմաններում: Ադրբեջան-Թուրքիա դաշինքի համար չափազանց կարևոր պատերազմում նման արդյունքներ հնարավոր եղավ արձանագրել նաև Իսրայելի ամբողջական աջակցության շնորհիվ: Պատերազմական գործողությունների ընթացքում Իսրայելի անխափան ռազմական մատակարարումներն անգնահատելի գործոն էին դրա արդյունավետ ընթացքի համար:

Պատերազմի հետևանքով տարածաշրջանում ուժային հավասարակշռությունը փոխվեց մի կողմից՝ Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ թուրք-ադրբեջանական դաշինքի օգտին, զգալիորեն թուլացան Իրանի դիրքերը: Նման զարգացումներն էականորեն նպաստեցին Բաքվի և Թել Ավիվի միջև հարաբերություններում առավել անկաշկանդ առաջընթացին:

Հարկ է նշել, որ այս երկկողմ բազմաշերտ հարաբերությունները եղել են փոխշահավետ, ռազմավարական նշանակության, բայց որոշակիորեն նաև խնդրահարույց: Բանն այն է, որ առնվազն 2000-ականների երկրորդ 10-ամյակից սկսած՝ Ադրբեջանը եղել է իսրայելական ռազմարդյունաբերական արտադրանքի առանցքային գնորդներից: Ջուգահեռաբար ադրբեջանական նավթը կազմում է Իսրայելի ամբողջ

նավթային ներկրումների մոտ 30-40%-ը: Բացի այդ՝ նման նշանակության հարաբերությունների համար կարևորագույն գործոն է նաև Ադրբեջանի՝ շիայական մեծամասնությամբ բնակչություն ունեցող երկրի աշխարհագրական դիրքը, մասնավորապես Իսրայելի տարածաշրջանային առանցքային հակառակորդ Իրանին ուղղակիորեն սահմանակից լինելու հանգամանքը, որն էլ իր հերթին լայն հնարավորություններ էր ընձեռում առնվազն հետախուզության ոլորտում փոխգործակցության խորացման համար: Այս ուղեգիծը տեղավորվում էր Իսրայել պետության հիմնադիր վարչապետ Դավիդ Բեն-Գուրիոնի հեղինակած «շրջանակային» քաղաքականության տեսության տրամաբանության մեջ, որի նպատակը ռազմավարական բնույթի հարաբերությունների հաստատումն էր հրեական պետության հակառակորդ երկրների սահմանակից հարևանների հետ:

Բաքվի իշխանությունները տևական ժամանակ թույլատրել են իսրայելական հատուկ ծառայություններին իրենց տարածքում ստեղծել ենթակառուցվածքներ Իրանում տեղի ունեցող իրադարձություններին հետևելու համար: Անգամ օդանավակայան է ստեղծվել, ինչը նախատեսված էր տրամադրել Իսրայելին իրանական միջուկային օբյեկտների վրա հարձակման ծրագրերի իրականացման դեպքում:

Զուգահեռաբար Իսրայելը տարիներ շարունակ Բաքվին վաճառել է սպառազինության ամենաառաջատար համակարգեր, այդ թվում՝ բալիստիկ հրթիռներ, հակաօդային պաշտպանության և ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգեր, կամիկաձե անօդաչու թռչող սարքեր և այլն: Ըստ գաղտնազերծված փաստաթղթերի՝ Ասիայի ամենամեծ բեռնատար ավիաընկերություններից մեկը՝ ադրբեջանական «Silk Way»-ը, «Boeing 747» բեռնատար ինքնաթիռներով շաբաթական երեք չվերթ է իրականացնում Բաքվի և «Բեն Գուրիոն» միջազգային օդանավակայանի միջև:

Հրապարակված տեղեկատվության համաձայն՝ ընկերության «IL-76» ինքնաթիռները 2016 թ. ի վեր առնվազն 92 անգամ վայրէջք են կատարել Իսրայելի՝ մեծությամբ երկրորդ «Օվդա» օդանավակայանում: Մինչդեռ մինչև 44-օրյա պատերազմը, հաշվի առնելով նաև արցախյան հիմնախնդիրը որպես կրոնական հակամարտություն ներկայացնելու թուրք-ադրբեջանական ուղեգիծը, Բաքուն բավականաչափ զգուշանում էր Թել Ավիվի հետ հարաբերությունների՝ առավել հրապարակային բնույթից և բազմավեկտոր խորացումից՝ խուսափելով մի կողմից՝ «արաբամուսուլմանական աշխարհի», մյուս կողմից՝ հատկապես Իրանի զգայուն վերաբերմունքից, որը կարող էր կոտրել տասնամյակներ շարունակ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ձևավորված մուսուլմանական զգալի համախոհությունը արցախյան հիմնախնդրի առնչությամբ: Ընդհակառակը, ադրբեջանական դիվանագիտությունը, առանց միջոցների մեջ խտրողականության, ձգտում էր պաղեստինյան հիմնախնդրի հիմքով Իսրայելի դեմ միավորված մուսուլմանական

Միջկառավարական հանձնաժողովի նիստ

երկրներին համախմբել նաև Հայաստանի դեմ: Սա էր պատճառը, որ Բաքուն խիստ զգուշավոր էր Թել Ավիվի հետ հրապարակային մակարդակում համագործակցության խորացումից կամ առնվազն դրա բացահայտ բնույթից:

Ի տարբերություն Ադրբեջանի՝ Իսրայելը ձգտում էր Ադրբեջանի հետ առավել բաց, խոր և բազմաշերտ համագործակցության վերոնշյալ մուսուլմանական համախոհությունը ճեղքելու և հատկապես հակահրանական քաղաքականության տիրույթում առավել կարևոր ռազմավարական դիրքեր զբաղեցնելու նպատակով:

Վերոնշյալի համատեքստում, ինչպես արդեն նշվեց, իրավիճակը որակական փոփոխություններ կրեց ինչպես 44-օրյա պատերազմի հետևանքով, այնպես էլ ԱՄՆ-ի միջնորդությամբ 2020-21 թթ. մի շարք կարևոր արաբական երկրների և Իսրայելի միջև ստորագրված «Աբրահամյան համաձայնագրերի» ազդեցությամբ, երբ էականորեն թուլացավ Իսրայելի դեմ արաբամուսուլմանական համատեղ ճակատը:

Իրանի գործոնն Իսրայել-Ադրբեջան հարաբերություններում

Պատերազմի հետևանքով հարավկովկասյան տարածաշրջանից դուրս մնացած Իրանի՝ սեփական դիրքերի վերականգնմանը միտված նպատակային քայլերն ավելի խորացրին ճգնաժամն Իրան-Ադրբեջան հարաբերություններում: Մասնավորապես հետպատերազմյան տարածաշրջանում իր ազդեցությունը վերադարձնելու իրանական քաղաքականության հիմքում հետևյալ քաղաքական-քարոզչական թեզերն էին՝

1. Տարածաշրջանային պետությունների տարածքային ամբողջականության և տարածաշրջանում սահմանների անխախտելիության ապահովումը՝ որպես «կարմիր գիծ»:
2. Տարածաշրջանում օտար ուժերի և ահաբեկչական տարրերի ներկայության անթույլատրելիությունը:
3. Իսրայելական ներկայության խորացման բացառումը:
4. Տարածաշրջանի խնդիրները «3+3» ձևաչափի շրջանակում կարգավորելը:

Վերոնշյալ թեզերից երեքն ուղղակիորեն Ադրբեջանի դեմ էին, որոնք միտված էին ձախողելու պատերազմից անմիջապես հետո Բաքվի և Անկարայի կողմից շրջանառության մեջ դրված, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» կամ «թուրանական» միջանցք ծրագիրը, ինչպես նաև Իսրայելի հետ համագործակցությամբ Իրանին սահմանակից Արցախի օկուպացված շրջաններում «խելացի բնակավայրեր» կառուցելու ծրագրերի քողի ներքո հակաիրանական հետախուզական ենթակառուցվածքների ամրապնդման համար:

Նշվածի վառ օրինակ է Արցախի օկուպացված Կովսականի (Զանգելան) շրջանում իսրայելական համակողմանի ներկայության հանգամանքը, ինչը բացատրվում է Աղալը բնակավայրը որպես «խելացի գյուղ» վերակառուցելու աշխատանքներին մասնակցությամբ: Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների որակապես նոր մակարդակի բարձրացման վերաբերյալ տեղեկատվությունը տարածվեց դեռևս 2021 թ. ապրիլի 28-ին, երբ իսրայելական ԶԼՄ-ները հրապարակեցին Իսրայելի ԱԳ նախարարության և նախարար Գաբի Աշքենազիի հայտարարությունն առ այն, որ Իսրայել-Ադրբեջան միջկառավարական հանձնաժողովի նիստի ընթացքում նշվել է, թե ընթացիկ տարում Ադրբեջանն Իսրայելում կբացի դիվանագիտական կարգավիճակով առևտրային ներկայացուցչություն: «Սա կարևոր քայլ է Իսրայելում դեսպանություն բացելու համար...: Մենք կշարունակենք աշխատել Ադրբեջանի հետ կարևոր հարաբերություններ զարգացնելու և դրանք նոր ոլորտներում ընդլայնելու ուղղությամբ»,- նշել է Աշքենազին: Արդեն հուլիսի 29-ին Թել Ավիվում Միքայիլ Զաբարովի մասնակցությամբ տեղի ունեցավ ներկայացուցչության բացումը:

Իսրայել-Ադրբեջան հարաբերությունների խորացումն ընթանում էր Բաքու-Թեհրան հարաբերություններում խորացող լարվածությանը զուգահեռ: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ Գորիս-Կապան ավտոմայրուղու վրա իրանցի վարորդների ձերբակալության և ճանապարհի արգելափակման գործողությունից հետո ադրբեջանա-իրանական հարաբերությունները մտան հերթական ճգնաժամային շրջափուլ: Չնայած վերոնշյալ լարվածությունը նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին զգալիորեն մեղմվեց, բայց և այնպես հարաբերական կայունությունը ժամանակավոր բնույթ էր կրում:

2022 թ. փետրվարից մեկնարկած ուկրաինական ճգնաժամն իր ազդեցությունն ունեցավ նաև հարավկովկասյան իրողությունների, ինչպես նաև Թեհրանի հակառակորդների հակաիրանական քաղաքականության վրա: Մասնավորապես Ռուսաստան-Իրան ռազմական համագործակցության, հատկապես՝ «Ուկրաինայի ուղղությամբ Ռուսաստանին չդադարող ռազմական մատակարարումների» վերաբերյալ մեղադրանքներով արևմտյան դերակատարները հստակ ուղեգիծ որդեգրեցին՝ Թեհրանին Մոսկվայի հետ միասին միևնույն թշնամական առանցքում տեղավորելու և նրանց դեմ ընդհանուր համախոհության հասնելու տեսանկյունից: Այս քաղաքական ուղեգիծը կարևոր մանևրի հնարավորություն ընձեռեց նաև Բաքվին: Բանն այն է, որ Հայաստանի ինքնիշխան տարածքի դեմ 2022 թ. սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայի հետևանքով ալիևյան վարչակարգը բախվեց նաև կոշտ դիվանագիտական հակազդեցության, այդ թվում՝ Արևմուտքի և Իրանի կողմից: Ադրբեջանական արկածախնդրությունը կանգնեցվեց նաև Թեհրանի ջանքերով: Նման իրավիճակում ադրբեջանահայկական հիմնախնդիրների հետ կապված Արևմուտքի կոշտ դիրքորոշումը մեղմելու նպատակով Բաքուն ռազմավարական քաղաքական ընտրություն կատարեց՝ դիրքավորվելով հակիրանական ճամբարում, հետևաբար՝ նաև համակողմանիորեն խորացնելով Իրանի տարածաշրջանային հակառակորդների հետ հարաբերությունները: Մասնավորապես Ադրբեջան-Իրան հարաբերությունները ճգնաժամային նոր շրջափուլ տեղափոխվեցին, երբ Ադրբեջանն ակտիվ դերակատարում ստանձնեց քրդուհի Մահսի Ամինիի՝ հիջաբը սխալ կրելու պատճառով սպանության հետևանքով 2022 թ. սեպտեմբերից Իրանում ակտիվացած ներքաղաքական բողոքի ակցիաների հրահրման գործում, հատկապես՝ հանրապետության թյուրքախոս բնակչությամբ նահանգներում:

Զուգահեռաբար նոյեմբերի 18-ին Ադրբեջանի Միլլի Մեջլիսը հաստատեց Թել Ավիվում ադրբեջանական դեսպանատուն բացելու օրինագիծը:

Ադրբեջան-Իրան լարվածության վերջին շրջափուլը սկսվեց 2023 թ. հունվարի 27-ին Թեհրանում ադրբեջանական դեսպանատան դեմ իրականացված հարձակման պատճառով, որի հետևանքով սպանվել էր ներկայացուցչության անվտանգության ղեկավարը: Միջադեպի հարցում մեղադրելով ԻԻՀ իշխանություններին՝ Ադրբեջանը փակեց դեսպանատունը և Իրանից դիվանագիտական անձնակազմը դուրս բերեց: Լարվածության վերջին շրջափուլում քաղաքական, քարոզչական հարթություններում տեղ գտած արշավներից զատ՝ երկու երկրներում իրականացվեցին նաև «ազդեցության գործակալների» ցանցերի չեզոքացմանը միտված երբևէ տեղի ունեցած ամենամասշտաբային գործողությունները: Ադրբեջանահիրանական ճգնաժամի գագաթնակետը եղավ Ադրբեջանի կողմից Թել Ավիվում դեսպանության բացումը և Մուխթար Մամեդովին այդ երկրում առաջին ռեզիդենտ դեսպանի նշանակումը: Դրա արդյունքում Ադրբեջանը դարձավ շիայական մեծամասնությամբ բնակչություն ունեցող առաջին երկիրը, որը դիվանագիտական ներկայացուցչություն ունի Իսրայելում:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ իսրայելաադրբեջանական հարաբերությունները ռազմավարական բնույթի բազմաշերտ համագործակցություն է, որը տարածաշրջանային մակարդակում բավականաչափ խնդրահարույց՝ է և կարող է հանգեցնել էական անվտանգային մարտահրավերների:

ԱՄՆ արձագանքը Թուրքիայում տեղի ունեցած նախագահական ընտրություններին

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Մայիսին Թուրքիայում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որոնց արդյունքներով Էրդողանը վերընտրվեց նախագահի պաշտոնում: Այս նախագահական ընտրությունները ընթացան երկու փուլով, քանի որ առաջին փուլի ընթացքում թեկնածուներից ոչ մեկը չստացավ 50%-ից ավելի քվեներ: Հիմնական պայքարն ընթանում էր երկու թեկնածուների՝ նախագահ Էրդողանի և 6 ընդդիմադիր կուսակցությունները ներկայացնող «Ազգի դաշինքի» թեկնածու Քըլըչդարօղլուի միջև: Թուրքիայի ընտրությունները գտնվում էին ԱՄՆ-ի ուշադրության կենտրոնում: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Էրդողանի օրոք ԱՄՆ-Թուրքիա հարաբերություններում էական լարվածություն է առաջացել ամենատարբեր ոլորտներում: Էրդողանական Թուրքիան ձգտում է նվազագույնի հասցնել արևմտյան ազդեցությունն իր և իր տնտեսության վրա, ինչի նպատակը հնարավորինս ազատ գործողությունների հնարավորությունն է Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում, Միջին Ասիայում, Ռուսաստանի հետ հարաբերություններում և այլն: Այդ իսկ պատճառով Արևմուտքը նախընտրում էր Թուրքիայում ունենալ արևմտամետ գործիչ, որի հետ հնարավոր կլիներ աշխատել առանց լրացուցիչ գլխացավանքների: Քըլըչդարօղլուն կարող էր դառնալ նման արևմտամետ գործիչ, որի հետ Արևմուտքը հույս ուներ պակաս խնդրահարույց հարաբերություններ զարգացնել: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ն Քըլըչդարօղլուին աջակցելու առումով բաց մոտեցում չի ցուցաբերել, հանդես է եկել առավել զգուշավորությամբ՝ գիտակցելով Էրդողանի վերընտրման մեծ հավանականությունը: Ի վերջո, Էրդողանը երկրի ղեկին է՝ սկսած 2003 թ., սկզբում՝ որպես վարչապետ, իսկ հետո՝ արդեն նախագահ: Իր ձեռքի տակ ունենալով հսկայական պետական ռեսուրսներ և աջակիցների մեծ բանակ՝ Էրդողանին հաջողվեց պարտության մատնել գլխավոր հակառակորդ Քըլըչդարօղլուին՝ ապահովելով իր իշխանությունը մինչ 2028 թ.: Այս փուլում չափազանց կարևոր է դիտարկել Վաշինգտոնի արձագանքը թուրքական ընտրություններին՝ հասկանալու այն մեսիջները, որոնք ամերիկյան պաշտոնյաները արտահայտում են իրենց շնորհավորական ուղերձներում:

Ստորև կներկայացվի ԱՄՆ արձագանքը Թուրքիայում տեղի ունեցած ընտրությունների արդյունքներին, ինչպես պետական մակարդակով, այնպես էլ ԶԼՄ-ների շրջանում:

Պետական մակարդակով ԱՄՆ արձագանքը Էրդողանի վերընտրությանը

Ակնհայտ է, որ Միացյալ Նահանգներ-Թուրքիա հարաբերությունները լարված են վերջին տարիներին, ինչը մեծապես պայմանավորված է Էրդողանի անձով և վերջինիս՝ ավելի խորացող հարաբերություններով Ռուսաստանի հետ: Էրդողանի կողմից Թուրքիայի նախագահի պաշտոնում վերընտրվելն իր և իր աջակիցների կողմից դիտարկվում է նաև որպես հարված Արևմուտքին, մասնավորապես Միացյալ Նահանգներին, որն, ըստ Էրդողանի, փորձում էր միջամտել Թուրքիայի ընտրություններին և առաջ մղել Էրդողանի գլխավոր հակառակորդին: Էրդողանին հատկապես բարկացրել էր այն փաստը, որ Անկարայում ԱՄՆ դեսպանը հանդիպել էր իր քաղաքական ախոյան Քըլըչդարօղլուի հետ: Էրդողանը դա դիտարկել էր որպես միջամտություն Թուրքիայի ընտրություններին Քըլըչդարօղլուին աջակցություն ցույց տալու տեսքով:

Այսպիսով՝ դեռ ընտրապայքարի ժամանակ Էրդողանն ու իր աջակիցները թիրախավորում էին ԱՄՆ-ն և խոսում վերջինիս «դաս տալու» անհրաժեշտության մասին[1]:

Միևնույն ժամանակ, երբ Թուրքիայում ընտրությունները դեռ ընթացքի մեջ էին, ԱՄՆ պաշտոնյաները խուսափում էին լրացուցիչ մեկնաբանություններից և առավել ևս իրենց նախընտրությունները հանրայնո-

րեն բարձրաձայնելուց՝ զգուշանալով Էրդողանի հետ հարաբերություններն էլ ավելի սրելուց:

ԱՄՆ պետդեպարտամենտի մամլո ասուլիսների ժամանակ պարբերաբար հնչել է Թուրքիայի ընտրություններին վերաբերող հարցեր: Այդուհանդերձ, խոսնակը մշտապես շեշտում էր ԱՄՆ պաշտոնական տեսակետն առ այն, որ «ԱՄՆ-ն կշարունակի խորացնել Թուրքիայի հետ դաշնակցային հարաբերություններն ու համագործակցությունը՝ անկախ նրանից, թե ով կընտրվի Թուրքիայի նախագահ»[2]:

Ընտրությունների վերջնարդյունքներից հետո ԱՄՆ-ն նախագահի մակարդակով շնորհավորեց Էրդողանին. Ջո Բայդենը հեռախոսով խոսեց Էրդողանի հետ՝ շնորհավորելով նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ երկու նախագահները «արտահայտեցին երկուստեք հանձնառություն՝ շարունակելու աշխատել միասին որպես սերտ գործընկերներ՝ խորացնելու համագործակցությունը երկու երկրների և ժողովուրդների միջև»[3]:

Էրդողանին շնորհավորել է նաև ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը՝ նշելով. «Թուրքիան ՆԱՏՕ-ի արժեքավոր դաշնակից և գործընկեր է ԱՄՆ-ի համար»[4]:

ԱՄՆ մամուլի արձագանքը Էրդողանի վերընտրությանը

Էրդողանի վերընտրման մասին ԱՄՆ մամուլի արձագանքի առումով կարելի է առանձնացնել մի քանի հիմնական դրույթներ:

• Էրդողանի վերընտրմամբ Թուրքիայում կամրապնդվի ավտորիտարիզմը:

Ըստ ամերիկյան մամուլի՝ Էրդողանն իր վերընտրվելու և հակառակորդին պարտության մատնելու համար գործի էր դրել պետական ողջ ապարատը, օգտվել ՋԼՄ-ների նկատմամբ վերահսկողությունից և իրեն ձեռնտու ընտրական օրենքներից: Այդ իսկ պատճառով նախագահի պաշտոնում Էրդողանի վերընտրվելը դիտարկվում է որպես «հաղթանակ ողջ աշխարհի ավտոկրատիաների համար»: Ավելին, ևս հինգ տարով Էրդողանի պաշտոնավարումը առավել կխորացնի պետական ինստիտուտների խարխլումը՝ արմատավորելով ավտորիտար քաղաքական բարքերը[5]:

Մեկ այլ լրատվական ևս շեշտադրում է այն, որ Էրդողանի հաղթանակով վերջինս ամրապնդեց իր «ավելի խորացող ավտորիտար կառավարումը»: Նաև սպասվում է, որ Էրդողանը կներկայացնի նոր սահմանադրություն, որում կներառի այն բոլոր փոփոխությունները, որոնց ձգտում է իր պահպանողական և կրոնական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը[6]:

• Թուրքիան կշարունակի խորացնել կապերը Ռուսաստանի հետ՝ հեռանալով արևմտյան ուղեծրից:

Ամերիկյան մամուլը նաև անհանգստացած է Թուրքիայի հակաարևմտյան դիրքորոշմամբ: Էրդողանը բազմիցս պնդել է, որ Միացյալ Նահանգներն այս ընտրություններում աջակցում է իր քաղաքական հակառակորդին, մինչդեռ վերջինիս քաղաքական ախոյան Քըլըչդարօղլուն իր հերթին մեղադրում էր Ռուսաստանին ընտրություններին միջամտելու մեջ:

Նա նույնիսկ իր թվիթերյան բլոգում ռուսերենով գրառում էր կատարել՝ զգուշացնելով Ռուսաստանին չմիջամտել ընտրություններին: Էրդողանն ավելի է հեռանում տրանսատլանտյան ուղեծրից և ավելի սերտ կապեր հաստատում այլ ավտոկրատ պետությունների՝ ներառյալ Ռուսաստանի հետ: Թուրքիայի տնտեսական խնդիրները մեղմելու համար Էրդողանը կարողացավ ֆինանսական աջակցություն ստանալ Ռուսաստանից, Սաուդյան Արաբիայից, Արաբական Միացյալ Էմիրություններից և Քաթարից Կենտրոնական բանկի վարկերի տեսքով, ինչը թույլ տվեց նրան ընտրություններին ընդառաջ բարձրացնել աշխատավարձերը[7]:

Էրդողանի վերընտրվելու լուրը ողջույնների ալիք առաջացրեց մի շարք ավտորիտար երկրներում, որոնք առաջինը շնորհավորական ուղերձներ հղեցին վերընտրված նախագահ Էրդողանին: Առաջինը շնորհավորական ուղերձներ հղած երկրների շարքում էին Ռուսաստանը, Քաթարը, Լիբիան, Ալժիրը, Հունգարիան, Իրանը և Պաղեստինի իշխանությունները: Այդուհանդերձ, թիրախում առավել շատ Ռուսաստանն էր, և հատուկ ուշադրություն էր դարձված Վլադիմիր Պուտինի շնորհավորական ուղերձին, որտեղ նշվում էր, որ ընտրությունները «...հստակ ապացույց են այն բանի, որ թուրք ժողովուրդը աջակցում է Էրդողանին՝ ամրապնդելու պետական ինքնիշխանությունը անկախ արտաքին քաղաքականություն վարելու հարցում»[8]:

Ըստ ԱՄՆ լրատվականների՝ չնայած Թուրքիան ՆԱՏՕ-ի դաշնակիցն է՝ այնուամենայնիվ, Էրդողանի օրոք երկիրն ավելի սերտ կապեր է հաստատել Ռուսաստանի հետ և էլ ավելի խորացրել ավտորիտար կառավարումը:

Լրատվականների համաձայն՝ նրա այս քաղաքականությունը ազդեցություն կունենա Թուրքիայի սահմաններից դուրս, որն իր հերթին ռազմավարական կարևոր դիրք ունի Եվրոպայի և Ասիայի խաչմերուկում[9]:

• Թուրքիան կընդլայնի իր աշխարհաքաղաքական դիրքերը՝ օգտվելով Արևմուտք-Ռուսաստան պայքարից:

Ամերիկյան մամուլի համաձայն՝ Էրդողանը այս վերընտրման ընթացքում, չնայած բոլոր խնդիրներին, ուներ մեկ առավելություն, այն է՝ Էրդողանի «ճկուն աշխարհաքաղաքական մանևրումը, որի շնորհիվ Թուրքիան ընդլայնել է իր ազդեցությունը տարածաշրջանում, հատկապես Արևմուտք-Ռուսաստան ընդլայնված հակամարտությունում»: Ավելին, նշվում է, որ Էրդողանը ամրապնդել է իր դիրքերը Թուրքիայում՝ դիրքավորվելով որպես համաշխարհային կարևոր առաջնորդ, որը ներգրավված է Ռուսաստանի և Ուկրաինայի միջև բանակցություններում: Նրան հաջողվել է զենք վաճառել Կիևին՝ միևնույն ժամանակ ընդլայնելով տնտեսական կապերը Մոսկվայի հետ:

Իսկ արևմտյան դաշնակիցների հետ հարաբերություններում Էրդողանը լիովին օգտագործում է ձեռքի տակ եղած լծակները, ինչպես, օրինակ, Շվեդիայի անդամակցության խափանումը ՆԱՏՕ-ին[10]:

ԱՄՆ-ում գիտակցում կա, որ Էրդողանին հաջողվում է ՆԱՏՕ-ի դաշնակից լինելով հանդերձ՝ սերտ կապեր հաստատել ԱՄՆ-ի հակառակորդների, մասնավորապես՝ Ռուսաստանի և Չինաստանի հետ: Թուրքիան իր շահերն է սպասարկում՝ միջամտելով երկու բևեռների միջև հավասարակշռությանը: Էրդողանին հաջողվում է դատապարտել Ռուսաստանի՝ Ուկրաինա ներխուժումը՝ միևնույն ժամանակ հրաժարվելով սանկցիաներ կիրառել Ռուսաստանի նկատմամբ:

Փոխարենը ընդլայնվում են թուրքական առևտրային կապերը Մոսկվայի հետ: Նա Վլադիմիր Պուտինին անվանում է «իմ ընկեր» և խոչընդոտում ՆԱՏՕ-ի ընդլայնման ջանքերին՝ թույլ չտալով Ֆինլանդիայի և Շվեդիայի ընդգրկումը ՆԱՏՕ-ի կազմում[11]:

Մեծ հաշվով մամուլի արձագանքներից և փորձագիտական շրջանակների տեսակետների ուսումնասիրություններից կարելի է հստակ հետևություններ անել ամերիկյան մոտեցումների մասին Թուրքիայում կայացած ընտրությունների և Էրդողանի վերընտրվելու վերաբերյալ: Ակնհայտ է, որ Միացյալ Նահանգներում առանձնապես ոգևորված չեն Էրդողանի հաղթանակով, սակայն ստիպված են լինելու շարունակել համագործակցությունը Էրդողանի և նրա քաղաքական թիմի հետ՝ ունենալով ինչպես ընդհանուր շահեր, այնպես էլ խոր հակասություններ: ■

Հղումներ

1. Տես Stamouli N., 2023's most important election: Turkey https://www.politico.eu/article/turkey-2023-election-erdogan-kilicdaroglu/, (30.05.2023):
2. Տես Department Press Briefing – May 15, 2023, https://www.state.gov/briefings/department-press-briefing-may-15-2023/ (30.05.2023):
3. Տես Readout of President Biden's Call with President Erdogan of Türkiye, https://www.whitehouse.gov/briefing-room/statements-releases/2023/ 05/29/readout-of-president-bidens-call-with-president-erdogan-of-turkiye-2/, (30.05.2023):
4. Տես https://twitter.com/SecBlinken/status/1662928629955805184?s=20, (30.05.2023):
5. Aydintasbas A., Opinion, Erdogan Won Turkey's Election, But this is not the End of the Story, https://www.washingtonpost.com/opinions/2023/05/29/turkey-election-results-erdogan-challenge/, (31.05.2023):
6. Fraser S., Bilginsoy Z., https://apnews.com/article/turkey-presidential-election-erdogan-kilicdaroglu-d4f8adee43d7cc807b39d1f47ef4baea, (31.05.2023):
7. Տես Aydintasbas A., նշվ. աշխ.:
8. Տես Tuysuz G., Gezer Y., Qiblawi T., Erdogan wins Turkish election, extending rule to third decade, https://edition.cnn.com/2023/05/28/europe/turkey-president-runoff-polls-erdogan-intl/index.html, (31.05.2023):
9. Տես Elden N., Austin H., President Recep Erdoğan re-elected for unprecedented third term as Turkey's president, https://www.nbcnews.com/news/world/turkey-election-president-recep-erdogan-runoff-kemal-kilicdaroglu-nato-rcna86052, (01.06.2023):
10. Տես Malsin J., Kivilcim E., https://www.wsj.com/articles/turkeys-erdogan-claims-victory-in-presidential-election-889d8cde, (01.06.2023):
11. Տես Hubbard B., President Erdogan Wins Re-Election After Biggest Challenge yet, https://www.nytimes.com/live/2023/05/28/world/turkey-election-results-erdogan#:~:text=Turkey%20ElectionsPresident%20Erdogan%20Wins,to%20the%20country%27s%20electoral%20authority, (01.06.2023):

Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգը

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Ռուսաստանի Դաշնությունը 2023-ի մարտի 31-ին հրապարակել է ՌԴ արտաքին քաղաքականության նոր հայեցակարգը: Այս հայեցակարգը ռազմավարական պլանավորման փաստաթուղթ է և ՌԴ արտաքին քաղաքականության ոլորտում ազգային շահերի, հիմնական սկզբունքների, ռազմավարական նպատակների, հիմնական խնդիրների և ՌԴ արտաքին քաղաքականության առաջնահերթ ոլորտների վերաբերյալ տեսակետների համակարգ[1]:

Փաստաթղթում նշվում է, որ ՌԴ հայեցակարգի իրավական հիմքը ՌԴ Սահմանադրությունն է, միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը, ՌԴ միջազգային պայմանագրերը, դաշնային օրենքները և իրավական ակտերը:

Սույն հայեցակարգը սահմանում է ՌԴ Ազգային անվտանգության ռազմավարության որոշ դրույթներ, հաշվի է առնում միջազգային հարաբերությունների ոլորտի վրա ազդող այլ ռազմավարական պլանավորման փաստաթղթերի հիմնական դրույթները:

Փաստաթղթում առանձնահատուկ ընդգծվում է ՌԴ տեղը աշխարհում՝ կյանքի բոլոր ոլորտներում իր նշանակալի ռեսուրսներով, առաջատար միջպետական կազմակերպությունների և միությունների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամակցությամբ՝ որպես միջուկային գերտերություն և ԽՍՀՄ-ի իրավահաջորդ պետություն:

Ռուսաստանը, հաշվի առնելով Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակում իր վճռական ներդրումը, ինչպես նաև իր ակտիվ դերը միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգի ստեղծման և գաղութատիրության համաշխարհային համակարգի վերացման գործում, հանդես է գալիս որպես ինքնիշխան կենտրոններից մեկը:

ՌԴ-ն կատարում է պատմականորեն եզակի առաքելություն. պահպանել ուժերի գլոբալ հավասարակշռությունը և կառուցել բազմաբևեռ միջազգային համակարգ՝ միավորող և կառուցողական օրակարգի հիման վրա պայմաններ ապահովելով մարդկության խաղաղ, առաջադեմ զարգացման համար[2]:

Համաձայն հայեցակարգի՝ Ռուսաստանը վարում է անկախ և բազմավեկտոր արտաքին քաղաքական կուրս՝ թելադրված իր ազգային շահերից և գիտակցելով գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու իր հատուկ պատասխանատվությունը:

Ռուսաստանի վերաբերմունքը այլ պետությունների և միջպետական միավորումների նկատմամբ պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ նրանց քաղաքականության կառուցողական, չեզոք կամ անբարյացակամ բնույթով:

Անդրադառնալով նոր աշխարհակարգի ձևավորմանը՝ փաստաթղթում նշվում է, որ մարդկությունն անցնում է հեղափոխական փոփոխությունների դարաշրջան, բազմաբևեռ աշխարհի ձևավորումը շարունակվում է:

Համաշխարհային զարգացման ոչ հավասարակշռված մոդելը, որը դարեր շարունակ ապահովում էր գաղութատիրական տերությունների գերազանցող տնտեսական աճը, յուրացնելով կախյալ տարածքների և պետությունների ռեսուրսները Ասիայում, Աֆրիկայում և արևմտյան կիսագնդում, անշրջելիորեն դառնում է անցյալ:

Շարունակվող փոփոխությունները մերժվում են մի շարք պետությունների կողմից, որոնք սովոր են մտածել համաշխարհային տիրապետության և նեոգաղութատիրության տրամաբանությամբ: Նրանք հրաժարվում են ճանաչել բազմաբևեռ աշխարհի իրողությունները և դրա հիման վրա համաձայնության գալ նոր աշխարհակարգի պարամետրերի և սկզբունքների շուրջ:

Փորձ է արվում զսպել պատմության բնական ընթացքը, վերացնել մրցակիցներին ռազմաքաղաքական և տնտեսական ոլորտներում, ճնշել այլախոհությունը: Կիրառվում է անօրինական գործիքների

և մեթոդների լայն շրջանակ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը շրջանցող հարկադրանքի միջոցների (պատժամիջոցների) կիրառումը, պետական հեղաշրջումներ հրահրելը, զինված հակամարտությունները, սպառնալիքները, շանտաժը, որոշակի սոցիալական խմբերի և ամբողջ ազգերի գիտակցության շահարկումը, հարձակողական և դիվերսիոն գործողությունների իրականացումը տեղեկատվական տարածքում[3]:

Արդյունքում կործանարար ազդեցությունը տարածվում է միջազգային հարաբերությունների բոլոր ոլորտների վրա:

Ավելի դժվար է դառնում անդրազգային մարտահրավերներին և սպառնալիքներին, ինչպիսիք են զենքի անօրինական առևտուրը, զանգվածային ոչնչացման զենքերի և դրանց առաքման միջոցների տարածումը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը անօրինական նպատակներով, միջազգային ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցագործությունը, անօրինական միգրացիան, հավաքական արձագանքներ մշակելը:

Միջազգային հարաբերություններում ուժի գործոնի դերը մեծանում է, հակամարտությունների տարածքը ընդլայնվում է մի շարք ռազմավարական կարևոր տարածաշրջաններում:

Միջազգային իրավունքի խախտմամբ ռազմական ուժի կիրառումը, զինված հակամարտությունների սրումը տարածաշրջաններում մեծացնում են գլոբալ անվտանգության սպառնալիքը, մեծացնում են խոշոր պետությունների միջև բախումների ռիսկերը, այդ թվում՝ մեծանում է միջուկային տերությունների մասնակցությամբ հակամարտությունների ծավալման, դրանց՝ տեղական, տարածաշրջանային և գլոբալ պատերազմի վերածվելու հավանականությունը:

Միայն ուժերի և շահերի հավասարակշռության հիման վրա ողջ միջազգային հանրության ներուժի և բարեխիղճ ջանքերի միավորումը կարող է ապահովել մեր ժամանակի բազմաթիվ խնդիրների արդյունավետ լուծումը, մեծ ու փոքր պետությունների խաղաղ առաջընթացն ու զարգացումը:

Հզորացող Ռուսաստանը համարելով ժամանակակից աշխարհի զարգացման առաջատար կենտրոններից մեկը, նրա անկախ արտաքին քաղաքականությունը համարելով վտանգ արևմտյան գերիշխանությանը՝ ԱՄՆ-ն և դաշնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում ուկրաինական ուղղությամբ հակառուսական քաղաքականության սրման և նոր տեսակի հիբրիդային պատերազմի սանձազերծման համար[4]:

Այն ուղղված է Ռուսաստանին ամեն կերպ թուլացնելուն, այդ թվում՝ խաթարելու նրա ստեղծագործական, քաղաքակրթական դերը, հզորությունը, տնտեսական և տեխնոլոգիական հնարավորություններ՝ սահմանափակելով նրա ինքնիշխանությունը արտաքին և ներքին քաղաքականության մեջ, ոչնչացնելով տարածքային ամբողջականությունը:

Ի պատասխան Արևմուտքի ոչ բարեկամական գործողությունների՝ Ռուսաստանը մտադիր է բոլոր հասանելի միջոցներով պաշտպանել իր գոյության և ազատ զարգացման իրավունքը:

Այդ առումով առաջնորդվելով ինքնիշխան հավասարության և միմյանց շահերի հարգման սկզբունքներով՝ Ռուսաստանի Դաշնությունը պատրաստ է երկխոսության և համագործակցության:

Ռուսաստանն իրեն չի համարում Արևմուտքի թշնամին, չի մեկուսանում նրանից, չունի թշնամական մտադրություններ նրա նկատմամբ և ակնկալում է, որ ապագայում արևմտյան հանրությանը պատկանող պետությունները կգիտակցեն իրենց առճակատման քաղաքականության և հեգեմոն նկրտումների անիմաստությունը[5]:

Այս փաստաթղթում հստակեցված են ՌԴ արտաքին քաղաքականության ռազմավարական նպատակներն ու հիմնական խնդիրները, արտաքին քաղաքականության ոլորտում սահմանված են ՌԴ ազգային շահերը.

1) ՌԴ սահմանադրական կարգի, ինքնիշխանության, անկախության, պետական և տարածքային ամբողջականության պաշտպանությունը կործանարար արտաքին ազդեցությունից,

2) ռազմավարական կայունության պահպանումը, միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդումը,

3) միջազգային հարաբերությունների իրավական հիմքերի ամրապնդումը,

4) Ռուսաստանի քաղաքացիների իրավունքների, ազատության և օրինական շահերի պաշտպանությունը և ռուսական կազմակերպությունների պաշտպանությունն օտարերկրյա անօրինական ոտնձգություններից,

5) անվտանգ տեղեկատվական տարածքի զարգացումը, ռուս հասարակության պաշտպանությունը կործանարար օտարերկրյա տեղեկատվությունից և հոգեբանական ազդեցությունից,

6) ռուսական ավանդական հոգևոր և բարոյական արժեքների ամրապնդումը, ՌԴ բազմազգ ժողովրդի մշակութային և պատմական ժառանգության պահպանումը և այլն:

Բխելով ՌԴ ազգային շահերից և ռազմավարական ազգային առաջնահերթություններից՝ պետության արտաքին քաղաքական գործունեությունն ուղղված է հետևյալ ռազմավարական նպատակների իրականացմանը.

1) ՌԴ անվտանգության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովումը,

2) ՌԴ-ն՝ որպես ժամանակակից աշխարհի պատասխանատու, ազդեցիկ և անկախ կենտրոններից մեկի դիրքերի ամրապնդումը և այլն:

ՌԴ արտաքին քաղաքականության ռազմավարական նպատակներն իրագործվում են հետևյալ հիմնական խնդիրների իրականացմամբ.

1) արդար և կայուն աշխարհակարգի ձևավորում,

2) միջազգային խաղաղության և անվտանգության, ռազմավարական կայունության պահպանում, պետությունների և ժողովուրդների խաղաղ համակեցության և առաջանցիկ զարգացման ապահովում,

3) աջակցություն ընդհանուր մարտահրավերներին և սպառնալիքներին՝ ներառյալ տարածաշրջանային հակամարտություններին և ճգնաժամերին, միջազգային հանրության արդյունավետ համալիր պատասխանների մշակմանը,

4) կառուցողական մտածողությամբ օտարերկրյա պետությունների և նրանց ասոցիացիաների հետ փոխշահավետ և իրավահավասար համագործակցության զարգացում, բազմակողմ դիվանագիտության մեխանիզմների կիրառմամբ ռուսական շահերի հաշվի առնում,

5) օտարերկրյա պետությունների և նրանց միավորումների հակառուսական գործունեությանը հակազդում, պայմանների ստեղծում նման գործունեության դադարեցման համար,

6) հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների ձևավորում, աջակցություն նրանց տարածքներում լարվածության և հակամարտությունների օջախների առաջացման կանխմանն ու վերացմանը և այլն:

Սահմանելով ՌԴ արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղությունները՝ Ռուսաստանը ձգտում է ձևավորել միջազգային հարաբերությունների այնպիսի համակարգ, որը կապահովի հուսալի անվտանգություն, մշակութային և քաղաքակրթական ինքնության պահպանում, զարգացման հավասար հնարավորություններ բոլոր պետությունների համար՝ անկախ նրանց աշխարհագրական դիրքից,

տարածքի չափից, ժողովրդագրական, ռեսուրսային և ռազմական ներուժից:

Միջազգային հարաբերությունների համակարգը պետք է լինի բազմաբևեռ և հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.

1) պետությունների ինքնիշխան իրավահավասարություն,

2) միջազգային գործերում հեգեմոնիայի մերժում,

3) շահերի և փոխշահավետության վրա հիմնված համագործակցություն,

4) ներքին գործերին չմիջամտելը,

5) միջազգային իրավունքի գերակայություն միջազգային հարաբերությունների կարգավորման գործում,

6) անվտանգության անբաժանելիություն՝ գլոբալ և տարածաշրջանային առումներով և այլն[6]:

Ռազմավարական կայունություն ապահովելու, գլոբալ պատերազմի սանձազերծման նախադրյալները և միջուկային ու զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքերի օգտագործման ռիսկերը վերացնելու, ինչպես նաև միջազգային անվտանգության նորացված ճարտարապետություն ձևավորելու համար ՌԴ-ի համար առաջնահերթություն է.

1) ռազմավարական զսպումը, որը կանխում է միջպետական հարաբերությունների այնպիսի մակարդակի սրումը, որը կարող է հրահրել ռազմական հակամարտություններ, այդ թվում՝ միջուկային և զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքերի կիրառմամբ,

2) միջազգային պայմանագրերի համակարգի ամրապնդումը և զարգացումը ռազմավարական կայունության, սպառազինությունների վերահսկման, զանգվածային ոչնչացման զենքերի, դրանց առաքման միջոցների, դրանց արտադրության հետ կապված ապրանքների ու տեխնոլոգիաների տարածման կանխարգելման ոլորտներում,

3) ռազմավարական կայունության պահպանման, սպառազինությունների վերահսկման ռեժիմների և զանգվածային ոչնչացման բոլոր տեսակի զենքերի, դրանց առաքման միջոցների չտարածման միջազգա-

յին քաղաքական հիմքերի ամրապնդումը և զարգացումը,

4) կանխել սպառազինությունների մրցավազքը և բացառել դրա տեղափոխումը նոր միջավայրեր, պայմաններ ստեղծել միջուկային պոտենցիալների հետագա փուլային կրճատման համար,

5) գլոբալ մակարդակով միջուկային անվտանգության ամրապնդումը և միջուկային ահաբեկչական գործողությունների կանխումը,

6) ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման բնագավառում համագործակցության զարգացումը,

7) ամրապնդել զանգվածային ոչնչացման զենքերի և դրանց առաքման միջոցների չտարածման և վերահսկման բազմակողմ մեխանիզմների դերը միջազգային անվտանգության ապահովման ոլորտներում և այլն[7]:

Տարածաշրջանային անվտանգությունն ամրապնդելու, տեղական և տարածաշրջանային պատերազմները կանխելու, ներքին զինված հակամարտությունները լուծելու համար ՌԴ-ն մտադիր է առաջնահերթ ուշադրություն դարձնել.

1) քաղաքական և դիվանագիտական միջոցների ընդունմանը,

2) դաշնակիցների և գործընկերների հետ ռազմական, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը,

3) ՌԴ շահերի համար կարևոր տարածաշրջաններում տարածաշրջանային անվտանգության ապահովման և ճգնաժամերի կարգավորման մեխանիզմների կատարելագործմանը,

4) խաղաղապահ գործունեության մեջ ՌԴ դերի բարձրացմանը, ՄԱԿ-ի և ՀԱՊԿ-ի խաղաղապահ և հակաճգնաժամային ներուժի ամրապնդմանը և այլն:

Փաստաթղթում սահմանվում է ՌԴ ազգային շահերից բխող հեռահար ռազմավարական նպատակը:

Ռուսաստանի անվտանգության, կայունության, տարածքային ամբողջականության և սոցիալ-տնտեսական զարգացման, որպես համաշխարհային զարգացման և քաղաքակրթության ազդեցիկ ինքնիշխան կենտրոններից մեկի դիրքերի ամրապնդման համար ամենակարևորը կայուն, երկարաժամկետ բարիդրացիական հարաբերությունների ապահովումն է և միավորումը՝ համատեղ պետականության դարավոր ավանդույթներով, տարբեր ոլորտներում խոր փոխկապակցվածությամբ, ընդհանուր լեզվով, սերտ մշակույթներով, ԱՊՀ անդամ երկրների և Ռուսաստանի հետ կապված այլ հարևան պետությունների հետ տարբեր ոլորտներում առկա ներուժի առկայությամբ[8]:

Փաստաթղթում կարևորվում են հատկապես ՌԴ արտաքին քաղաքականության տարածաշրջանային ուղղությունները:

Այս առումով ՌԴ-ն մտադիր է առաջնահերթ ուշադրություն դարձնել.

1) զինված հակամարտությունների կանխմանը և կարգավորմանը, միջպետական հարաբերությունների բարելավմանը և կայունության ապահովմանը մերձավոր արտերկրում, «գունավոր հեղափոխությունների» ճնշմանը, ՌԴ դաշնակիցների ու գործընկերների ներքին գործերին միջամտելու այլ փորձերին,

2) ապահովել Ռուսաստանի, նրա դաշնակիցների և գործընկերների երաշխավորված պաշտպանությունը աշխարհում ռազմաքաղաքական իրավիճակի ցանկացած զարգացման գործում, ամրապնդել տարածաշրջանային անվտանգության համակարգը, ՀԱՊԿ-ի և այլ ձևաչափերի փոխգործակցությունը Ռուսաստանի և նրա դաշնակիցների ու գործընկերների միջև պաշտպանության և անվտանգության ոլորտում,

3) հակազդել Ռուսաստանի անվտանգությանը սպառնացող անբարյացակամ պետությունների ռազմական ենթակառուցվածքի տեղակայմանը կամ ամրապնդմանը,

4) Բելառուսի Հանրապետության հետ ռազմավարական փոխգործակցություն, փոխշահավետ, համապարփակ, բազմակողմ համագործակցության համակարգի ամրապնդում՝ հիմնված ԱՊՀ և ԵԱՏՄ ներուժի համակցման վրա, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի պետությունների միջև փոխգործակցության մեխանիզմների կիրառում,

5) երկարաժամկետ հեռանկարում Եվրասիայում միասնական տնտեսական և քաղաքական տարածքի ձևավորում,

6) մերձկասպյան հինգ պետությունների գոտում համագործակցության ամրապնդում և այլն:

ՌԴ ռազմավարական նպատակներին հասնելու և արտաքին քաղաքականության հիմնական խնդիրների կատարման համար առանձնահատուկ նշանակություն ունեն կապերի համակողմանի խորացումը և համակարգումը եվրասիական մայրցամաքում տեղակայված հավատարիմ և բարեկամ ինքնիշխան գլոբալ կենտրոնների հետ, որոնց սկզբունքները համընկնում են ապագա աշխարհակարգի և համաշխարհային քաղաքականության առանցքային հարցերի լուծման ռուսական մոտեցումների հետ:

Փաստաթղթում առանձնահատուկ կարևորվում են ՌԴ-ի հարաբերությունները ՉԺՀ-ի և Հնդկաստանի հետ:

Ռուսաստանը նպատակ ունի էլ ավելի ամրապնդել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ համապարփակ գործընկերությունը և ռազմավարական համագործակցությունը՝ առաջնահերթություն տալով բոլոր ոլորտներում փոխշահավետ համագործակցության զարգացմանը, միջազգային ասպարեզում փոխօգնության և համակարգման ամրապնդմանը:

Ռուսաստանը կշարունակի հաստատել առանձնապես արտոնյալ ռազմավարական գործընկերություն Հնդկաստանի Հանրապետության հետ՝ փոխշահավետ հիմունքներով բոլոր ոլորտներում փոխգործակցության մակարդակը բարձրացնելու և ընդլայնելու համար, ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնելու երկկողմ առևտրի, ներդրումների և տեխնոլոգիական ծավալների ավելացմանը:

Ռուսաստանը ձգտում է Եվրասիան վերափոխել խաղաղության, կայունության, փոխադարձ վստահության, զարգացման և բարգավաճման միասնական համամայրցամաքային տարածքի: Այս նպատակը ներառում է լայն ինտեգրացիա՝ Եվրասիական մեծ գործընկերության ձևավորում, ԵԱՏՄ-ի, ՇՀԿ-ի և Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի վրա հիմնված Եվրասիայի բոլոր պետությունների, տարածաշրջանային կազմակերպությունների և ասոցիացիաների ներուժի համատեղում:

Նախատեսվում է ԵԱՏՄ-ի և Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության պլանների իրագործում, Եվրասիայի տնտեսական և տրանսպորտային փոխկապակցվածության ամրապնդում, Բայկալ-Ամուր և Անդրսիբիրյան երկաթուղիների արդիականացում, «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի վաղաժամկետ գործարկում, «Եվրոպա-Արևմտյան Չինաստան» միջազգային տրանսպորտային միջանցքի, Կասպից և Սև ծովերի տարածաշրջանների, հյուսիսային ծովային ճանապարհի, Ռուսաստան-Մոնղոլիա-Չինաստան տնտեսական միջանցքի, ինչպես նաև թվային զարգացման ոլորտում տարածաշրջանային համագործակցության և էներգետիկ գործընկերության ձևավորում[9]:

Փաստաթղթում առանձնացվում են իսլամական աշխարհի հետ հարաբերությունները՝ նշելով, որ բարեկամ իսլամական քաղաքակրթության պետությունները բազմաբևեռ աշխարհի իրողություններում ունեն համաշխարհային զարգացման անկախ կենտրոն դառնալու լայն հեռանկարներ:

Ռուսաստանը ձգտում է ամրապնդել համապարփակ փոխշահավետ համագործակցությունը Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրների հետ՝ հարգելով նրանց հասարակական-քաղաքական կառույցներն ու ավանդական, հոգևոր և բարոյական արժեքները:

Այդ նպատակով Ռուսաստանի Դաշնությունը մտադիր է առաջնահերթություն տալ.

1) Իրանի Իսլամական Հանրապետության հետ համապարփակ և վստահելի փոխգործակցության զարգացմանը, Սիրիայի Արաբական Հանրապետությանը համակողմանի աջակցությանը, բազմաբևեռ, փոխշահավետ գործընկերության խորացմանը Թուրքիայի Հանրապետության, Սաուդյան Արաբիայի Թագավորության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության և Իսլամական համագործակցության կազմակերպության մյուս անդամ պետությունների հետ:

2) Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում տարածաշրջանային անվտանգության և համագործակցության կայուն, համապարփակ ճարտարապետության ձևավորմանը՝ հիմնված բոլոր պետությունների և տարածաշրջանների միջպետական միավորումների ներուժի միավորման վրա՝ ներառյալ Արաբական պետությունների լիգան և Համագործակցության խորհուրդը:

3) Ծոցի արաբական երկրների հետ Ռուսաստանը մտադիր է ակտիվորեն համագործակցել բոլոր շահագրգիռ պետությունների և միջպետական ասոցիացիաների հետ՝ Պարսից ծոցում հավաքական անվտանգության ապահովման ռուսական հայեցակարգը կյանքի կոչելու համար՝ այս նախաձեռնության իրականացումը համարելով կարևոր քայլ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում իրավիճակի կայուն և համապարփակ կարգավորման ուղղությամբ:

4) Հարթել հակասությունները և կարգավորել հարաբերությունները Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրների, ինչպես նաև այդ պետությունների և նրանց հարևանների հետ, առաջին հերթին՝ Իրանի Իսլամական Հանրապետության և արաբական երկրների, Սիրիայի Արաբական Հանրապետության և նրա հարևանների, արաբական երկրների միջև, ինչպես նաև Իսրայել պետության, նաև Պաղեստինի հարցի համապարփակ և տևական լուծմանն ուղղված ջանքերի ուղղությամբ:

5) Նպաստել զինված հակամարտությունների կարգավորմանը և հաղթահարմանը Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում, Հարավային, Հարավարևելյան Ասիայում և այլ տարածաշրջաններում, որտեղ գտնվում են Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրները:

6) Օգտագործել Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ պետությունների տնտեսական ներուժը՝ Եվրասիական մեծ գործընկերության ձևավորման համար:

Ռուսաստանը համերաշխ է աֆրիկյան պետությունների հետ՝ ավելի արդար, բազմաբևեռ աշխարհ ստեղծելու և սոցիալ-տնտեսական անհավասարությունը վերացնելու համար, որն աճում է Աֆրիկայի նկատմամբ մի շարք զարգացած պետությունների նեոգաղութային բարդ քաղաքականության պատճառով:

Հաշվի առնելով Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի պետությունների ինքնիշխանության և բազմակողմ ներուժի առաջանցի կամրապնդումը՝ ՌԴ-ն մտադիր է զարգացնել հարա-

բերությունները նրանց հետ իրատեսական և փոխշահավետ հիմքերի վրա:

Անդրադարձ է կատարվել հատկապես եվրոպական տարածաշրջանին՝ նշելով, որ հավաքական Արևմուտքի ազդեցիկ քաղաքականության շնորհիվ եվրոպական պետությունների մեծ մասը ագրեսիվ քաղաքականություն է վարում Ռուսաստանի նկատմամբ՝ ուղղված ՌԴ անվտանգությանն ու ինքնիշխանությանը սպառնալիքներ ստեղծելուն, միակողմանի տնտեսական առավելություններ ձեռք բերելուն, ներքաղաքական կայունությունը խաթարելուն՝ ռուսական ավանդական, հոգևոր և բարոյական արժեքների քայքայմանը ուղղված խոչընդոտներ ստեղծելով Ռուսաստանի հետ համագործակցության համար:

Փաստաթղթում առանձնակի շեշտվում է, որ Ռուսաստանի և եվրոպական երկրների միջև հարաբերությունների կարգավորումը բարդացնող հիմնական գործոնը Միացյալ Նահանգների և նրա առանձին դաշնակիցների ռազմավարական կուրսն է՝ բաժանարար գծեր գծելու և խորացնելու եվրոպական տարածաշրջանում, որպեսզի թուլացնեն և խաթարեն Ռուսաստանի և Եվրոպայի տնտեսությունների մրցունակությունը, սահմանափակեն եվրոպական պետությունների ինքնիշխանությունը և ապահովեն ԱՄՆ-ի գլոբալ գերակայությունը:

Թեև, համաձայն փաստաթղթի, ԱՄՆ-ն ագրեսիվ հակառուսականության գլխավոր ոգեշնչողը, կազմակերպիչը և իրականացնողն է, այնուամենայնիվ, Ռուսաստանի Դաշնությունը ցուցաբերում է դիվանագիտական մոտեցում. շահագրգռված է պահպանել ռազմավարական կայունությունը, խաղաղ գոյակցությունը Միացյալ Նահանգների հետ և հաստատել շահերի հավասարակշռություն Ռուսաստանի և Միացյալ Նահանգների միջև՝ որպես խոշոր միջուկային տերությունների, ինչպես նաև հատուկ պատասխանատվություն կրել ռազմավարական կայունության և միջազգային անվտանգության համար:

Համաձայն փաստաթղթի՝ ռուս-ամերիկյան հարաբերությունների նման մոդելի ձևավորման հեռանկարները կախված են ԱՄՆ-ի պատրաստակամության աստիճանից՝ հրաժարվելու ուժային գերիշխանության քաղաքականությունից և վերանայելու հակառուսական կուրսը հօգուտ Ռուսաստանի հետ փոխգործակցության՝ հիմնված ինքնիշխան իրավահավասարության, փոխադարձության սկզբունքների վրա[10]:

Այս առումով ՌԴ-ն մտադիր է հետևողականորեն պաշտպանել իր ազգային շահերը՝ առաջնահերթություն տալով եվրոպական պետությունների հետ հարաբերությունների նոր մոդելի ձևավորմանը, որը կապահովի Ռուսաստանի, նրա դաշնակիցների և գործընկերների անվտանգ, ինքնիշխան և առաջադեմ զարգացումը, կայուն խաղաղությունը Եվրասիայի եվրոպական մասում:

Այս փաստաթղթով հղում է կատարվում Եվրոպայի պետություններին, որ Ռուսաստանի հետ խաղաղ գոյակցությունն ու փոխշահավետ, իրավահավասար համագործակցությունը այլընտրանք չունի, որ Ռուսաստանի Դաշնության հետ բարիդրացիության քաղաքականությունը կունենա դրական ազդեցություն եվրոպական տարածաշրջանի անվտանգության և բարեկեցության վրա և կօգնի եվրոպական պետություններին իրենց արժանի տեղը գրավել Եվրասիական մեծ գործընկերությունում և բազմաբևեռ աշխարհում:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը, առաջնորդվելով ՌԴ կենսական, ազգային, պետական շահերով, միտված է գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում խաղաղության ու անվտանգության պահպանմանը, բազմաբևեռ աշխարհի իրողություններում համաշխարհային զարգացման անկախ կենտրոնների ձևավորմանը և նոր աշխարհակարգի կայացմանը:

Հղումներ

1 Տես նույն տեղում:
2 Концепция внешней политики Российской Федерации, 2023, http://kremlin.ru/acts/news/70811 /28.05.2023թ./:
3 Տես նույն տեղում:
4 Концепция внешней политики Российской Федерации, 2023, http://kremlin.ru/acts/news/70811 /28.05.2023թ./:
5 Տես նույն տեղում:
6 Տես նույն տեղում:
7 Концепция внешней политики Российской Федерации, 2023, http://kremlin.ru/acts/news/70811 /28.05.2023թ./:
8 Տես նույն տեղում:
9 Տես նույն տեղում:
10 Տես նույն տեղում:

Ալ. Շնեուրը Սարդարապատյան հերոսամարտի և հայկական հետախուզական ծառայության ակունքներում (1918-1920 թթ.)

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոն

Ալեքսանդր Շնեուր հետախույզը և մարտիկը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայկական հետախուզության կոհորտայում:

Քննարկվող հարցի և մասնավորապես հանիրավի մոռացված Առաջին հանրապետության լավագույն հետախույզներից մեկի՝ Սարդարապատի հերոս Ալ. Շնեուրի դիտարժան կերպարի ամբողջացման տեսանկյունից միանգամայն արժեքավոր է Ա. Բախչինյանի և ԱՄՆ-ից Վ. Մաթևոսյանի փոքրիկ, սակայն կարևոր հրապարակումը Առաջին հանրապետության 100-ամյա տարեդարձի առթիվ[1], որում ներկայացված է սարդարապատյան Շնեուրը: Ալ. Շնեուրի կենսագրության հետախուզական էջին, սակայն, բոլորովին անդրադարձ չի կատարվել, ինչը մենք որոշակի չափով ամբողջացրել ենք արխիվներից և այլ հազվագյուտ հրապարակումներից՝ տարբեր վավերագրերից քաղված, հայթայթված նյութերում առկա կցկտուր վկայակոչումներով: Հենց դրանք էլ հնարավորություն են տալիս մասամբ լույս սփռել Ալ. Շնեուրի գործունեության հայ ընթերցողին անհայտ, սակայն շատ հետաքրքիր մի շարք պատմափաստերի վրա[2]:

Բոլոր դարաշրջաններում էլ ամեն մի պետության հետախուզական և հակահետախուզական ծառայությունների համար կադրային հիմնախնդիրները համարվել են առաջնային, ինչով պայմանավորված է բոլոր տեսակի անվտանգային ծրագրերի մշակումն ու իրականացումը, երկրի պաշտպանությունն արտաքին վտանգներից: Ի սկզբանե Ալեքսանդր Շնեուրը փորձառու զինվորական, փոխգնդապետ Մ. Ջինկևիչի, Վլադիմիր Պրիտոմանովի, ինչպես նաև կապիտաններ Նիկոլայ Շումովի, Միխայիլ Մեդվեդևի և հայկական դիվիզիայի շտաբի զորամասերի մի շարք սպաների հետ ընդգրկվեց գլխավոր շտաբի կազմում, և նրանց անունները հայտնվեցին պատերազմական և այլ արտակարգ իրավիճակների հետ կապված տեղեկագրերում, ինչի մասին վկայում են արխիվային փաստաթղթերը, մասնավորապես՝ ՀՀ Ազգային արխիվի նյութերը[3]:

Ալ. Շնեուրի վկայությամբ՝ դեռևս 1918 թ. սկզբներին նա սերտ կապերի մեջ էր հայկական զինվորական շրջանակների հետ, սակայն հայոց պետականության բացակայության փուլում գտնվել է «միայն առաքելութեամբ, զօրավար Բարատովի իրաւասութեան շրջանը»[4]՝ ստանձնելով Կարին (Էրզրում) քաղաքի

առաջին գումարտակի սպայակույտի պետի պաշտոնը՝ հանրահայտ գնդապետ Ն. Մ. Մորելի[5] հրամանատարության ներքո: Կարինում Շնեուրը ստանձնելով ամրոցի սպայակույտի ղեկավարությունը՝ 1918 թ. մարտին՝ Կարինի անկումից հետո, նշանակվում է շուրջ 250 հոգանոց 2-րդ գումարտակի սպայակույտի պետ:

Դարձյալ ըստ իր վկայության՝ այդ պահին նա առնչվում է մի հյուծված զորամասի հետ՝ «յոգնած, հիւծուած, ջարդերից բարոյալքուած եւ դէպի ապագան՝ անյոյս»[6]:

Ալ. Շնեուրը, չհուսահատվելով, արագ գործի է անցնում իրեն վստահված զորաջոկատը համալրելու և կարգի բերելու ուղղությամբ: Հայերեն տպավորիչ կոչով նա դիմում է զինակոչի ենթակա հայերին, այն ունենում է ցանկալի արդյունք. Շնեուրի կոչին արձագանքում է մոտ 1300 մարդ, որոնք համալրում են նրա գլխավորած գումարտակը: Պատշաճ կերպով լուծվում են նաև պարենավորման և սննդի հարցերը: Շնեուրն այդ կոչում նկատի ունենալով 1918 թ. սկզբների թուրքական առաջխաղացումը, հայ բնակչության խուճապահար փախուստը դեպի ռուսական սահման, դեպի Անդրկովկաս և Արևելյան Հայաստան՝ հատկապես կարևորում է վերահաս վտանգի դեմ համախմբվելու անհրաժեշտությունը. «Եթէ այժմ էլ հայ ժողովուրդը ոտքի չկանգնի զէնքը ձեռքին՝ ի պաշտպանութիւն իր հայրենիքի, ապա իր ճակատագիրը կը լինի նոյնը, ինչ որ հրեայ ժողովրդինն է: Նա ցրուած է

ամբողջ աշխարհում՝ բոլորին օտար, բոլորին թշնամի»[7]:

Ի վերջո, Ալեքսանդր Շնեուրի գործունեության ամենապայծառ էջերից մեկն է դառնում նրա սարդարապատյան հերոսապատումը, նրա նվիրումը հայոց հողին և Հայաստանի ապագա հանրապետությանը:

1918 թ. մայիս 21-ին թուրքական զորքը, օգտվելով Անդրկովկասի աշխարհաքաղաքական իրավիճակի սրընթաց փոփոխությունից, կովկասյան ճակատից ռուսական զորքերի խուճապահար նահանջից, խրախուսվելով իր դաշնակից Գերմանիայի թողտվությունից և աջակցությունից, ներխուժում է Արարատյան դաշտ՝ գրավելով Սարդարապատ գյուղն ու երկաթուղային կայարանը: Թուրքական լավ զինված 36-րդ հետևակային զորաբաժնին դեմ հանդիման տեղակայվում է հայկական զորաբաժինը, որը բաղկացած էր հետևազորի երկու և հեծելազորի մեկ վաշտից, որի 1-ին վաշտը գլխավորում էր դեռևս Երզնկայի պաշտպանության ժամանակ աչքի ընկած գնդապետ Ն. Մորելը, իսկ փոխգնդապետ Շնեուրը այդ պահին 2-րդ վաշտի հրամանատարն էր: Կարճ ժամանակ անց իր գլխավորած վաշտը նա հանձնում է գնդապետ Հասան Փաշայանին՝ նշանակվելով ռազմաճակատի հրամանատար, գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի սպայակույտի պետ. «Եւ այսպէս, Սարդարապատը վերջնախաղն էր: Ջօրավար Դանիէլ Բէկ Փիրումեանը այդ վճռական պահին յարմար եւ արժանի, անվեհեր զինուորական վարիչն էր»[8]: Դանիել Բեկ-Փիրումյանն ու Ալ. Շնեուրը զգալի ջանքեր են գործադրում երևանյան զորախմբի հրամանատար, գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանի անթերի մարտածրագիրը կյանքի կոչելու ուղղությամբ, այն է՝ կասեցնել թուրքական առաջխաղացումը և դուրս շպրտել նվաճված բնագծերից, ինչն էլ փայլուն իրագործվում է՝ դառնալով հայոց հերոսամարտի պայծառ էջերից մեկը: Ինքը՝ Ալ. Շնեուրը, իր հուշագրությունում վերհիշում է այդ ոգեղեն ու հերոսական օրերը, թե ինչպես մայիսի 22-ին Դանիել Բեկ-Փիրումյանը անձամբ մեկնում է գործող զորքերի մոտ՝ գլխավորելու ռազմաճակատը. «Ջօրավար Փիրումեան, իր կարմիր աստառով զինուորական վերարկուի մէջ, քայլում էր յետ ու առաջ եւ, վերջապէս, չհամբերելով, մեկնեց դէպի կռուող շղթան: Մեկնելիս նա ինձ յանձնեց կռուի ղեկավարութիւնը, ասելով.- «Կապիտան, դուք արդէն ամէն ինչ գիտէք, ղեկավարէք կռիւը, ինչպէս որ մենք որոշած ենք»»[9]: Եվ այսպես պատմական դժվարի պահին Շնեուրը և նրա զինակիցները, քաջարի հայ զինվորները, թիկունքից միանալով Հասան Փաշայանի զորքերին, խուճապի են մատնում Վեհիբ փաշայի ավարից արբեցած զորքերին. «Թուրքերի յետեւից վազում էին հայերը՝ կրակելով, սրաթոիչ արշաւում էին զէյթունեան հեծելագունդը՝ գնդապետ Սալիբէկովի գլխաւորութեամբ եւ մեր հարիւրեակները: Թուրքերը փախան 50 վերստ: Նրանք փախան, ցրուեցին լեռներով մէկ: Նրանց կարող էին հաւաքել միայն մի քանի օր յետոյ»[10]: Բազմախոնջ և արհեստավարժ զինվորականն, իր դերն անթերի կատարելով Սարդարապատում, այնուհետև տեղափոխվում է Բաշ-Ապարան, ուր «թուրքերը փորձեցին ներխուժել Հայաստանի սիրտը աւելի հիւսիսից (...), բայց չարաչար ջախջախուեցին Դրաստամատ Կանայեանի (Դրօ) ձեռքով»: Իր անձի վերաբերյալ ռուս զինուորականն ասում է. «Այնտեղ եւս եղայ ես եւ հրաշքով ողջ մնացի, որովհետեւ հրաշքով ընկայ թուրք պահակների շրջանը, հազիւ 20 քայլ հեռու»[11]: Շատ դիտարժան է, որ Ալ. Շնեուրը վստահ լինելով հայկական զենքի փառավոր հաղթանակի հարցում՝ խիստ դժգոհեց դիվանագիտական հարթակում ամրագրված արդյունքներից, որոնք խիստ չափավոր էին և ամենևին էլ Սարդարապատում հայոց միասնության հաղթանակի արտացոլանքը չեղան: Ալ. Շնեուրը հետագայում նշեց Սարդարապատի մասին իր հանրահայտ հուշագրությունում. «Դժբախտաբար հայ ներկայացուցիչները Բաթումի խաղաղութեան ժողովին լուր չունէին հայերի փայլուն յաղթանակի մասին Սարդարապատի տակ, ապա թէ ոչ խաղաղութեան պայմանները թեթեւ կը լինէին Հայաստանի համար»[12]:

Ալեքսանդր Շնեուր

1918 թ. մայիսյան փառավոր հաղթանակներից և մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Ալ. Շնեուրը շարունակում է մնալ Հայաստանում՝ զինվորագրվելով հայոց պետականության և զինուժի ստեղծման գործին, իր եռանդն ու ջանքերը անմնացորդ ծառայեցնելով բանակաշինությանը:

Ալեքսանդր Կոնստանդինի Շնեուրը գլխավոր շտաբում հետախուզական բաժանմունքի պետն էր նրա ստեղծման առաջին օրերից: Բազմահմուտ փոխգնդապետը[13] 1919 թ. ապրիլից մինչև 1919 թ. սեպտեմբեր եղել է գլխավոր սպայակույտի հետախուզական և հակահետախուզական բաժնի վարիչը՝ իր տրամադրության տակ ունենալով սահմանափակ թվով աշխատակիցների: Հետագա տարիներին ՀՀ

հետախուզական բաժանմունքը գլխավորեցին մի շարք սպաներ, որոնց անունները մեկընդմիշտ կմնան այդ ծառայության պատմության էջերում: 1919 թ. սեպտեմբերից սկսած մինչև 1920 թ. ապրիլը որպես հետախուզական բաժնի պետ է աշխատել ոչ անհայտ կապիտան Վահագն Գալուստի Մուրադյանը, որն անկուսակցական էր:

1920 թ. ապրիլից մինչև հունիսի վերջը հետախուզական բաժանմունքի գործունեությունը ղեկավարում էր Տիգրան Թադևոսի Դևոյանցը[14], որը Հայ Յեղափոխական Դաշնակցության անդամ էր (վերջինս, իր վկայությամբ, Դրոյի դասընկերն է եղել[15]): 1920 թ. հուլիսից մինչև Հայաստանի խորհրդայնացումը հետախուզական բաժինը գլխավորել է Միքայել Նիկիտայի Դոդոխյանը:

Փոխգնդապետ Ալեքսանդր Կոնստանդինի Շնեուրը (ազգանունը գործածական է եղել «Chneour» ձևով, իսկ թերթերում ու գրքերում 1917 թ. և հետո տարածված են եղել «Schneur, Schneour, Shneur» ձևերը և անգամ կիրառական է եղել «Schneour» տարբերակը) եղել է Հայաստանի Հանրապետության հատուկ ծառայությունների, մասնավորապես՝ հետախուզության վառ դեմքերից: Գլխավոր շտաբի հայկական հետևակային դիվիզիայի շտաբին կից հանձնարարությունների գծով այս սպան ծագումով էլզաս-լոթարինգցի էր՝ գերմանացի[16]: Շնեուրների տոհմը Ռուսաստանում հայտնվել է XIX դարում, նրանք մեծ մասամբ եղել են հայտնի իրավաբաններ և զինվորականներ: Ա. Շնեուրի նախնիներից մեկը՝ գլխավոր շտաբի գնդապետ Նիկոլայ Յակովլևիչ Շնեուրը (1848-1894 թթ), Արդահան քաղաք-ամրոցի գրավման համար պարգևատրվել է Գեորգիևյան խաչով:

Նիկոլայ Շնեուրի քեռին՝ Վլադիմիր Շնեուրը, որն եղել է 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի մասնակից, այնուհետև մասնակցել 1917 թ. Ռուսաստանի փետրվարյան-հոկտեմբերյան փոթորկալից իրադարձություններին, ծանոթ է եղել Լև Տրոցկու (Լ. Դ. Բրոնշտեյն) հետ, մեղադրվել գերմանացիների հետ լրտեսական կապերի մեջ և անգամ որոշակի հանգամանքներում համագործակցության մեջ մտնելով մեծամասնականների (բոլշևիկների) ռեժիմի հետ՝ 1918 թ. նրանց կողմից գործուղվել է Ֆրանսիա՝ հատուկ հետախուզական առաջադրանքով և այլն:

Ի վերջո, նա դատապարտվել և մահացել է Արխանգելսկի մոտ գտնվող Սոլովեցկի կղզու համակենտրոնացման ճամբարում: Վլադիմիր Շնեուրը ունեցել է երկու քույր և երկու եղբայր, որոնցից մեկը՝ Նիկոլայ Կոնստանդինովիչ Շնեուրը, մահացել է Ճապոնիայում 1934 թ., իսկ մյուս եղբայրը՝ ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի գնդապետ Ալեքսանդր Կոնստանդինի Շնեուրն էր[17]:

Ալ. Կ. Շնեուրը ծնվել է 1884 թ. օգոստոսի 20-ին Ս. Պետերբուրգում՝ ռուս ուղղափառ ընտանիքում: Ալ. Շնեուրը 1904 թ. ավարտել է Պետերբուրգի Գուրևիչի գիմնազիայի ութամյա դասընթացը: Այդ ընթացքում նա ավարտել է նաև Ս. Պետերբուրգի համալսարանի

Տիգրան Դևոյանց

բնագիտական ֆակուլտետը: Այն ավարտելուց հետո մտել է հեծյալ հրետանային զորակազմի մեջ: 1906 թ. ավարտել է Միխայլովյան հրետանային դպրոցը[18]: Այնուհետև զինվորական ծառայության է անցել Լեհաստանում՝ որպես հեծելազորային հրետանու մարտկոցի սպա: 1909 թվականին նրան շնորհվել է տեղակալի, իսկ 1913-ին՝ փոխգլխապետի (շտաբս-կապիտան) աստիճան: Ակտիվորեն մասնակցել է Առաջին աշխարհամարտին և պարգևատրվել 5 մարտական շքանշանով: Առաջին աշխարհամարտի ընթացքում Շնեուրը պարգևատրվում է մի շարք շքանշաններով իր զինվորական նշանակալից ծառայությունների համար (Ս. Ստանիսլավի 2-րդ և 3-րդ աստիճանների, Ս. Աննայի 4-րդ, 3-րդ և 2-րդ աստիճանների, Ս. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշաններով):

Առաջին աշխարհամարտի նախօրյակին եղել է 5-րդ հեծյալ-հրետանային դիվիզիոնի շտաբս-կապիտան, իսկ այնուհետև՝ 9-րդ հեծյալ-հրետանային մարտկոցի սպա:

1915 թ. երկամյա դասընթաց է անցել Կիևի օդանավորդության դպրոցում՝ ստանալով օդաչուի վկայական, իսկ 1916-1917 թթ. ուսանել է Նորին մեծության Ս. Պետերբուրգի Նիկոլևյան սպայակույտի ակադեմիայում[19]: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նա հայտնվել է Ռուսաստանի հարավում, այնուհետև ծառայության անցել Կովկասում: 1917 թ. արժանացել է գլխապետի (կապիտան) աստիճանի[20]:

1917 թ. Բոլշևիկյան հեղափոխության ժամանակ Ալ. Շնեուրը ռուսական 19-րդ զորաբաժնի (կորպուսի) սպայակույտի պետն էր Լեհաստանում: Հակաբոլշևիկյան «Սպիտակ» կամավորական բանակի կողմն անցնելով՝ Ալ. Շնեուրը 1917 թ. դեկտեմբերի 6-ին ուղարկվել է Նովոռոսիյսկ և ապա՝ Բաքու՝ անգլիացիների հետ բանակցելու զենք-զինամթերքի առաքման հարցով, այնուհետև մաս կազմել գեներալ

Նիկոլայ Բարաթովի (1865-1932 թթ.) ռուս-պարսկական ռազմական արշավախմբին՝ համալրվելով կամավորական բանակի կազմում, 1918 թ. սկզբներին գեներալ Բարաթովի իրավասությամբ գործող ուժերի առաքելության փոլում միացել է հայկական զինուժին՝ ստանձնելով 1-ին բանակային կորպուսի շտաբի պետի պաշտոնը Էրզրումում, Էրզրումի բերդի շտաբի պետի պարտականությունները[21]:

1918 թ. սկիզբներին, իր վկայությամբ, Շնեուրը միացել է հայկական բանակին՝ ստանձնելով Էրզրում քաղաքի առաջին գումարտակի սպայակույտի պետի պաշտոնը՝ գնդապետ Մորելի հրամանատարության ներքո, և ապա՝ Կարինի ամրոցի սպայակույտի ղեկավարությունը:

Քաղաքի անկումից հետո (1918 թ. մարտ) նշանակվել է երկրորդ գումարտակի սպայակույտի պետ»[22]: Նշանակալի է եղել Շնեուրի գործունեությունը Կարսի շրջանում, հատկապես՝ Բեռնա գյուղի կռվի ժամանակ (1918 թ. ապրիլի 18-20), որի համար 1918 թ. ապրիլին նրան շնորհվել է փոխգնդապետի աստիճան:

Դեռ 1918 թ. մայիսյան հերոսամարտի օրերին հայկական զորքերի Սարդարապատի խմբի շտաբի պետն էր և հերոսամարտի մասին հրատարակել է բարձրարժեք հուշեր[23]: Հայկական դիվիզիայի գծով 1918 թ. օգոստոսի 21-ի N° 12 հրամանում զորքերի հրամանատար Մ. Սիլիկյանը իրեն վստահված դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով շտաբային սպաների հաստիքային պաշտոնում է նշանակում Ալ. Կ. Շնեուրին և Իվան (Հովհաննես) Դավիդի Վեքիլյանին (Վեքիլով Իվան Դավիդի[24])՝ որպես գլխավոր շտաբի փոխգնդապետներ:

Հայաստանի Հանրապետության զինվորական գերատեսչության գծով զինվորական աստիճանների մասին 1918 թ. հոկտեմբերի 11-ի հրամանագրով (N° 21) զինվորական նախարար Հախվերդյանը իրենց զբաղեցրած պաշտոններում հաստատում է մի շարք սպաների, այդ թվում՝ Շնեուրին: Այսպես 2-րդ հատուկ հայկական հետևակային բրիգադի շտաբի նախկին պետ, փոխգնդապետ Շնեուրը հաստատվում է որպես Հայկական հետևակային դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով սպա[25]: Պետք է նշել, որ Ալեքսանդր Շնեուրը՝ որպես բարձրաստիճան կադրային սպա, բազմիցս կատարել է ամենադժվարին հանձնարարությունները և զբաղեցրած պաշտոնում հաճախակի փոխարինել է գլխավոր շտաբի պետ Զինկևիչին՝ վերջինիս գործուղումների ժամանակ[26]:

1918 թ. մայիսյան հաղթանակներից և Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո Ալ. Շնեուրը ավելի քան մեկ տարի շարունակում է ծառայել հայոց բանակում, ռազմական նախարար Հովհաննես Հախվերդյանի հրամանով նշանակվում է հետևակային զորաբաժնի սպայակույտի՝ հանձնարարությունների գծով սպայի պաշտոնում: Մասնակցել է 1918 թ. դեկտեմբերյան վրաց-հայկական պատերազմին և Նոր Բայազետ-Բասարգեչարի գավառի (ներկայում՝ Վարդենիս) մահմեդականների խռովությունը ճնշելուն ուղղված «Զոդ» գործողությանը: Իսկ արդեն զինվորական նախարարի 1918 թ. դեկտեմբերի 5-ի (N° 42) հայկական դիվիզիայի գծով հրամանագրում (N° 58/137) գլխավոր շտաբի փոխգնդապետ, դիվիզիայի շտաբի հանձնարարությունների գծով սպա Ալ. Շնեուրը և 1-ին հետևակային բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Փիրումյանը ստանում են հատուկ նշանակում՝ համարվելով մշտական գործուղման մեջ՝ սկսած դեկտեմբերի 3-ից՝ առանց իրավունքի զբաղեցնելու թափուր մնացած պաշտոնը և առանց պահպանելու ռոճիկը, որը նրանք պետք է ստանային իրենց ծառայության նոր վայրում: Դա «Զոդ» հանրահայտ օպերացիայի նախապատրաստական փուլն էր, որի իրագործման ժամանակ ճնշվեց հակապետական և հակահայկական մահմեդական խռովությունը Բասարգեչարի շրջանում: 1918 թ. դեկտեմբերի 31-ից սկսած Ալ. Շնեուրը առանձին ղարաբաղյան բրիգադի պետն էր[27]: 1919 թ. սկզբի «Զոդ» օպերացիային նա մասնակցեց որպես գեներալ-մայոր Դանիել Բեկ-Փիրումյանի գլխավորած ջոկատի շտաբի պետ: «Զոդ» օպերացիան նաև հայկական բանակի և հետախուզական ծառայության փոխհամագործակցության ուսանելի օրինակներից է: Ուշագրավ է, որ Զոդ գյուղի շրջանում այդ ջոկատի գործողությունները բարձր գնահատականի արժանացան նույնիսկ անգլիական ծառայության գնդապետ Կ. Թեմպերլեյի կողմից: Այս օպերացիայի ավարտից հետո առանձին ղարաբաղյան բրիգադի պետ Ալ. Շնեուրը նշանակվում է գլխավոր շտաբի բաժնի պետ[28]:

1919 թ. սեպտեմբերին նա նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինվորական սպայակույտի ժամանակավոր պետ՝ փոխարինելով դեր-զորավար (գեներալ մայոր) Դոլուխանյանին[29]:

Շնեուրը այդ ժամանակի ամենատեղեկացված սպաներից էր: Ուշագրավ է 1919 թ. օգոստոսի կեսի նրա զեկուցագիր-հաղորդագրությունը՝ Փարիզում գտնվող հայկական զինվորական ներկայացուցիչ գեներալ Գ. Ղորղանյանին՝ փախստականների և Էրզրումի շրջանում իշխող ռազմաքաղաքական իրավիճակի որոշ հարցերի վերաբերյալ: Ի լրացում իր ավելի վաղ ուղարկած մեկ այլ զեկուցագրի՝ Շնեուրը նշում է, որ ֆրանսիական հրամանատարության առաջարկությամբ խնդիր է դրվել կազմել փախստականների վերադարձի պլան, ինչի կապակցությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվել է նաև ինքը: Նպատակն է զբաղեցնել Վանի, Մուշի, Էրզրումի գավառները, ինչպես նաև Ալաշկերտի և Խնուսի հովիտները, ինչից ելնելով՝ իր կողմից խնդիր է դրվում վերականգնել Մակուի ճանապարհը, որով, ինչպես և Էրզրումի նեղ երկաթուղագծով, առավել հարմար կլինի տեղափոխել փախստականներին և բեռները: Շնեուրը տեղեկացնում է, որ սույնին վերաբերող պլանները և սխեմաները ներկայացվել են գեներալ Թովմաս Նազարբեկովին:Այս տեղեկատվության մեջ մեզ համար առավել կարևորն այն է, որ հետախուզական ծառայության ղեկավարներից մեկը՝ Շնեուրը, խիստ կարևորելով ժողովրդագրարական առումով Արևմտահայաստանը հայերով վերաբնակեց-

նելու քաղաքականությունը, խնդիր է դնում վերացնել Էրզրումի կառավարությունը, այնտեղից դուրս բերել թուրքական զորքերը և ամերիկյան զորքերի միջոցով գրավել այդ տարածքը: Ավելացնում է նաև, որ լավ կլինի միաժամանակ կոստանդնուպոլսյան-կիլիկյան և Բուլղարիայի հայերից կազմավորել զորքեր[30]:

Ալեքսանդր Շնեուրը այնտեղ էր, որտեղ դժվար էր և անհանգիստ: 1919 թ. սեպտեմբերին գեներալ-մայոր Արսենի Սերգեյի Դոլուխանյանի (Ա. Դոլուխանովի) փոխարեն ՀՀ զինվորական շտաբի պետ է նշանակվում գնդապետ Ա. Կ. Շնեուրը[31], որին հետագայում փոխարինում է գեներալ-մայոր Բ. Վ. Բաղդասարովը:

Օգոստոսի 30-ից զինվորական նախարարության գլխավոր համբարակապետ է դառնում գեներալ-մայոր Ա. Բեյ-Մամիկոնյանը[32]:

Առկա փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կազմակերպական-ֆինանսական խնդիրները նշված բնագավառում հեշտությամբ չէին լուծվում, երբեմն էլ արհեստական խոչընդոտներ էին հարուցվում, որոնք դժվարացնում էին հայկական հետախուզական ծառայությունների աշխատանքները, հաճախ էլ վերջիններիս կանգնեցնում փակուղու առաջ: Գլխավոր շտաբի պետին հասցեագրված (№ P07) զեկուցագրում հետախուզական բաժանմունքի պետի պաշտոնակատար Հովհան Խան-Կոտուրսկին (Արտեմի Նիկիտայի Հովհաննեսով) նշում է, որ հետախուզական բաժնի գործունեության ընդարձակման և հարևան երկրներում նոր կետերի բացման հետ կապված անհրաժեշտ է հոգ տանել, որպեսզի Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հետախուզության գործակալները ինչ-որ աջակցություն ունենան իրենց երկրի դիվանագիտական ներկայացուցիչներից: Գաղտնիք չէ, որ հետախուզության գլխին միշտ էլ կանգնած են լինում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները: Զեկուցագրում միաժամանակ ափսոսանք է արտահայտվում, որ հայկական դիվանագիտական ներկայացուցչությունները հետախուզության գործակալների դիմելու դեպքում մերժում են, բացատրելով, որ տագնապում են հնարավոր «դիվանագիտական բարդացումներից»: Դիմումագիրը հասցեագրված էր Ալ. Շնեուրին, որին և հանձնարարվեց հարցի պրակտիկ կողմի մշակումը[33]: Եվ արդեն 1919 թ. մայիսի 21-ին զինվորական նախարարության գլխավոր շտաբի պետի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականությունները կատարող փոխգնդապետ Ալ. Շնեուրը զինվորական նախարարին ուղղված դիմումագրում խնդրում է վերջինիս միջնորդությունը արտաքին գործերի նախարարության միջոցով աջակցել հետախուզության աշխատակիցներին[34]:

Նույն օրը Հայաստանի զինվորական նախարար գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը[35] գաղտնի գրությամբ դիմում է արտաքին գործերի նախարարին՝ կցելով նաև գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետի զեկուցագիրը՝ կապված արտաքին գործերի նախարարության աստիճանավորների և զինվորական նախարարության գործողությունների ուղղորդման հետ[36]:

Իրական կյանքը, սակայն ավելի բարդ էր, գործընթացներն էլ՝ ոչ միանշանակ:

1919 թ. նա հեռանում է Հայաստանից և ծառայության անցնում Դենիկինի բանակում[37]: Ըստ Կայալովի՝ «Շնէուր մնացած է հայկական զօրքերուն հետ մինչեւ Հոկտեմբեր 1919, երբ հայկական կառավարութիւնը որդեգրած է ազգայնացման ծրագիրը»[38]:

Լեզվական բարեփոխումը գաղափարաքաղաքական առումով գուցե և ճիշտ էր, սակայն ոչ լիովին տեղին, քանզի դրա պատճառով հայկական բանակի շարքերը լքեցին շատ օտարազգիներ, ցարական բանակի նախկին բարձրաստիճան և փորձառու զինվորականներ, որոնց թվում՝ նաև Սարդարապատի հերոս, գնդապետ Ալ. Կ. Շնեուրը: 1920 թ. Ալ. Շնեուրի՝ Հայաստանում ակտիվ գործելու մասին արժանահիշատակ փաստեր չկան, հիմնականում դրանք վերաբերում են 1919 թ. վերջերին: Պետական լեզվի մասին օրենքի փոփոխությամբ հայերենը ճանաչվեց պետական լեզու, որը պարտադիր դարձավ բոլոր պետական և հասարակական հիմնարկությունների, այդ թվում՝ նաև հայոց բանակի համար, ինչը ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանի շրջաբերական հրահանգով 1920 թ. օգոստոսի 1-ից սկսած պետք է գործադրվեր բոլոր պետական հիմնարկներում. գրագրությունը և գործավարությունը պետք է վարվեին միայն հայերեն: Այս պահանջը չշրջանցեց նաև Ալ. Շնեուրին: Դրանից հետո նա հարկադրված լքեց Հայաստանը՝ չնայած հայ ժողովրդին իր մատուցած անհերքելի ծառայություններին: Այդ մասին ասերկբա եզրահանգման է եկել նաև պատմաբան Մ. Կարապետյանը. «Բացի դրանից, նոյն հրամանի համաձայն, բանակից զօրացրման էին ենթակայ բոլոր այն օտարազգի սպաները, աստիճանաւորները եւ ազատ վարձու ծառայողները, որոնք չէին տիրապետում հայոց լեզուին»[39]:

Մեկ այլ հետաքրքիր փաստաթղթից տեղեկանում ենք Շնեուրի հետախուզական կենսագրության դիտարժան մի փաստի մասին. այսպես՝ Գեներալ Պ. Ն. Վրանգելի ռուսական բանակում հետախուզության կազմակերպման մասին 1920 թ. հուլիսի 29-ի խիստ գաղտնի գործակալական տեղեկության մեջ ռազմաճակատի հատուկ բաժանմունքի օպերատիվ մասի պետ Ռ. Խասկինը հայտնում է, որ վերջին ժամանակներում Վրաստանում գեներալ Վրանգելի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Դանիիլ Պավելի Դրացենկոյի գլխավորած շտաբին առընթեր նշանակվել է գործակալական մասի նախկին պետ, գնդապետ Ալ. Շնեուրը՝ ստանձնելով հետախուզական գործի վարույթը Կովկասում և գլխավորապես լեռնական ժողովուրդների մոտ[40]:

Հետաքրքիր է նշել նաև, որ 1920 թ. Ալ. Շնեուրը գեներալ Խալիլովի հետ ուղարկվել է Բաթումի՝ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքի հետ կապի համար, իսկ արդեն 1920 թ. օգոստոսի 1-ին գործուղվել է Ղրիմ[41]:

Մի շարք փաստեր օգնում են ավելի ամբողջական պատկերացում կազմել հայկական պետականությունը և ուժային կառույցները մարմնավորող

հետախուզական և հակահետախուզական ծառայությունների կայացման ակունքներում կանգնած հետախույզ-սպայի՝ Ա. Կ. Շնեուրի կերպարի մասին:

Այսպիսով՝ 1919 թ. հոկտեմբերին Շնեուրը հրաժարական է տալիս ու մեկնում է արտերկիր: Վերադառնալով Ռուսաստան՝ միանում է Անտոն Դենիկինի «Սպիտակ» զորքերին, որոնք պայքար էին մղում մեծամասնական ուժերի դեմ՝ Վ. Լենինի գլխավորությամբ, որը Գերմանիայի կողմից Ռուսաստանում ներդրված լրտես էր: Շնեուրը 1919 թ. սեպտեմբերի 1-ից պաշտոնավարել է Ռուսաստանի հարավի զինված ուժերի հրամանատարի շտաբում՝ Տագանրոգում[42]:

Ինչպես պարզվում է Տ. Դևոյանցի կողմից գեներալ Ղորղանյանին Փարիզ ուղարկած 1919 թ. նոյեմբերի 23-ի զեկուցագրից (№ 57), Դևոյանցը 1919 թ. նոյեմբերի 11-ին նամակ է ստացած լինում գնդապետ Ալ. Շնեուրից, որով վերջինս հայտնել էր, որ վերջնականապես մեկնել է կամավորական բանակ, որտեղ նա ծառայում է մինչև 1920 թվականը[43], իսկ այնուհետև նա հայտնվում է տարագրության մեջ՝ համալրելով ռուս սպիտակգվարդիական տարագիրների շարքերը:

Այնուհետև, որպես կամավոր, Ալ. Շնեուրը ծառայության է անցել ֆրանսիական բանակի կազմում:

Մեծամասնականների դեմ պայքարում պարտվելուց հետո Ա. Դենիկինի «Սպիտակ» կամավորական բանակի այլ սպիտակգվարդիական սպաների նման Ալ. Շնեուրը ևս վտարանդի դառնալով՝ մեկնում է Թուրքիա՝ Գալիպոլիի ճամբարը և ապա՝ Բուլղարիա: Թե՛ Թուրքիայում և թե՛ Բուլղարիաում նա դասավանդում է ռուսական բանակի տակավին նոր կազմակերպվող զորամասերում, ինչպես նաև Բուլղարիայի սպաների ճարտարագիտական դպրոցում՝ որպես դասախոս և սպա-ինժեներ:

Շնեուրը երկու անգամ վիրավորվել է և կոնտուզիա ստացել: Որոշակի փոթորկալից իրադարձություններից հետո տարբեր առիթներով եղել է ոչ միայն Բուլղարիայում, այլև Հարավսլավիայում, այդ ժամանակ դեռ ֆրանսիական գաղութ Թունիսում: 1923-1924 թթ. եղել է գլխավոր շտաբի սպաների ընկերության անդամ, որից հետո արդեն հայտնվել է Ֆրանսիայում[44]:

Ըստ որոշ տվյալների՝ Շնեուրը Թունիս է անցել 1929 թ., իսկ մեկ այլ տվյալով՝ Թունիսում ապրել է 1934-1946 թթ.[45], աշխատել որպես ֆրանսիական գաղութային վարչության աշխարհագրական բաժանմունքում և քարտեզագրի պաշտոնով աշխատել ճանապարհների ու կամուրջների գործերի բաժանմունքում: Թունիսում ապրած տարիներին նվիրվել է բնական գիտություններին, հատկապես՝ երկրի թեփուկաթևավորների (lepidopter) ուսումնասիրությանը, տարբեր թիթեռներ է հավաքել, որոնցից 7-ը անվանակոչվել է նրա անունով: Հսկայական հավաքածու է կազմել: 1934-1937 թթ. գերմաներեն «Schneeur» ստորագրությամբ հրատարակել է վեց գիտական հոդված, իսկ այնուհետև անցել է ֆրանսերենի և 1942-1963 թվականներին 14 հոդված է տպագրել գլխավորապես Թունիսի գիտական հանդեսներում՝ «Chnéour» տառադարձությամբ[46]:

Որոշ ժամանակ էլ բնակվել է Ֆրանսիայում. Լիոնում ուսուցչություն է արել, ի վերջո, 1959 թ. արտագաղթել է ԱՄՆ, հանգրվանել է Սան-Ֆրանցիսկոյում: 1942 թվականից եղել է Ֆրանսիայի միջատաբանական ընկերության անդամ (Société entomologique), 1964 թվականից՝ Ամերիկայի թեփուկաթևավորների ընկերության անդամ: 1956 թ. հունիսի 2-ին 72 տարեկանում տարագրվել է ԱՄՆ, հանգրվանել է Նյու Յորքում, Թունիսից բերած հավաքածուն նվիրել է Նյու Յորքի բնական պատմության ամերիկյան թանգարանին և Կալիֆոռնիայի գիտությունների ակադեմիային[47]: 1961 թ. ֆրանսերեն հրապարակել է Թունիսի թիթեռների մասին իր աշխատությունների ռեզյումեն՝ «Լեպիդոպտերոլոգի 26-ամյա աշխատանքը Թունիսում» (1930-ից 1956 թթ.) վերնագրով: Այսպիսով՝ Ալ. Շնեուրի կողմից հրատարակվել է 21 գիտական աշխատանք ֆրանսերենով և գերմաներենով: Ըստ Ս. Ա. Մոզգովոյայի՝ ներկայում գնդապետ Ա. Կ. Շնեուրի թիթեռների հավաքածուն գտնվում է Կալիֆոռնիայի գիտությունների ակադեմիայում, իսկ հեղինակը եղել է ֆրանսիական և ամերիկյան միջատաբանական ընկերությունների անդամ: Ըստ Կ. Մախրովի՝ Ալ. Շնեուրը 1942 թ. ամուսնացել է այրիացած Ելիզավետա Կոնստանդինովնա-Տիոնշտեյնի հետ: Մախրովի հավաստմամբ՝ «Ա. Կ. Շնեուրը հավաքում էր թիթեռներ… հավաքածուն զբաղեցնում էր ողջ սենյակը…»: Ոչ պատահականորեն Ա. Շնեուրը հենց դրանով դասվեց երեք նշանավոր տարագիրների շարքում, որոնց անունները 20-րդ դարում մտան գիտական տարեգրությունների մեջ Հյուսիսային Աֆրիկայի և Սահարա անապատի ֆլորայի և ֆաունայի հետազոտման բնագավառում ունեցած մեծ ներդրման համար:

Ալեքսանդր Շնեուրը Ն. Շպակովսկու համահեղինակությամբ հրապարակում է «Թունիսի օձերը» աշխատությունը[48]:

Այդ ընթացքում նա անդամագրվել է Հայրենական մեծ պատերազմի ռուս վետերանների ընկերությանը, հրապարակել է հուշեր «Вестник» ամսագրում, 1963-1968 թթ. հրատարակել է «Հայերը. թրքական պատերազմ» հանրահայտ գիրքը:

Այդ մեղմ ու նրբազգաց մարդը Սան Ֆրանցիսկոյի իր տան շեմին անգթորեն ծեծվել է փողոցային խուլիգանների կողմից և կյանքի վերջին երեք տարիներն անցկացրել է ծերանոց-հիվանդանոցում: Այնտեղ էլ Սարդարապատի հերոսամարտի մասնակից, հերոս գնդապետ Ալ. Շնեուրը 93 տարեկանում կնքել է մահկանացուն: Հայտնի հետախույզ, գնդապետ Ա. Կ. Շնեուրը վախճանվել է 1977 թ. սեպտեմբերի 16-ին և հողին հանձնվել ԱՄՆ-ի Սան-Ֆրանցիսկո քաղաքի Քոլմե արվարձանի սերբական գերեզմանատանը[49]: Այնտեղ է թաղված նաև նրա կինը՝ Ելիզավետա Կոնստանդինովնան (օրիորդական ազգանունը՝ Տիոնշտեյն (1897–1971 թթ.)[50]:

Նշենք նաև, որ Շնեուրի առանձնահատուկ հետաքրքրությունների ոլորտում են գտնվել հայկական օդուժի կազմակերպման և զարգացման հարցերը: Դեռ 1918 թ. հոկտեմբերի 8-ին հայկական դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը հատուկ հրամանագրով անդրադառնալով իրեն վստահված դիվիզիայի գլխավոր շտաբի օպերատիվ բաժնի պետ, փոխգնդապետ Ալ. Կ. Շնեուրի զեկույցին[51]՝ տեղեկացնում է վերջինիս կողմից հոկտեմբերի 4-ին (N 70) հայկական օդագնաց ջոկատի ստուգման մասին և շնորհակալություն է հայտնում:

Սիլիկյանին ներկայացված զեկույցում Շնեուրը նշել էր, որ ինքը ստուգել է օդագնաց ջոկատը՝ վկայելով, որ աշխատանքները փայլուն են կատարվել, ամեն ինչ դասդասվել է և խնամքով, կանոնավորապես տեղավորվել: Փաստվում էր, որ երեք թռչող ապարատները սարքին են և հոկտեմբերի 12-ին պատրաստ կլինեն թռիչքների: Հավելվում է, որ 4-րդ «Վուազենը» կարելի է կարգի բերել, սակայն միայն դրանց մասերը Դիլիջանից տեղափոխելուց հետո: Մտահոգություն է հայտնվում, որ մեխանիկների բացակայության պատճառով աշխատանքները սպաներն են կատարում՝ որպես հասարակ փականագործներ և հյուսներ: Շնեուրը նաև տեղեկացրել է, որ բանվորական ուժի սուր կարիք է զգացվում: Ավիաջոկատի դիտարկումից Ալ. Շնեուրը գոհ է մնացել, սակայն առաջարկել է ավիաջոկատին աջակցելու նպատակով ջոկատ գործուղել 10 զինվորի, սակայն ոչ դասալիքների[52]:

1919 թ. հոկտեմբերի 10-ին (N 0012) գնդապետ Ալ. Շնեուրին ուղղված պաշտոնական նամակում Սևծովյան նավատորմի ծովակալության գծով նախկին պորուչիկ Հովհան Խան-Կոտուրսկին (նշանավոր Խան-Ղոթուրին կամ Արտեմի Նիկիտայի Հովհաննեսովը) հայտնում է, որ օդային և լճային նավատորմի ստեղծման գաղափարը ծագել է դեռ հանրապետության ձևավորման առաջին օրերից: Խան-Կոտուրսկին նշելով, որ թե՛ Շնեուրը և թե՛ անձամբ ինքը ուժերի ներածին չափով նպաստել են գործի ձեռնարկմանը, իրենց վիճակվել է դիմանալ շատ խեթ հայացքների և անվստահության, որ առաջին նախագծերը չոր վերաբերմունքի են հանդիպել, և սակայն իրենց երազանքը կյանքում միս ու արյուն ստացավ, իրագործելի դարձավ՝ օդային և առագաստանավային ոչ մեծ, այնուհանդերձ ժողովրդի ապագա հզորության և երջանկության խորհրդանիշ նավատորմիղի գաղափարը իրողություն դարձավ: Շնեուրը համոզվածություն էր հայտնում, որ երկուսով, և առավել ևս ինքը, որն իր աչքերով տեսել է հարազատ Սևծովյան նավատորմի կործանումը, և այժմ մտահոգել է երիտասարդ հանրապետության նավատորմի ծնունդը, կանգ չի առնի կես ճանապարհին: Խան-Կոտուրսկին և Ալ. Շնեուրը վստահ էին, որ իրենց վիճակված է իրականացնելու օդային և լճային նավատորմի կազմակերպման պետականորեն կարևոր գործը, որը վճռական դեր կխաղա պետական պաշտպանության գործում և ազգային մշակույթի առաջընթացում[53]:

Ալեքսանդր Շնեուր

1919 թ. հոկտեմբերի 14-ին (N 54) ՀՀ զինվորական նախարար, նորին գերազանցություն գեներալ Հովի. Հախվերդյանին ուղղված պաշտոնագրում գլխավոր շտաբի պետ, փոխգնդապետ Ալ. Շնեուրը կրկին անդրադառնում է օդային և ծովային նավատորմի ստեղծման գաղափարին, գտնելով, որ այն պահանջում է ժողովրդական միջոցների ներգրավում: Շնեուրը համոզված էր այդ նոր նախաձեռնության հաջողության մեջ, ավելացնելով, որ պահանջում է այդ գործում ներգրավվել անձանց, որոնց համար թանկ է հայ ժողովրդի անունը և պատիվը. ակնկալում է զինվորական նախարարի շահագրգիռ մասնակցությունը, գեներալ Թ. Նազարբեկյանի և անձամբ Հ. Հախվերդյանի միջնորդական առաքելությունը՝ կառավարության առջև ներգրավվելու համար համազգային գործում[54]:

Ալեքսանդր Շնեուրը Հայաստանի առաջին հանրապետության բանակի, նրա հատուկ ծառայությունների այն բացառիկ սպաներից էր, որն անուրանալի ներդրում ունի նրա կայացման համար մղված համառ և դժվարին պայքարում: Շնեուրը բազմակողմանի գործունեություն էր ծավալում, նրա կարիքը զգացվում էր բոլոր բնագավառներում: Ալ. Շնեուրը մշտապես շարժման մեջ էր, նրան կարելի էր տեսնել Հայաստանի բոլոր շրջաններում՝ որոշակի նպատակներով: Մասնակցում էր նաև ՀՀ զանազան զորամասերում իշխող իրավիճակի ստուգմանը, տարաբնույթ բացթողումների և չարաշահումների բացահայտմանը:

Անուրանալի է այս հայասեր մարդու վաստակը Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման և կայացման, նրա անվտանգության ապահովման գործում: ■

Ծանոթագրություններ և հղումներ

[1] Տես Բախչինյան Ա., Մաթէոսեան Վ., Ալեքսանդր Շնէուր՝ Սարդարապատի մասնակից ու վկայ, «Հայաստանի Հանրապետություն–100». միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018, էջ 94-105:

[2] Կարևոր է նշել, որ Պրագայում գտնվող ռուսական արտասահմանյան պատմական արխիվում է գտնվում գնդապետ «О событиях в Армении в 1918–19 гг.», հուշագրության ձեռագիրը, որի մասին Ա. Ֆ. Իզյումովը կարծիք է գրել: Տես Русский заграничный исторический архив в Праге – документация (Каталог собраний документов, хранящихся в пражской Славянской библиотеке и в Государственном архиве Российской Федерации, Составители: Лукаш Бабка, Анастасия Копршивова, Лидия Петрушев, Прага, Национальная библиотека Чешской Республики – Славянская библиотека, 2011, с. 146:

[3] Տես Հայաստանի Ազգային արխիվ [այնուհետև՝ ՀԱԱ], ֆ. 91, ց. 3, գ. 3594, թ. 2 -20, ֆ. 200, ց. 1, գ. 180, թ. 14, ֆ. 368, ց. 1, գ. 4, թ. 4 և այլն:

[4] Ալեքսանդր Կ. Շնէուր, *Սարդարապատի հերոսամարտը. մասնակցողի յուշեր*, թարգմ. Անդրէ Ամուրեան, Ֆրէզնօ, 1967, էջ 33:

[5] Մորել Նիկոլայ Միխայիլի [03.11.1869- 08.12,1920] – ռուսական բանակի՝ ծագումով ֆրանսիացի սպա, 1917-1918 թթ. եղել է Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում: 1917 թ. փետրվարի 13-ից կովկասյան 27-րդ հրաձգային հայկական գնդի հրամանատարն էր: Այնուհետև նա ծառայել է Ռուսաստանի հարավի զինված ուժերում՝ գեներալ Ա. Դենիկինի կամավորական բանակում [28.04. 1919 թ. -1920 թ.]: 1920 թ. նոյեմբերի վերջերին Նովո-Դմիտրյովկա գյուղի մոտ գերի է ընկել և այնուհետև հանիրավի գնդակահարվել կարմիր-բանակայինների կողմից: Հարկ է ավելացնել, որ Երզնկայում հենց գնդապետ Ն. Մորելը և Սեբաստացի Մուրադը կարողացել էին հաստատել մի յուրահատուկ «Հայկական իշխանություն»: Գնդապետ Ն. Մորելը Սեբաստացի Մուրադի, այսպես կոչված, «աջ բազուկն» էր: Տես Ганин А. В., նշվ. աշխ., էջ 285, 449: Չելեյյան Անդրանիկ, Ջորավար Անդրանիկ և հայ հեղափոխական շարժումը. Կենսագրական ակնարկ, Եր., «Արևիկ» հրատ., 1990, էջ 416:

[6] Տես Ալեքսանդր Կ. Շնէուր, *Սարդարապատի հերոսամարտը. մասնակցողի յուշեր*, թարգմ. Անդրէ Ամուրեան, Ֆրէզնօ, 1967, էջ 20:

[7] Նույն տեղում, էջ 26:

[8] Շնէուր, նշվ. աշխ., էջ 39-40:

[9] Նույն տեղում, էջ 42:

[10] Նույն տեղում, էջ 42:

[11] Նույն տեղում, էջ 43:

[12] Նույն տեղում, էջ 43:

[13] Ա. Շնեուրը 1909 թ. հուլիսի 20-ին ստացել է պորուչիկի կոչում, 1913 թ. հուլիսի 30-ին դարձել է շտաբս-կապիտան, 1917 թ. մարտի 30-ին նրան շնորհվել է կապիտանի կոչում, 1918 թ. ապրիլի 9-ի հրամանով դարձել է փոխգնդապետ, իսկ արդեն 1919 թ. հոկտեմբերի 10-ին՝ գնդապետ: Տես Шергалин Евг Эд., Александр Константинович Шнеур (1884-1977) – Военный, энтомолог и герпетолог: Астраханский Вестник Экологического Образования № 1 (35) 2016. с. 127-128:

[14] Դևոյանց Տիգրան Թադևոսի (20.08.1887, Երևան - 12. 09. 1965, ԱՄՆ, Նյու Յորք) - սովորել է Տոմսկի համալսարանի լեռնային ճարտարագիտական ֆակուլտետում, մանկավարժ: Հայտնի է Դևո, Տիգր և այլ ծածկանուններով: Տես Հովակիմյան Բ. Մ., Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 596. – Օգտագործ. աղբյուրները՝ «Հորիզոն» (Թիֆլիս), 1914, № 230, 233, «Армянский вестник» (Москва), 1916, № 33, стр. 24, «Кавказское слово» (Тифлис), 1914, № 28-30, 34-36, 1918, № 117: Հ.Գ.: Ծնունդյան տարեթիվը ճշտվել է՝ նախկինում մեր կողմից շրջանառված 1890-ի փոխարեն – Տես Վիրաբյան Վ. Հ., Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունը /Վ. Հ. Վիրաբյան, -Եր., ԵՊՀ հրատ., 2018, էջ 16: Հենց Դևոյանցի իսկ վկայությամբ՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից պրապորշիկ էր և ռուսական կովկասյան բանակի շտաբին առընթեր հետախուզության վարիչը, որն այդ օրերին իր հիմնական գործունեությանը զուգահեռ զբաղվել է նաև հայկական ջարդերի մասին արժանահիշատակ փաստերի և նյութերի հավաքչությամբ. Տես Тигр. Дево, Материалы по истории армянской жизни 1915-1916 гг. Протоколь. Допрось свидетеля, «Армянский Вестник». Еженедельний журнал, 1917 г., № 41-42:

[15] Տես Դէոյեանց Տիգրան, Հետախոյզի մը յուշերը (Պատասխան իմ քննադատներուն), «ՎԷՄ» (Փարիզ), 1938, Յունուար-Մայիս, թիւ 2, էջ 49:

[16] Տես Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 223:

[17] Ալեքսանդր Կոնստանդինի Շնեուր (20. 08.1884 թ.-16. 09.1977 թ.):

[18] Այդ մասին մանրամասն տես Шергалин Ев. Эд., Александр Константинович Шнеур (1884-1977) – Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», № 1 (35), 2016, с. 127-128:

[19] Տես Kayaloff Jacques, The Battle of Sardarabad, The Hague and Paris, 1973, p. 36: Նյու Յորքում ապրած Կայալովը թղթակցություն է ունեցել Ալ. Շնեուրի հետ:

[20] Տես Բախչինյան Արծուի (Հայաստան), Մատթէոսեան Վարդան (ԱՄՆ), Ալեքսանդր Շնէուր՝ Սարդարապատի մասնակից ու վկայ// «Հայաստանի Հանրապետություն – 100». միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 2018. էջ 96:

[21] Այդ մասին մանրամասն տես Шергалин Евг. Эд., Александр Константинович Шнеур (1884-1977)–Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического Образования», № 1 (35), 2016, с. 127-128: Ալեքսանդր Կ. Շնէուր, Սարդարապատի հերոսամարտը. մասնակցողի յուշեր, թարգմ. Անդրէ Ամուրեան, Ֆրէզնօ, 1967, էջ 33:

[22] Տես Շնէուր Ալեքսանդր Կ., նշվ. աշխ., էջ 20:

[23] Տես Սարդարապատի հերոսամարտը, գրեց գլխաւոր սպայակոյտի գնդապետ Ալեքսանդր Կ. Շնէուր. մասնակցողի յուշեր, էջ 7:

[24] Իվան [Հովհաննես] Դավիդի Վեքիլյան (Վեքիլով Իվան Դավիդի[6 դեկտեմբերի, 1894 թ. -16 հունիսի 1953 թ.], Տես Маршалы, генералы и адмиралы армянского происхождения, Биографический справочник, Изд. Второе, допол., составил Армен Меружанян, Санкт-Петербург, Изд-во «Роза ветров», 2013, с. 99:

[25] Նույն տեղում, գ. 40, թ. 55:
[26] Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 129, թ. 6 -7:
[27] Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 104, թ. 53, Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, էջ 223:
[28] Նույն տեղում, գ. 131, թ. 24:
[29] Տես Շնէուր Ալ., նշվ. աշխ., էջ 43:
[30] Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 9/9, պահ. 12, դ. 3:
[31] Նույն տեղում, գ. 131, թ. 27, 43, 46, 55-56, 61, 67:
[32] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 40, թ. 43-44, 46, 59, Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918 -1920), Եր., 1999, էջ 30-31:
[33] Տես նույն տեղում:
[34] Տես նույն տեղում:
[35] Արարատյան (Արարատյան Քրիստափոր Գերասիմի -18 հունիսի, 1876 թ. - 10 դեկտեմբերի, 1937 թ.: Արարատյան (Արարատով) Խաչատուր Գերասիմի [18.06.1876 թ.- 10.12.1937 թ.] – Գեներալ-մայոր: Ակտիվորեն մասնակցել է 1918 թ. մայիսյան Բաշ-Ապարանի և Սարդարապատի հերոսական ճակատամարտերին, այնուհետև հոկտեմբերին գլխավորել է Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև սահմանների հաստատման հանձնաժողովը, 1919 թ. մարտից մինչև 1920 թ. սկիզբը եղել է ՀՀ զինվորական նախարարը: Պաշտոնից հեռացվել է ՀՅԴ կուսակցության անդամ դառնալուց հրաժարվելու համար: 1920 թ. աշնանը մասնակցել է աղետաբեր թուրք-հայկական պատերազմին և դավաճանության հետևանքով գերի ընկել: Հետաքրքիր է նաև նշել, որ թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի կողմից Ք. Արարատյանին առաջարկ է արվել՝ թուրքական ռազմական ակադեմիայում դասավանդելու հրետանային պատրաստության դասընթաց, սակայն վճռաբար մերժվել է վերջինիս կողմից: Վերջինս թուրքական գերությունից ազատվել է Խորհրդային Հայաստանի հանրահայտ ղեկավար և ականավոր պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի համառ ջանքերի շնորհիվ, և նրա իսկ անմիջական առաջարկով գեներալ-մայոր Քրիստափոր Արարատյանը 1923 թ. զբաղեցրել հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալի պաշտոնը: Զորացրվելուց հետո գեներալ-մայոր Քրիստափոր (Խաչատուր) Արարատյանը եղել է Երևանի պետական համալսարանի և գյուղատնտեսական ինստիտուտի ռազմագիտության ամբիոնների վարիչ.– Տես Հայազն Տիգրան [Պետրոսյան Տիգրան], Գարեգին Ղազարյան, 1000 հայազգի գեներալներ, ծովակալներ: Կենսագրական հանրագիտարան, Եր., Հեղին. հրատ., 2009, էջ 120-121: Маршалы, генералы и адмиралы армянского происхождения, с. 46 - 47:
[36] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 23:
[37] Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 399:
[38] Տես Kayaloff J., The Battle of Sardarabad, p. 37.:
[39] Տես Կարապետեան Մ. Լ., «Հայաստանի Հանրապետութեան բանակի կազմաւորումը (1918-1920 թթ.)», «Հայկական բանակ», N 5-6, 1995, էջ 18:
[40] Русская военная эмиграция 20-х-40-х годов. Документы и материалы Том I. Так начиналось изгнанье 1920-1922 гг. Книга первая: Исход, Москва, Издательство «Гея», 1998 с. 112: Ганин А. В., Корпус офицеров Генерального штаба в годы Гражданской войны 1917-1922 гг.: Справочные материалы, Москва, Русский путь, 2009, с.213, 458:
[41] Տես Шнеур_Александр_Константинович: https://ria1914.info/index.php: 11.02.2020 թ.:
[42] Այդ մասին մանրամասն տես Шергалин Евг Эд., Александр Константинович Шнеур (1884-1977) –Военный, энтомолог и герпетолог: Астраханский Вестник Экологического Образования № 1 (35) 2016. с. 127-128:
[43] Տես Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/17, պահ. 12, դ. 3, թ. 4:
[44] Տես Шнеур_Александр_Константинович: https://ria1914.info/index.php: 11.02.2020 թ.:
[45] Տես Государственный архив Российской Федерации (ГАРФ), Раздел 6 – Персональная переписка РЗИА (респонденты), л. 390: http://statearchive.ru/assets /files / trzia/06.pdf./26.02.2021 թ.:
[46] Տես այդ մասին Шергалин Евг. Эд., Александр Константинович Шнеур (1884-1977– Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического образования» № 1 (35) 2016. снх. 127-134.
[47] Տես Шергалин Е. Эд., նշվ. աշխ., էջ 127:
[48] Мозговой С. А., Морская парусная экспедиция в Тунис по следам русской эскадры: В сб.: Судьба Русской эскадры: корабли и люди. Материалы Международной историко-просветительской конференции «Судьба Русской эскадры: корабли и люди» (Санкт-Петербург, 21–22 ноября 2019 г.). / Науч. ред. и сост. С. А. Мозговой, М. : Институт Наследия, 2020, с. 133-134:
[49] Տես Русские в Северной Америке. Е. А. Александров. Хэмден (США)-Сан-Франциско (США)-Санкт-Петербург (Россия), 2005, с. 576, Архив Общества русских ветеранов Великой войны в Сан-Франциско. Генерального штаба полковник Александр Константинович Шнеур, 1977, Сентябрь. Альбом VI. 30-В. Некролог // «Часовой» (Брюссель). 1977, Декабрь, № 609. с. 19:
[50] Տես Шнеур_Александр_Константинович: https://ria1914.info/index.php: 11.02.2020 թ.:
[51] Ալեքսանդր Կոնստանդինի Շնեուրը 1915 թ. երկամյա դասընթաց է անցել Կիևի օդանավորդության դպրոցում՝ ստանալով օդաչուի վկայական, իսկ 1916-1917-ին ուսանել է Ս. Պետերբուրգի Նիկոլայևյան սպայակույտի ակադեմիայում: Տես այդ մասին Шергалин Евг. Эд., Александр Константинович Шнеур (1884-1977) – Военный, энтомолог и герпетолог: «Астраханский Вестник Экологического образования», 2016, № 1 (35), с. 127-128: Տես Kayaloff Jacques, The Battle of Sardarabad, The Hague and Paris, 1973, p. 36:
[52] Տես ՀԱԱ, ֆ. 204, ց. 1, գ. 42, թ. 95:
[53] Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 29ա, թ. 218:
[54] Տես նույն տեղում, թ. 216:

Վերընթերցենք Համաստեղին
(Նորից «Այծետոմարի» մասին[1])

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

... Ինչ վատ է, որ կարող էինք ավելի լավ լինել
և չենք,
և ինչ լավ է, որ կարող էինք և չլինել և ենք:
Հր. Մաթևոսյան

Հայ ժողովուրդին ամենէն բարձր մշակոյթը
իր գոյութիւնն է:
Հակոբ Օշական

1930-ական թվականները Համաստեղի (Համբարձում Կելենյան, 1895-1966) կյանքում բեկումնային եղան. հոր՝ Հովհաննես Կելենյանի (1876-1934) մահը ցնցեց նրա ներաշխարհը: Նիկոլ Աղբալյանի (1875-1947) ցավակցական նամակին ի պատասխան՝ Համաստեղը գրում է. «Մեր ընտանիքի մէջ առաջին մահն էր, որ տեսայ... Մահուան անգթութիւնը շատ ուժեղ կերպով դուրս եկաւ»[2]: «Մահուան պարապութիւնը» ավելի զգալի դարձավ մոր (Գոհար Սահակյան, 1878-1941) և մտերիմ ընկերոջ՝ նկարիչ, դրամատուրգ Եղիա Գասպարյանի (1893-1948) մահից հետո:

«Հայրենիք» (Բոստոն) ամսագրի 1938 թ. 4-9-րդ համարներում լույս է տեսել Համաստեղի «Տոմար մաքիական կամ Սրբազան կատակերգություն» երգիծական պոեմը: «Այծետոմար և ուրիշ բանաստեղծություններ» գրքում (Բեյրութ, 1960 թ.) գրողն այս ստեղծագործությունը վերնագրել է «Այծետոմար»[3]: Գրիգոր Շահինյանին (1930-2009) ուղղված նամակներից մեկում Համաստեղը պատմում է, որ այդ հարցում էական նշանակություն է ունեցել Ն. Աղբալյանի ««Սրբազան կատակերգութիւն, Տոմար մաքիական» Համաստեղի» ծավալուն հոդվածը[4], որը լույս է տեսել «Ակօս» (Բեյրութ) հանդեսի 1957 թ. 9-րդ համարում (էջ 35-47): Տողատակում կարդում ենք. «Հանգուցեալ Ն. Աղբալեանի ներկայ յօդուածը գրուած 1941 մարտի 9-ին, մնացած է անտիպ իր թուղթերուն մէջ:

Գրուած է հեղինակին լեզուն և ոճը հմտօրէն բնորոշող եղանակով մը՝ խիտ, կուռ ու պատկերաւոր. իր մտածումները պերճ ու վերամբարձ, ազնուական գունաւորում մը կու տան ամբողջ գրութեան»:

Պոեմն առանձին գրքով հրատարակելուց առաջ Համաստեղը խմբագրական աննշան ուղղումներ է կատարել՝ աշխատելով պահել զգացողությունների թարմությունը, որով հմայված էին և՛ ընթերցողները, և՛ քննադատները: Նա դժգոհ էր «Այծետոմար և ուրիշ բանաստեղծութիւններ» գրքի տպագրության որակից և Երևան՝ ՀՀ Ազգային (այն օրերին՝ Ալ. Մյասնիկյանի անվան հանրային) գրադարան, ուղարկել է ձեռագիր ուղղումներով օրինակներ:

Գործողության վայրը Չոր (Չորս) գյուղն է՝ իր երեք հերոսներով՝ ջուլհակ, կատվի հետ ապրող իմաստուն, Նարեկ ու Տոմար կարդացող Մակար, նրա աշակերտ Տէր Մարուքէ և ջորեպան Քաջ Թաթոս: Վահե Հայկի (Տինճյան, 1896-1983) «Խարբերդ և անոր ոսկեղէն դաշտը» (Նիւ Եորք, 1957) գրքում տվյալներ կան այս գյուղի և նրա բնակիչների ողբերգական ճակատագրի մասին. 250 գյուղացիներից կենդանի են մնացել 18-ը, մյուսները տեղահանվել են, ջրախեղդ արվել, սպանվել:

Համաստեղի «Գիւղը» (1924, Բոստոն) և «Անձրև» (Փարիզ, 1929) ժողովածուների՝ «հողի, աշխատանքի, արդար քրտինքի, խաչի բարութիւնով լեցուն բնակիչները» (Գ, 311-312) պոեմում մասնակցում են ոգիների պայքարին՝ «յաղթանակը ձգելով աւերումին» (Գ, 312): Ձավեշտական թվացող, բայց ողբերգական ավարտով դեպքն օգնում է ընթերցողին, որ ուշադիր հետևի կատարվածին, փորձի հասկանալ, թե ինքը կյանքում քանի՞ անգամ է ընկել նման հիմարավուն դրության մեջ, երբ չի խորացել երևույթների էության մեջ, բավարարվել է սոսկ մակերեսայինով, նայել է ու չի տեսել:

Մակարը, Տէր Մարուքէն և ջորեպան Քաջ Թաթոսը ներկայացնում են մարդկությանը ծառայելու միջոցներից երեքը՝ բանականությունը, հավատը, ուժը: Պոեմում երգիծականը ծագում է սյուժեի երեք ուղղությունների համադրությունից. մարդը ո՛ր ճանապարհն էլ ընտրի, ինչպիսի՛ միջոցներ էլ հորինի կամ գտնի, չի կարող անցնել իմացության իրեն ի վերուստ տրված սահմանները:

Պոեմի երեք գլխավոր հերոսներն առաջին հայացքից հակադիր են, բայց իրականում՝ նույնական: Նրանք, Հովհաննես Թումանյանի բնորոշմամբ, «միշտ անմահ մարդկային ամբոխամտության»[5]

օրենքով ապրող զանգվածների հերոսներն են և ոչ թե՝ գաղափարի համար մարտնչող մարտիկներ: «Ժողովուրդն իմաստուն է, ամբոխը՝ հիմար: Ժողովուրդը ծանր է, ամբոխը՝ թեթև…»[6],- գրում է Հովի. Թումանյանը և տարբերակում արարող ժողովրդին քանդարար հեղեղ դարձող ամբոխից:

«Այծետոմարում» գրողն արծարծում է ամբոխ-ժողովուրդ, հերոս-առաջնորդ խնդիրը:

Առաջնորդ ծնում են ժողովուրդները, իսկ ամբոխը շարունակ օրվա հերոսներ է որոնում ու գտնում, գտնում ու լքում: Նիկոլ Աղբալյանի այս պոեմին նվիրված հոդվածում կարդում ենք. «Անձնական գործը երբեք չմոռցողների մի լայն խաւ. միշտ մանր կռուի պատրաստ տարրեր, մանաւանդ՝ պառաւները, յաջողութեան՝ ովսաննայ, ձախորդութեան՝ ծաղր և մանր հաշիւներ. կորեկ, հաւեր:

Այդպէս է գիւղը, իսկ հանրութիւնը՝ գիւղերը, յաջողութեան ժամանակ միասին, օգտագործողների դաս՝ ամէն դէպքում, փորձանքի ժամանակ՝ փոշիացում եւ խելահեղ խուճապ»: «Ողջամտութեան ցոլքեր, բայց անզօր վարակիչ հոսանքի դէմ. վարակման ենթակայ: Ողջամտութեան պակաս հանրային գործերի մէջ, զի՝ դիւրահաւան» (Դ, 276- 277):

Մակարի, քահանայի և Թաթոսի հետապնդած նպատակը, գործադրած միջոցներն առաջին հայացքից գեղեցիկ են ու արդար, բայց հերոսներն ի սկզբանե դատապարտված են անհաջողության. ամբոխը նրանց կուղեկցի մինչև առաջին վրիպումը կամ անհաջողությունը, որպեսզի հաջորդ պահին ակնածանքը փոխվի ծիծաղի, զավեշտի:

Պոեմը հրատարակվել է Համաստեղի ընդարձակ առաջաբանով, որից մի քանի հատված ենք ներկայացնում:

«Չոր գեղին մէջ ուժեղ էր մարդկայինը՝ բոլոր սրբազան նպատակներով (Թաթոսը): Կրօնականը՝ նոյնքան սրբազան (Տէր Մարուքէն) և, անկախ այդ երկուքէն, միշտ փնտռող իմաստութիւնը (Մակարը): Անոնք այնքան հաւատաւոր էին մարդկութեան ծառայելու, որքան անմահ Տոն Քիշոտը, որքան Քրիստոսը, որ իր խաչը շալկեց մինչև Գողգոթայ՝ աւազակներուն հետ խաչուելու: Ուրեմն՝ աւազակներու յանցանքով կը խաչուի նաև Քրիստոսը …

Ձաւեշտը կը սկսի հոն, ուր բնութիւնը իր երկաթէ իմացականութիւնը կը զգացնէ: Ձաւեշտին մէջ երազներն են, որ իրականութեան կը բախին ճիշդ այնպէս, ինչպէս մէկը կարասով լեցուն ոսկիներ կը գտնէ քարայրի մը մէջ և յանկարծ կ'արթննայ ու ինքզինք կը գտնէ իր աղքատիկ տնակին մէջ» (Գ, 304),- գրում է Համաստեղը: «Կեանքը պաշտպանելու համար երկու զէնք կայ. Նախ՝ սուրը, որ տուած է մեզի դիւցազներգութիւնը, և յետոյ՝ բարին, որուն ներքև կը պաշտպանեին տկարները, և որոնց հերոսներն են Պուտտա, Ձարադուստրա և Քրիստոս,- նշում է գրողը և մեկնաբանում:- Այդ տկարներու մէջ է, որ տառապանքը ստեղծած է խոհուն ու գեղեցիկ արժէքներ, նպատակներ, որոնք հոգեկան են: Այդ արժէքներուն մէջ է, որ կը բարախէ յաւիտենականութիւնը՝ ճիշդ մեր սրտին



պէս: Այդ յամառ բարախումը՝ յաւիտենականութեան ուժեղ ձգտումով, իր ռիթմը կու տայ այն բոլոր արժէքներուն, որոնք կեանքը կ'իմաստաւորեն, և այդ ռիթմը կայ բոլոր արուեստներուն մէջ: Կայ բնութեան, սեռերու կանչին մէջ: Այդ ռիթմը իր երաժտութիւնը կը գտնէ նաև տառապանքին մէջ:

Կեանքը, հզօր դիւցազնավէպի մը պէս, կը ստեղծէ նպատակ, հաւատք, ճշմարտութիւն, օրէնք, աւանդութիւն և երկինք: Կու տայ զոհեր՝ պաշտպանելու համար իր այդ գեղեցիկ ստեղծագործութիւնները, պահելու համար անհատի կամ համայնքի մը գոյութեան հրճուանքը:

Աստուծոյ մէջ բարին մարմին կ'առնէ, երբ կը սկսի սէրը, կարեկցութիւնը, երբ կայ ըլլալու, ապրելու զգլխանքը: Մենք կը հաւատանք այն ատեն, երբ կը սիրենք, և այդ սէրն է, որ անսահման Երկինք մը բացած է մեր մէջ» (Գ, 310-311):

«Կեանքի ճամբաներուն մէջ ինկած են մեր Չոր գեղի բնակիչները, հողի, աշխատանքի, արդար քրտինքի, խաչի բարութիւնով լեցուն բնակիչները: Այդ բնակիչներուն մէջ է, որ այդ ոգիները՝ բեմ կապած, սկսած են իրենց խաղարկութեան: Ոգիներու խաղն է «Այծետոմարը»:

Գիւղացիներուն մէջ կ'իյնայ տարերային խռովք, բարիի ու չարի ճըրմային ահաւոր պայքար՝ յաղթանակը ձգելով աւերումին:

Ես գրեցի այս երկար յառաջաբանը՝ «Այծետոմարին» առիթով միայն՝ առանց գործին մէջ մտնելու: Այդ մասը կը ձգեմ ընթերցողին և քննադատին:

Այս խաղին բեմը կարելի էր կապել հեռու կղզիի մը մէջ, ուր կիսամերկ բնակիչներ կ'ապրին, և ուր կայ մարդակերութիւնը: Կարելի էր կապել քաղաքակրթութեան բարձրագոյն աստիճանին հասած եւրո-



պական որևէ հողամասի վրայ: Մենք տեսանք բանդագուշանքներով կիրք ստեղծած երկիրներու բանակներուն ահաւոր պատերազմները՝ յաղթանակը ձգելով աւերումին՝ ճըրմային պայքարին տարերային թափով:

Կարելի էր կապել այս բեմը աշխարհի որևէ հողամասին վրայ և ոգիներու աշխարհին մէջ, և սակայն արուեստը իր անկեղծ խօսքով ինծի թելադրեց այս բեմը կապել իմ կալուածին մէջ» (Գ, 311-312):

Արարչագործության հիմքում բարու և չարի պայքարն է, իսկ մարդը կանգնած է կյանքի ու մահվան խաչմերուկում, ձգտում է հասկանալ իրեն շրջապատող աշխարհը, որի զարգացման օրենքները դուրս են մահկանացուի հոգևոր, ֆիզիկական ուժի, նպատակների և ձգտումների ծիրից, դրանցով չեն չափվում: Հայը հողի, արդար աշխատանքի նվիրյալ, հավատավոր (բայց ոչ մոլեռանդ հավատացյալ), անարդարությունը չհանդուրժող, խիզախ (երբեմն անմտության չափ խիզախ), խաղաղասեր, բայց աշխարհին հայտնի «Խաղաղություն ես ուզում, պատրաստ եղիր պատերազմի» սկզբունքով չապրող ժողովուրդ է:

Ուշադիր ընթերցողը գրողի օգնությամբ կատարում է եզրակացություն մարդու արարող ու ավարառու տեսակների հավերժական հակամարտության վերաբերյալ: Գաղտնիքն այն է, որ տեսակից տեսակ անցում չի կատարվում: Որպես օրենք, արարումը պարտվում է, իսկ լինել-չլինելու վտանգավոր սահմանագծին հայտնված ժողովուրդը փրկվում է ոչ միայն զենքի, այլև արարման ոգու ուժով, որը պաշտպանելու միջոցներից է զենքը: Աշխարհում իշխում է ուժի իրավունքը: Ուժին են ապավինում նաև հոգևորի ու արարման իրավունքի պաշտպանները՝ մեր նորօրյա ազատամարտի հերոսները: Ամենակարևորը՝ չխաբվենք այն պատրանքով, թե մարդակերպ ավարառու արարածը կարող է քաղաքակրթվել, հասկանալ արարման աստվածային օրենքները. էլ ուր մնաց, թե ապրի դրանցով:

Փաստորեն կռվի դաշտում մեզ հաղթողը մենք ենք՝ մեր պատրանքներով, կռվի դաշտ հարկադրված մտնելուց առաջ թշնամուն խղճալու մարդասիրական կոչերով, իսկ հաղթելուց հետո՝ տեր չկանգնելով թանկ գնով ձեռք բերած հաղթանակին:

Ապացույց՝ վերջին երեսուն տարիների մեր պատմությունը:

«Պատմության դասերից սովորելու շատ բան ունենք, եթե հստակ գիտակցենք՝ մեր ազգային գոյության դաշտը հոգևորն է, առանց որի մարդկությունը կվերածվեր մարդակերպ էակների բազմության,- ասում է Համաստեղը:- Միրենք մեր թշնամուն, ինչպես պատվիրում է Աստվածաշունչը, բայց... նրան հաղթելուց հետո, այլապես կվտանգվի ոչ միայն մեր, այլև մարդկության գոյությունը»:

«Համաստեղը Հովի. Թումանյանի պես իր հերոսներին կարող է «Մերոնք» անվանել, բայց չի արդարացնում երազով ապրելու ձգտումը, տեսնում ու երգիծում է «այն հետևողական անընմբռնողությունը», «որը չի սասանվում ոչ ակնառու փաստերի հանդեպ, ոչ էլ նույնիսկ կորուստներից ու զոհերից հետո»,- ինչպես գրում է գրականագետ Էդ. Ջրբաշյանը «Սուտլիկ որսկանները» հեքիաթի «համընդհանուր ինքնախաբեության» մթնոլորտի մասին[7]:

Գրողը պաշտպանում է մարդու, ժողովրդի երազելու իրավունքը, «ռամկական սրամտությամբ» (Դ, 275) նկարագրում է ողբերգական դեպքեր և հիշեցնում, որ պարտավոր ենք պատմության դասերից դաս քաղել:

Պատմությունը հաստատեց՝ դժբախտաբար, «ռամկական սրամտությանը» մեր օրերում գումարվեց ստախոսությունը՝ խաղաղություն հաստատելու անմիտ ու անիմաստ ջանքերով:

Հանուն ինչի՞ է հոետորական հարցն անպատասխան:

Խորհրդավոր այդ գիշերը կատուները կրծում էին այծի պոչը և հիշում մարդու երջանիկ անցյալի մասին. պարզվում է՝ մարդու գոյությունը պոչի հետ խաղ է, որը շարունակում է ... մարդու գլխում: Մարդը փորձում է վերագտնել կորցրածը, սակայն ամեն ինչ զուր է. ոչ բանականությունը, ոչ ուժը, ոչ հավատը չեն կարող լցնել նրա հոգու դատարկը. աշխարհում չկա ոչ միայն ժողովուրդների հաշտ ու խաղաղ համակեցություն, այլև վայելքի թունավոր մթնոլորտում այլակերպվում են իսկական արժեքները: Այծը մարդու ներսում հարատևող չարի մարմնավորումն է, ուստի նրան բռնելու ջանքերը զուր են, անիմաստ:

Երգիծական պոեմում կանայք լրացնում են տղամարդկանց անմիաբանության պատկերը, ավելին՝ երբեմն գերազանցում են նրանց՝ լրացուցիչ կոնֆլիկտի պատճառ դառնալով (հիշենք երեցկնոջը): Համաստեղը պոեմում ներկայացնում է կնոջ արարման ավանդական մեկնաբանությունից շատ

հեռու տարբերակ. կինը բարու ու չարի, լավի ու վատի խառնուրդ է, որի միջոցով Աստված զսպում է մարդու՝ երկինքը նվաճելու փորձերը: «Կին ըսածդ աշխարհինն է ու աշխարհին պէտք է ձգել» (Գ, 144),- բանաձևում է Թաթոսը, բայց դժվար թե ասպետն ազատվի արտատեր պառավի ձեռքից …

«Այծեռոմար» պոեմը, ինչպես մեր ազգային էպոսը, ընդգծում է, որ հայրենիքին ծառայելու միջոցներից ամենահզորը համամարդկային արժեքների պահպանումն է հանուն մարդու ու մարդկայինի:

Մարդու ավարառու տեսակը ժամանակավրեպ է:

Ձավթած հողը հայրենիք չէ՛ ու չի դառնա:

Պատմության դատաստանն ու հատուցումն անխուսափելի են:

Ես հավատում եմ:

***

Նիկոլ Աղբալյանի հոդվածն այս ստեղծագործության մասին առավել հետաքրքիր է մեր օրերի համար:

Ն. Աղբալյանը համառոտ ներկայացնում է Ձատկի ուրբաթ օրը գյուղի եկեղեցում տեղի ունեցածը, պատմում գյուղի երեք հերոսների մասին՝ չմոռանալով նաև բնակիչներին. պառավը հիշում է իր «արդար» ամուսնուն, որի մասին մեկ ուրիշը հիշում է, որ հանգուցյալը գողացել էր իր իշուկին: Ամենատպավորիչն այս հատվածն է. գյուղացիներից մեկը իր պարտքն է պահանջում, քանի որ աշխարհը պիտի կործանվեր: Իմաստուն Մակարը խորհուրդ է տալիս մինչև կեսգիշեր քնել, հետո արթնանալ ու գտնել իր պոչը փնտրելու ելած այծին. միակ անպոչ այծին գտնելը հեշտ է լինելու:

Մինչ Քաջ Թաթոսը զինվում էր, գյուղացիների մի մասը գնում է Տէր Մարուքէի … շան հաչոցի կողմը: Թաթոսը վստահ է՝ այս պատմական կռվից հետո աշխարհում խաղաղություն է հաստատվելու, և իրեն հետևողներին առաջնորդում է Սրապի շան հաչոցի ուղղությամբ: Տերտերին հետևողներն առավոտյան տեսնում են, որ ողջ գիշեր հաչել են կոճղի վրա, ծաղրում են նրան ու լքում, միանում են Քաջ Թաթոսի խմբին: Թաթոսի հերոսական արշավանքի ժամանակ ոտնատակ են տալիս պառավի արտը:
Այս ընթացքում Ոգին Մակարին ցույց է տալիս մարդկության անցած ճամփաները, մղած անմիտ պատերազմներն ու անիմաստ վեճերը, և հերոսը խորհում է աշխարհի անկատարության մասին:

Պարզվում է՝ աշխարհը կատարյալ դարձնելու համար հարկավոր է Չոր գյուղ հրավիրել հարևան գյուղի մոլլային, որ նա էլ մասնակցի համընդհանուր ուրախությանը. չէ՞ որ Քաջ Թաթոսը հրաժարվել է իր հաղթական սրից, զուռնա է նվագում՝ ավետելով, որ աշխարհից վերացրել են «ատելութիւն, կռիւ ու քէն»:

Թաթոսի հետ հարևան գյուղ գնացած գյուղացիներից վերադառնում է միայն Կակօ Սաքօն՝ կտրած ականջը ձեռքում պահած և փոխանցում Թաթոսի վերջին պատգամը…

«Դիւցազներգութիւն գլխիվայր, ուր դիւցազնացուները ծաղրի ենթարկուած են: Մի բանդագուշանք, ուր

իրական գծեր հիւսուած են անչափակից և մտացածին դիպուածների՝ յօրինելով մի թոռ ու բոռ, ուր դիպուածներ, մարդ և անասուն, ներկայ և անցեալ, իրական և առասպելական խառնակոյտ թաւալում են՝ «յապուշ կրթելով» ընթերցողին ու դիտողին:

«Պէտք է կարգ հաստատել քաոսի մէջ» (Դ, 275),- գրում է Նիկոլ Աղբալյանը:

Կատակերգության ընդհանուր մթնոլորտն անվանելով «անսանձ երևակայութիւն»՝ քննադատը մեկնաբանում է «մի քանի խնդիրներ», որոնցից առաջինը գլխավոր գործող անձանց այս բնորոշումն է. «Անձերը, ընդհանուր առմամբ, լաւ գծուած, բայց ոչ հաւաք և կարկառուն» Դ, 275): Բանգետ Մակարի «հիմնական գիծը լաւատեսութիւնն է. միտքը կը խլրտի՝ անհաղորդ գիտութեան. իր հարցումներն ու վճիռները՝ անմշակ ուղեղի արդիւնք, բայց խախտուած հաւատք. չարի մարմնացումը, ազատ միտք կրօնից, բայց այլապէս նախապաշար: Լոկ զուռնի ձայնն է իրական» (Դ, 276): Տէր Մարուքէն «համակերպում է ժողովուրդի պահանջին, որոշ մտայնութիւն ունի. խաչի ճամբան տանում է խաղաղութեան՝ առանց պայքարի, բայց ամուր չէ իր կարծիքների մէջ. ինքն ևս մի գիւղացի. էշի բնազդին է հետևում, հաւատում է աստուածային միջամտութեան և աղօտ լապտերն ունի առաջնորդ» (Դ, 276):

Թաթոսը «գիւղի պայքարի առաջնորդն է տափի կուռում. նաև մաքին հետապնդելիս կարծում է, որ սուրն անհրաժեշտ է և խաչի յեսեակն է» (Դ, 276): «Վառ երևակայութիւն» ունեցող այս հերոսը պատրաստ է հաղթել դևին աշխարհում «նոր կարգ» ստեղծելու համար:

Ն. Աղբալյանը գրում է. «Գործի կշիռը կը մեծնայ, եթէ նկատենք, որ Հայոց ազգն է այստեղ. ժողովուրդը, յեղափոխականը, հոգևորականը, բանգէտը:

Սովորական մի դիպուած ստանում է յիմարական մեկնութիւն և ցնորական չափեր և ստեղծում է աղէտ: Չոր գեղն աւեր է, ինչպես Հայաստանը. Թաթոսը (իմա՝ յեղափոխութիւնը), վիշապ զարկել կարծելով և եղբայրութիւն հաստատելով, Չոր գեղն աւերեց: Կարծելով խաչը կլլած, որ սակայն իր տեղն էր, ահագին թոռ ու բոռ սարքեցին և դատարկ մնացին: Խելքի՞ եկան. ո՛չ, դեռ շարունակում են նոյնը» (Դ, 277):

«Մեծագոյն դերակատարը ժողովուրդն է. յեղյեղուկ՝ վերջին խօսքին կառչող» (Դ, 276)։ «Զուր յոգնութիւն, զի զուռնի ձայնն է իրական. և, իրօք, թոռ ու բոռի մէջ կաղն էր, որ վայելեց երէցկնոջ գգուանքը, և այդ մնաց իրական» (Դ, 278),- սա Նիկոլ Աղբալյան մարդու ցավոտ եզրակացությունն է։

Նիկոլ Աղբալյանն արձանագրում է. «Հիասթափութեան մի ծնունդ է այս գործը՝ այնքան զօրաւոր, որ դուրս նետած է ժողովուրդի ըմբռնումից, զի պահանջների դասակարգումը այլ է՝ հաց, կին, արքայութիւնը չքացած է, և մնացած՝ հացն ու կինը. բայց իրօ՞ք երկինք չկայ, այսինքն՝ վերին ձգտում։

Կա՛յ, բայց ցնորք ու յիմարական, և արդիւնքն՝ աւեր։ Ժամանակը նպաստաւոր, հայկական յուսախաբութիւն. թոռ ու բոռ, զոհ, ճիգ և աւեր Զոր գեղ։ Ցաւի պրկումը կատակերգութեան է վերածած։ Բայց հայ մարդ է Համաստեղը, ինքն ևս ապրած և տառապած, ուստի սրբազան է կատակերգութիւնը, բայց մաքիական է տոմարը։ Յարգանք ցնորքին՝ տառապած սրտից։

Յուսախաբութիւնը մղած է յուսահատութեան, հիասթափութիւնը՝ արժէքազրկում ամէն վերին ձգտումի, կեանքի խաղ է միայն, հոլովոյթի մի դրուագ, տիեզերքի մի դիպուած։ Ոչինչ կայ մեծագոյն և մեծարժէք, լոկ զուռնի ձայնն է իրական» (Դ, 278)։

Համոզված եմ՝ Ն. Աղբալյանի հոդվածի վերջին հարցումը շատ խնդիրներ կարծարծի հատկապես այսօր. «Հաւատքից պարպուա՞ծն է, որ ծերանում է։ Ծե՞ր ենք ազգովին, թէ՞ հաւատքից պարպուած։ Նիւթ մտածութեան։

Մի երկ, որ այսքան խորհրդածութեան նիւթ է տալիս, չի կարող անարժէք համարուել, թէկուզ և ունենայ անժխտելի թերիներ՝ իբր յօրինուածք և կատարում։ Ոչ թէ իր միտքը, այլ բնազդն է զօրաւոր, եթէ նիւթին իշխել կարենար, և յղացքը հասուննար, կարող էր դառնալ մի գլուխգործոց։ Այսօր նա մի ուշագրաւ երկ է միայն» (Դ, 279)։

Հավելեմ՝ շատ եմ ուզում, որ այս «ուշագրաւ երկն» օգնի մեզ հասկանալ՝ ստի ու կեղծիքի, խաբեության ու ինքնախաբեության պայմաններում ոչ մի լավ բան չի կարող գոյություն ունենալ։ Համաստեղի և Նիկոլ Աղբալյանի իմաստուն խոսքը թող հասնի մեր սրտին, մտքին, հոգուն և փրկի կրկին ամբոխ դառնալու փորձությունից, իսկ օրվա հերոսները, դժբախտաբար, անպակաս են մեր կյանքից։

***

Համաստեղի «Այծետոմարը» ստիպում է վերադառնալ «Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում» հարցին։

Հարցի «Ո՞վ ենք մենք» բաղադրիչի պատասխանը պոեմում ձևակերպված է այսպես՝ ամբոխի ստրկամտությանը ենթակա, կասկածել ու մտածել չհամարձակվող, տեսածի ու կատարվածի պատճառները քննելուց վախեցող, փաստը չտեսնող ու երևակայությամբ փաստի պակասը լրացնող հանրություն։ Իրական աշխարհում եղբայրը «գէլի նման եղբօր վրայ» (Գ, 183) է հարձակվում, բայց Զոր գյուղի բնակիչները երազում են խաղաղության ու կատարյալ աշխարհի մասին, որտեղ «Իրար գտնեն գառնուկն ու գայլ ու իրար հետ ճարակեն» (Գ,)։

Պարզվում է՝ սերնդեսերունդ «զուր ենք ըրեր տափին համար» (Գ, 196) կոիվը…

Քրիստոնյան փնտրում է Աստծո կամքն իրականացնելու ուղիներ և կյանքը դիտարկում է որպես աստվածային կատարելությանը հասնելու բացառիկ հնարավորություն։ Մենք, որպես հանրություն, կորցրել ենք Աստծո հետ կապի ներդաշնակությունը և ակնկալում ենք փրկություն։ Ումի՞ց … ավարառու թուրքի՞ց, թե՞ օրեցօր սատանիզմի դժոխքի վերածվող իբր թե քաղաքակիրթ աշխարհից։ Ամենասարսափելին այն է, որ ամեն օր թիզ առ թիզ կորցնում ենք Հող, Հայրենիք …

Համաստեղը մարգարե չէ, բայց հմուտ հոգեբան է ու 60-65 տարի առաջ պատկերել է մեր կյանքը՝ օրվա հերոսների (ոչ առաջնորդների) «հերոսական վարքագծով» և օրեցօր ավելի մեծ դժվարությամբ հաց վաստակող ամբոխով … Մասնատված ու օրավուր էլ ավելի տրոհվող հայությունը, ամեն ինչից դժգոհելու ու ամեն ինչ քննադատելու մոլուցքով տարված՝ վաղուց կորցրել է առողջ քննադատության ունակությունը, քանի որ չի հասկանում ինքնաքննության կարևորությունը։

Նշանավոր գրող Դեյլ Քարնեգին (1888-1955) քննադատությունը նմանեցնում էր միշտ տուն վերադարձող աղավնիների …

Խորհելու շատ բան կա։

Վերընթերցենք Համաստեղին … ■

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Համաստեղի «Այծետոմար» պոեմը՝ որպէս էպոսի նորօրեայ տարբերակ» հոդվածը հրատարակել եմ «Հորիզոնի» (Կանադա) գրական հավելվածի 2006 թ. օգոստոսի համարում։
2. «Համաստեղ. Նամականի», Երևան, 2003, էջ 46։ Այս գրքի 43-53-րդ էջերում հրատարակել եմ Համաստեղի տասնմեկ նամակները՝ Նիկոլ Աղբալյանին։
3. «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Գ հատորում (Երևան, 2005)՝ էջ 93-210, հրատարակել եմ այս երգիծական պոեմը, նույն հատորի 301-312-րդ էջերում՝ Համաստեղի գրած առաջաբանը։
   «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Դ հատորում (Երևան, 2007)՝ էջ 84-117, հրատարակել եմ «Այծետոմարի» դրամատիկական տարբերակը, նույն հատորի 269-279-րդ էջերում՝ Ն. Աղբալյանի հոդվածն այս պոեմի մասին։
   Հոդվածի շարադրանքում մեջբերումները նշում եմ երկու թվով. առաջինը հատորն է, երկրորդը՝ էջը։
4. Համաստեղի երեսուներկու նամակները՝ Գրիգոր Շահինյանին տես «Համաստեղ. Նամականի» գրքում, էջ 265- 288։
5. Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 7, Երևան, 1995, էջ 455։
6. Նույն տեղում։
7. «Թումանյան. ուսումնասիրություններ և հրապարակումներ», հ. 5, Ե., 1998, էջ 35-36։

Ազգութեան բաղադրիչները

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Արդկային հաւաքականութիւն մը ինչ ստորոգելիներ ունենալու է, որ կարենայ ազգ համարուիլ:

Այս մասին գրուած է, գրուած է շատերու կողմէ, որոնցմէ կրնանք վերյիշել գէթ Յովհաննէս Քաջազնունին, Լեւոն Շանթը, Գարեգին Խաժակը եւ դեռ ուրիշներ, որոնց հատորները քովի գրադարանէս սուր աչքերով ինծի կը նային, երբ սոյն յօդուածը գրել կը սկսիմ: Բայց նպատակ չունիմ զիրենք անհանգստացնելու: Այս անգամ քեպէգցի մտածողի մը գրքին է, որ կ'ուզեմ անդրադառնալ, աւելի ճիշտ՝ այդ գրքին 2023-ին Պորէալ (Boréal) հրատարակչականէն լոյս ընծայուած ու 396 էջերէ բաղկացած հաստափոր «Յաղաքս ազգային պատմութեան» («Pour l'histoire nationale») հատորի գրախօսականին, զոր Լուի Գորնըլիէի (Louis Cornelier) ստորագրած է Լը Տվուար (Le Devoir) օրաթերթի 20-21 մայիս 2023-ի իր շաբաթական սիւնակին մէջ՝ վերնագրելով զայն «Պուշար յաղաքս ազգին» («Bouchard pour la nation»):



- Ժեռար Պուշար (Gérard Bouchard)՝ գրեթէ ութսունամեայ շատ յարգուած պատմաբանը, այնտեղ կ'արտայայտէ իր «հիմնական համոզումները»,- կ'ըսէ գրախօսողը: Ու թէեւ հատորը գրուած է՝ նկատի առնելով Քեպէգի պատմութիւնն ու իրավիճակը, սակայն հոն տեղ գտած մտքերը կ'անդրանցեն Գանատայի ինքնուրոյն այս նահանգի սահմանները ու կը վերաբերին բոլորին, նաեւ մեզի:

Գրքի մուտքին, կը նշէ յօդուածագիրը, Պուշար կ'ընէ քաղաքակրթական հաստատում մը. «Մեր դարը կորսնցուցած է պատմութեան զգացողութիւնը»՝ այդպիսով զրկելով մեզ ոչ միայն անցեալի, այլեւ ապագայի ալ յստակ պատկերացումէ մը: Կրնանք խօսիլ «խորհրդանշական պարապութեան մը» մասին, նոյնիսկ «հոգեկան կորուստի» մը:

Մեծամասնութեան համար (անչակերտ այս մէջբերումները Գորնըլիէի գրչին կը պատկանին, սակայն պատմաբանին միտքերն են) կրօնը չէ կեանքին իմաստ մը մատակարարողը, իսկ քաղաքական հաստատութիւնը կը տառապի հաւաստիութեան պակասէ: Ազգային շրջանակը, որքան ալ ինք եւս ցնցուած ըլլայ, կը վերապրի որպէս իրաւունքի, ժողովրդավարութեան ու պատկանելիութեան տարածք, սակայն կը կաղայ մշակութային փոխանցումը, որ պէտք է «հաւաքական ամեն կեանքի բարօր ընթացքին անհրաժեշտ արժէքներու» աւանդումին համար:

Այս իրավիճակը փոխելու կոչուած հաստատութիւններէն դպրոցը գրեթէ միակն է, որ այդ առաքելութիւնը կրնայ կատարել, իսկ ազգային պատմութիւնը՝

գերազանց դասանիութը: Հարցը, կը ճշգրտէ Պուշար, այն չէ, որ վերադառնանք այն ժամանակաշրջանին, երբ ազգին մեծութիւնը կ'երգուէր առանց քննադատական ոգիի, այլ վերագտնենք «յուզելու եւ կրթելու կարողութիւնը շնորհիւ վերլուծման ու պատմումին, տրամաբանութեան եւ զգացականութեան կրկնակ ուժին»՝ «անցեալի խօսոյթին համարկելով բազմակարծական ու քննադատական պատկերացում մը», յարգելով (քեպէգեան) ընկերութեան խորհրդանշական հիմքերը» (փակագիծի մէջ կը դնեմ տեղային ստորոգումը, որովհետեւ զայն կարելի է փոխարինել հայկական, թէ որեւէ այլ ազգութեան ստորոգումով. Վ-Ա.):

Հակադրուելով բոլոր անոնց, որոնք թունաւոր ազգայնականութիւն մը կը տեսնեն ազգային պատմութեան մէջ՝ Պուշար կը բացատրէ, թէ իր ազատական տարբերակին մէջ «ազգը կը հիմնուի ազատութեան, ժողովրդավարութեան, մարդկային իրաւանց, բազմակարծութեան, անվայրագութեան, հասարակական հաւասարութեան որոնման եւ եկեղեցիներու չարաշահող բացարձակ հեղինակութեան մերժումին վրայ»:

Այլեւ իւրաքանչիւր բնակչութիւն ընկերութեան մը վերածուելու համար պէտք է իրացնէ «մշակութային հէնք մը, որ պայման է պատկանելիութեան, համերաշխութեան ու փոխադարձ վստահութեան, որոնք կարելի կը դարձնեն պետութեան կառավարումը, իսկական քաղաքացիութեան հաստատումը եւ ժողովրդավարութեան գործադրումը»: Իրենց հասարակութեան մէջ յանձնառու քաղաքացիներ դառնալու համար աշակերտները պէտք է յուզական կապ մը զգան այդ վերջինին հետ: Այդ առաքելութեան մէջ ազգային պատմութիւնն է գերազանց դասանիութը, ինչպէս ըսուեցաւ:

Համոզուած, որ «յուզական կողմը ընկերային կեանքի եւ հաւաքական յիշողութեան սիրտն իսկ կը հանդիսանայ»՝ Պուշար չի վարանիր արժեւորելու անցեալի հերոսները եւ ջատագովելու անցեալի պատմումը՝ չոր ու փաստական վերլուծումներու փոխարէն իր մարդկայնականութիւնը վերադարձնելու համար գիտութեան մը, որ ազգային պատմութիւնն է:

Այստեղ վերջ կը գտնեն վերոնշեալ գիրքէն ու գրախօսականէն կատարուած մէջբերումները: Ուշիմ ընթերցողը կ'անդրադառնայ, անշուշտ, թէ այստեղ արտայայտուած մտքերը, որոշ վերապահութիւններով, կը համընկնին մեր ալ պայմաններուն, մանաւանդ ներկայ վիճատեցուցիչ ժամանակաշրջանին մէջ, երբ ամեն ժամանակէ աւելի կարիքը ունինք մեր ինքնավստահութեան վերահաստատման:

Այո՛, ի հակադրութիւն Պուշարի նկատի առած հասարակութեան՝ մեր եկեղեցին տակաւին կարեւոր դերակատարութիւն ունի ու պիտի ունենայ մեր կեանքին մէջ, մեր քաղաքական կազմակերպութիւնները՝ նոյնպէս, որքան ալ մութ ուժեր աշխատին վարկազրկել զանոնք՝ ա՛լ աւելի սաստկացնելով մեր վիճատութիւնը, որքան ալ մեր անցեալի դէմքերուն ու դէպքերուն դէմ, մեր ազգային խորհրդանշաններուն ու տեսլականներուն դէմ անողոք պայքար մղուի, այսպէս կոչուած, ինքզինք «ազատական» համարող ոլորտներու կողմէ:

Այո՛, սակայն, ամենէն առաջ մշակութային հէնքն է, խարիսխն է, այդ խարիսխին ճանաչումն է, որ պիտի փոխանցուի նոր սերունդին՝ ստեղծելու համար ազգին պատկանելու զգացումը: Եւ այդ՝ առաջին հերթին հայոց պատմութեա՛ն իսկ ճամբով:

Մշակութայինը պիտի հասկնանք իր լայն, համապարփակ իմաստով՝ ներառելով ոչ միայն արուեստները, երգն ու պարը, գրականութիւնը, լեզուն, ճարտարապետութիւնն ու կերպարուեստը, այլեւ մեր պատմութիւնը, մեր երկի՛րը՝ պատմական բնակավայրը, անկէ մեր հեռացուած ըլլալը, վերադարձի տեսլականն ու մեր Դատը: Կարեւոր չէ, թէ ի՞նչ կը կոչուին դասանիութերը, կարեւոր չէ նաեւ, թէ այդ փոխանցումը դասապահերո՞ւն, դադար-զբօսանքներուն, թէ՞ դպրոցէն դուրս հայ կեդրոններուն ու եկեղեցիներուն մէջ կ'իրականանայ: Ու մանաւանդ տուներուն:

Կարեւորը զայն փոխանցելն է, եւ Պուշարի նոր գիրքը անգամ մը եւս այդ կը յիշեցնէ մեզի: ■

ՀՅԴ Հայաստանի Գերագույն ժողովի հայտարարությունը

Սիրելի հայրենակիցներ,

Հայ ժողովուրդը և Հայոց պետականությունը կանգնած են գոյութենական ծանրագույն սպառնալիքի առջև: Հայաստանի իշխանությունների որդեգրած ապազգային քաղաքականությունը՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի ուրացումը, ՀՀ Անկախության հռչակագրից բխող հանձնառություններից և Արցախի Հանրապետության անվտանգության երաշխավորի սահմանադրական պարտականություններից հրաժարվելը, թուրք-ադրբեջանական պարտադրվող զիջումներն ընդունելու և հայ ժողովրդի ազգային պետական շահերը ստորադասելու քաղաքականությունը կործանարար է:

Ադրբեջանի շարունակվող ագրեսիան հանգեցնելու է նոր ցեղասպանության և Արցախի հայաթափման, հարցականի տակ է դնելու Հայաստանի պետականության ապագան: Հայ ժողովրդի թիկունքում հակասահմանադրական ընթացքով ձեռք բերված ցանկացած պայմանավորվածություն կամ փաստաթուղթ չունի իրավական և քաղաքական լեգիտիմություն, այն հղի է նոր պատերազմի սպառնալիքով և անխուսափելիորեն ապակայունացնելու և նոր ցնցումների է տանելու ողջ տարածաշրջանը: Հակասահմանադրական և հակապետական այս ընթացքի անհապաղ կասեցումը օրախնդիր է և համազգային առաքելություն:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Ժողովը ճակատագրական այս հանգրվանում ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՁՈՐԱՇԱՐԺԻ կոչ է հնչեցնում:

Սթափվելու, ընդվզելու, մեր ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՄՆՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՎ ՏԵՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՀՆ Է:

ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՍԱԿԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Մենք համոզված ենք՝

իշխանությունների կողմից պարտադրված պարտվողականությանն ու անզորությանն այլընտրանք կա,

հաստատում ենք՝

ներազգային համերաշխության վերահաստատումով և համահայկական ներուժով կարող ենք և պարտավոր ենք՝

- Վերականգնել Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը,
- Վերականգնել երկրի անվտանգային համակարգը, ազգ-բանակ համազգային գիտակցումով բարձրացնել երկրի պաշտպանունակությունն ու Հայոց բանակի մարտունակությունը,
- Արդյունավետ օգտագործելով միջազգային իրավունքն ու միջազգային հարթակները, համադրելով տարածաշրջանում հետապնդվող աշխարհաքաղաքական հետաքրքրությունները, Հայաստանի ռազմավարական դաշնակիցների զորակցությունն ու դիվանագիտական ռեսուրսները՝ պաշտպանել և առաջ տանել Հայաստանի և հայ ժողովրդի ռազմավարական շահերը,
- Միջազգային իրավունքի համատեքստում մերկացնել և դատապարտել Ադրբեջանի հանցագործություններն՝ ուղղված մարդկության և կոնկրետ հայ ժողովրդի դեմ,
- Կասեցնել մեր ազգային ինքնությունը քայքայող օտարածին ծրագրերը, երկրում հաստատել իրական ժողովրդավարություն, հանրային համերաշխություն և արդարություն,
- Համահայկական ուժերի մեկտեղումով զորացնել Հայաստանի կարողականությունները, ստեղծել ուժեղ և մրցունակ պետություն, որն անզիջում դիմադրությամբ կկանխի թուրք-ադրբեջանական տանդեմի հետապնդած Արցախի բռնակցման, հայաթափման և Հայաստանին կենսական զիջումներ պարտադրող պանթուրքական ծրագրերը:

Անհրաժեշտ է՝ վերը նշված մարտահրավերները դիմագրավելու և ստեղծված իրավիճակում հանգուցային բեկում մտցնելու նախապայմանը ազգային իշխանության ձևավորումն է և նոր որակի պետության կառուցումը:

ՀՅԴ Հայաստանի կազմակերպությունն ու ՀՅ Դաշնակցության աշխարհասփյուռ կառույցն իրենց ողջ ներուժով լծվելու են Հայաստանի և Արցախի պաշտպանությանն ու փրկությանն ուղղված համազգային ընդվզման և դիմադրության ճակատի ձևավորմանը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն ժողով
12-ը հուլիսի 2023 թ.

ԴՐՕՇԱԿ